ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ ԱՐԱՋԲԵԿԻ

ՆՈՐՈՎԻ ՄՈՏԵՑՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՐՈՅԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻՆ

ԺԳ.00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ
Մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Գիտական ղեկավար՝
մանկ.գիտ. թեկնածու, դոցենտ
Թ.Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ-2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. ԱՆՁԻ ԲԱՐՈՅԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳԻՏԱՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....12

1.1. Բարոյամշակութային արժեհամակարգի պահպանումը պետական քաղաքականության գերակա խնդիր.....12

1.2. «Արժեք» հասկացության փիլիսոփայական և աքսեոլոգիական հիմքերը.....20

1.3. «Արժեք» հասկացության հոգեբանամանկավարժական հիմքերը.....30

1.4. Գլոբալացման պայմաններում ազգային և համամարդկային արժեքների հարաբերակցությունը սոցիալական տարբեր ինստիտուտներում.....41

ԳԼՈՒԽ 2. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՐՈՅԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ.....48

2.1. 21-րդ դարի սոցիալ-տնտեսական, կրթամշակութային մարտահրավերները.....48

2.2. Բարձրագույն դպրոցի բարեփոխումներն ուսանողների արժեհամակարգի նորովի մոտեցման նախապայման.....55

2.3. Ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման գործընթացի առանձնահատկությունները.....64

2.4. Ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման ուղիներն ու միջոցները.....78

2.5. Ուսումնառության ընթացքում վերաիմաստավորվող արժեհամակարգում ուսանողի ինովացիոն տիպը.....109

ԳԼՈՒԽ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՂ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ...121

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....160

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....162

ՀԱՎԵԼՎԱԾ.....170

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող զարգացումներն իրենց անմիջական ազդեցությունն են ունենում անձի կայացման, համակողմանի և ներդաշնակ զարգացման վրա: Հասարակական, քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային տեղաշարժերը, որոնք պայմանավորված են աշխարհաքաղաքական, ժողովրդագրական և այլ գործոններով, հրամայաբար պահանջում են այնպիսի անձի ձևավորում, որն ի վիճակի կլինի արագորեն հարմարվելու այդ խոր տեղաշարժերին: Պետության հզորացման գործում կողմնորոշվելու, համաշխարհային արդի զարգացումներում դիմակայելու գերխնդիր է դառնում մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող, համակողմանի զարգացած, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված, ազգային ու համամարդկային արժեքներն ու բարոյական նորմերը կարևորող, գեղեցիկը, բարին ու ճշմարիտը գնահատող անձի ձևավորումը: Համակեցության, հանդուրժողականության, համագործակցության որակներով օժտված, մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները հարգող, մարդասեր, քաղաքակիրթ, բարոյամշակութային արժեք ունեցող անձն ի զորու է դիմակայելու ապագայի մարտահրավերներին:

Այսօր, նոր սոցիալ-տնտեսական կրթամշակութային մարտահրավերներին համահունչ, մարդկության կարևոր հիմնախնդիրներից են մարդու բարոյական դաստիարակությունը, բարոյամշակութային արժեքների ձևավորումը:

Բարոյամշակութային արժեքները բարոյական մշակույթի առավել հարուստ և բովանդակային բաղադրատարրերն են: Բարոյամշակութային արժեքները դիտարկելիս՝ կարևոր նշանակություն ունի ծագման, ձևավորման, պատմական որոշակի ժամանակահատվածներում զարգացման առանձնահատկությունների խոր վերլուծությունը:

Ժամանակակից ուսանող երիտասարդության բարոյամշակութային արժեքների ձևավորման հիմնախնդրի դիտարկումը կարող է բացահայտել արդի հասարակության հոգևոր-բարոյական արժեքների էությունը, այդ արժեքների

ձևավորման ակունքները, նաև այդ գործընթացում առկա հակասությունները:

Հասարակության զարգացման արդի պայմաններում առավել բազմակողմանի են դարձել սոցիալական կապերն ու հարաբերությունները, հասարակության տարբեր շերտերում սրվել են շատ հակասություններ: Փոխվել են մշակույթի և բարոյականության ավանդական ըմբռնումները, առկա է արժեքային կողմնորոշումների սոցիալ-խմբային բևեռացում, որն առավել սուր է արտահայտվում հատկապես ուսանող երիտասարդության շրջանում:

Ժամանակակից ուսանողության կենսագործունեությունն իրականանում է բարձրագույն դպրոցի կրթական համակարգի բարեփոխման պայմաններում: Այդ գործընթացի բովանդակային ուղղվածությունը, արդյունավետությունն ու արագությունը մեծ մասամբ պայմանավորված են ուսանողության գործուն մասնակցությամբ, նրա ակտիվ և գիտակից դիրքորոշմամբ:

Խորհրդային տարիների ընթացքում ձևավորված բարոյամշակութային համակարգը էականորեն տարբերվում է ներկայիս արժեհամակարգից, որը պահանջում է նորովի մոտեցում ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման հիմնախնդրին:

Եթե խորհրդային տարիներին հռչակվում էին վարքի համընդհանուր ընդունված, օրինակելի նորմեր և բարոյական ըմբռնումներ՝ «կոմունիզմ կառուցողի բարոյական կոդեքսում», ապա արդի սոցիալ-տնտեսական պայմաններում ուսանողի անձը ներգործվում է անհատական, ազգային, համամարդկային, մասնագիտական, քառաբաղադրային, դիալեկտիկական ներգործությամբ: Այդ բազմաընդգրկուն արժեհամակարգի ներգործության շրջանակներում անհրաժեշ-տություն է առաջանում նորովի ձևավորել ժամանակակից ուսանողի ինովացիոն տիպը:

Ակնհայտ է, որ մի կողմից ուսանողը, ձևավորվելով տարբեր սոցիալական ինստիտուտներում, ստիպված է հարմարվել նոր սոցիալական միջավայրին՝ բուհին, իսկ մյուս կողմից ուսանողի անձին առաջադրվում են որոշակի նոր պահանջներ և չափանիշներ:

Ուսանողի անձը բնութագրվում է նպատակաուղղվածությամբ, բարձր

ակտիվությամբ, ինքնագիտակցությամբ, կյանքի իմաստի և սեփական կոչման ըմբռնմամբ: Սա անհատականության ձևավորման, սոցիալական նոր տեղաշարժերին հարմարվելու իմացական-ճանաչողական գործունեության, ապագայի նպատակների հստակ սահմանման, արժեքային համակարգի ձևավորման շրջան է, որը կարևոր նշանակություն ունի ուսանողի անձի բարոյական համոզմունքների, կողմնորոշումների, ըմբռնումների կայունացման, ինքնագիտակցության ձևավորման գործում: Նպատակաուղղվածության, կողմնորոշումների և հոգևոր-բարոյական արժեքների բացակայության պայմաններում ուսանողությունը դադարում է հասարակության ակտիվ, գիտակից, նպատակասլաց, առաջադիմական կազմավորում լինելուց. ուստի կարող է դրսևորվել որպես անորոշ ու աննպատակ որոշակի խմբավորում՝ միավորված սոսկ բարձրագույն կրթություն ստանալու ձևական նպատակի շուրջ:

Բարոյամշակութային արժեքների ձևավորման, նրա հիմնական հասկացությունների համակարգային վերլուծության հիմքը դրվել է Լ.Մ. Արխանգելսկիի, Օ.Գ. Դրոբնիցկու, Լ.Ն. Կոգանի հետազոտություններում[1,2,3]: Նրանց աշխատություններում բարոյամշակութային արժեքները դիտարկվում են բարոյամշակութային գիտակցության հետազոտության տեսանկյունից:

Անցյալ դարի վերջին տասնամյակում բարոյամշակութային արժեքների ուսումնասիրության մեջ զգալի տեղ է գրավում հոգևոր հիմնախնդրի հետազոտությունը: Ս.Ֆ. Անիսիմովի, Ա.Ի. Առնոլդովի, Ն.Կ. Ռերիխի, Ս.Լ. Ռուբինշտեյնի, Է. Ֆրոմմի հետազոտությունները նպաստեցին բարոյամշակութային արժեքների և հոգևորի հիմնական հասկացությունների կապի իմաստավորմանը[4,5,6,7,8]:

Պատմահասարակական փոփոխությունները, արժեքային կողմնորոշումների

---

[1] Архангельский Л.М. Индивидуальное сознания и моральные ценности Вопросы филасофии, 1986. - N7.-с.67-76
[2] Дробницкий О.Г. Проблемы нравственности.- Наука, 1977.-187с.
[3] Коган Л.Н. Цель и смысл жизни человека. -М.: 1984. - 252с.
[4] Анисимов С. Ф. Духовные ценности: производство и потребление. — М.: Мысль, 1988. — 255 с.
[5] Арнольдов А.И. Введение в культурологию, Новая расширенная редакция. Учебное пособие. - М: Народная Академия культуры и общечеловеческих ценностей. 1993. - 352 с.
[6] Рерих Н.К. Зажигайте сердца. О культуре и искусстве. Вступ.ст., предисл. к главам и примеч. А.Д.Алехина. 3-е изд;.перарб. М., Мол.гвардия, 1990, - 190 с.
[7] Рубинштейн С. Л. Основы общей психологии: В 2 т. Т. I.—М.: Педагогика, 1989. - 488 с.
[8] Фромм Э. Психоанализ и этика. -М.: Республика, 1993.-415с.

հերթափոխությունը կանխորոշեցին մարդու և հասարակության կյանքում հոգևոր, բարոյամշակութային և սոցիալական տարբեր տեսանկյունների մշակման նոր հեռանկարներ: Այս տեսանկյունից հստակ հետաքրքրություն ունի Ն.Բ. Կռիլովայի հետազոտությունները, որոնք դիտարկում են ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման մանկավարժական գործընթացի առանձին կողմերը[9,10]:

Դպրոցականների և ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման հիմնախնդիրները դիտարկվել են Բ. Գ. Անանևի[11], Ն.Վ. Կուզմինայի[12], Բ.Տ. Լիխաչյովի[13], Ն.Դ. Նիկանդրովի[14], Ս. Լ. Ռուբինշտեյնի[15], Վ.Ա. Սուխոմլինսկու[16], Մ.Մ. Մանուկյանի[17], Ա.Ա. Նալչաջյանի[18] հոգեբանամանկավարժական հետազոտություններում:

Անձի բարոյամշակութային դաստիարակության ձևավորման գործում բարոյամշակութային արժեքների դերի և զարգացման հարցերի վերլուծությանն են նվիրված Ա.Ի. Առնոլդովի[19], Մ. Ս. Կոգանի[20] ուսումնասիրությունները:

Բարձրագույն կրթության արժեքային բովանդակության հարցերը խորությամբ դիտարկվել են Ա. Պ. Բելյաևայի[21], Ե.Վ. Բոնդարևսկայայի[22], Լ. Թ. Ասատրյանի[23], Ն. Կ. Հարությունյանի[24] և այլոց հետազոտություններում:

Այնուհանդերձ, չնայած վերը թվարկված ծանրակշիռ հետազոտություններին, ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման խնդիրը բավականաչափ մշակված և հիմնավորված չէ: Բարոյամշակութային արժեքների

---

[9] Крылова Н.Б. Формирование культуры будущего специалиста. - М.: Высш.шк., 1990.-142с.
[10] Крылова Н.Б. Эстетический потенциал культуры. - М.: Прометей, 1990. - 146с.
[11] Ананьев Б.Г. Человек как предмет познания.-СПБ: Питер, 2001.-288с.
[12] Кузьмина Н.В. Профессионализм личности преподавателя имастера производственного обучения. - М,: Высш. шк., 1990. - 119 с.
[13] Лихачев А.Е. Воспитание и духовность (Заметки православного педагога) // Педагогика 2001.-N3.-с. 33-36
[14] Никандров Н.Д. Духовные ценности и воспитание человека // Педагогика, 1998, N4, -с. 3-9.
[15] Рубинштейн С. Л. Основы общей психологии: В 2 т. Т. I.—М.: Педагогика, 1989. - 488 с.
[16] Сухомлинский, В. А. Избранные педагогические сочинения : в 3 т.:Т. 1 / В.А. Сухомлинский. - М. : Педагогика, 1979. - 558 с.
[17] Մանուկյան Ա.Մ., Մանուկյան Մ.Մ., Մանկավարժական տեխնիկա և տեխնոլոգիա, Երևան, 2000,151 էջ:
[18] Նալչաջյան Ա.Ա., Մկրտչյան Ս., Էթնիկական մանկավարժություն, Երևան, Զանգակ-97 հր., 2003, 312 էջ:
[19] Арнольдов А.И. Введение в культурологию, Новая расширенная редакция. Учебное пособие. - М: Народная Академия культуры и общечеловеческих ценностей. 1993. - 352 с.
[20] Коган Л.Н. Цель и смысл жизни человека. -М.: 1984. - 252с.
[21] Беляева А.П. Методологияи теория профессиональной педагогики.-СПБ.: Ин-т профтех образования РАО, 1999.- 480с.
[22] Бондаревская Е.В. Воспитание как возрождение гражданина, человека культуры и нравственности.- Ростов-на-Дону: Изд-во РПУ, 1995.-32с.
[23] Ղուկասյան Ա.Ս., Ասատրյան Լ.Թ., Կարապետյան Ա.Ս., Մանկավարժական բուհի կառավարման տեխնոլոգիան և զարգացման միտումները, Երևան, Մանկավարժ հրատ., 2005,340 էջ:
[24] Հայ մանկավարժական մամուլ / Ա.Վ.Աբրահամյան, Ն.Կ. Հարությունյան, Ս.Շ.Մկրտչյան.-202 էջ

ձևավորման այդ կարևոր տեսանկյունն էլ որոշեց մեր հետազոտության հիմնախնդիրը, որն ուսանողի բարոյամշակութային արժեքների զարգացման գործոնների ու օրինաչափությունների բացահայտումն է և բարոյամշակութային արժեքների զարգացման գիտատեսական համակարգի մշակումը՝ կրթական նոր անձնակողմնորոշիչ-զարգացնող հարացույցի հաշվառմամբ:

Բարձրագույն դպրոցում մասնագետների պատրաստության գործընթացի բարեփոխումները ենթադրում են այդ գործընթացի բովանդակության մեջ համամարդկային, մարդասիրական, ազգային, բարոյամշակութային, անձնային արժեքների գերակայություն, ուսանողների և դասավանդողների փոխհարաբերու-թյուններում փոխըմբռնման և հաղորդակցական հարաբերությունների ձևավորում՝ համապատասխան առողջ բարոյահոգեբանական մթնոլորտում:

Արդի սոցիալ-տնտեսական, կրթամշակութային մարտահրավերներին համապատասխան՝ բարձրագույն դպրոցում իրականացվում են բարեփոխումներ, որոնք ենթադրում են նորովի մոտեցում ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման հիմնախնդրին:

Հասարակական, սոցիալ-տնտեսական ճգնաժամերը խորապես ազդում են երիտասարդության, հատկապես ուսանողների անձի սոցիալականացման ընթացքի վրա, նպաստում են սոցիալական լարվածությանը: Հասարակության հոգևոր կյանքում առկա բացասական գործոններն ուղեկցվում են կրթամշակութային գործընթացների խաթարմամբ, հանգեցնում են երիտասարդության մեծամասնության մեջ բարոյամշակութային արժեքների վերաիմաստավորման, երբեմն էլ՝ կորստին: Առաջնային են դառնում նյութական արժեքների հետ կապված հիմնախնդիրները. ինքնանպատակ են դառնում իմացական և բարոյական ինքնակատարելագործման, ինքնադաստիարակության, համակողմանի, ներդաշնակ, ստեղծագործական զարգացման գաղափարները: Բարոյամշակութային բարձր հատկանիշները՝ ապրումակցությունը, համակեցությունը, հանդուրժողականությունը, հարգանքն իր և այլոց նկատմամբ, մղվում են երկրորդ պլան: Ուսանողական միջավայրում առկա աշխարհայացքային և բարոյամշակութային ճգնաժամերը ավելի են սրվում զանգվածային

տեղեկատվական միջոցներով: Այսօր համացանցում առկա են անձի բարոյամշակութային, հոգևոր և մշակութային զարգացման համար վտանգավոր բովանդակության նյութեր և ապակողմնորոշող վարքագիծ ձևավորող տեսաերիզներ: Երիտասարդության մեջ ձևավորվում է եսապաշտությունը, տարակարծություններ են ձևավորվում ազգային և համամարդկային հոգևոր արժեքների, անցյալի նվաճումների վերաբերյալ, և երիտասարդությունն օտարվում է անցյալի պատմամշակութային փորձից և բարոյամշակութային արժեքներից:

Վերը նշված հանգամանքները հրամայաբար պահանջում են նորովի մոտեցում ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման հիմնախնդրին: Այն ապագա մասնագետների՝ մանկավարժի, բժշկի, իրավաբանի, տնտեսագետի պատրաստության գործընթացի կարևորագույն բաղադրատարրն է:

Հետազոտության նպատակն է հիմնախնդրի գիտատեսական խոր վերլուծությամբ և ուսանողների շրջանում սոցիոլոգիական ուսումնասիրությունների արդյունքների մշակմամբ հիմնավորել ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորումը սոցիալ-տնտեսական և գլոբալացման նոր պայմաններում:

Հետազոտության խնդիրներն են.

- Փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական, աքսեոլոգիական գրականության վերլուծության հիման վրա մեկնաբանել «բարոյամշակութային արժեք» հասկացությունը:
- Բացահայտել ժամանակակից ուսանող երիտասարդության բարոյամշակութային արժեքների զարգացման հիմնական ուղղությունները:
- Մեկնաբանել գլոբալացման պայմաններում ուսանողի ինովացիոն տիպի ձևավորման գործընթացում ազգային և համամարդկային արժեքների հարաբերակցությունը:
- Վերլուծել դասախոս-ուսանող փոխհարաբերությունները վերահիմաստավոր-վող բարոյամշակութային արժեհամակարգի պայմաններում:
- Մշակել և սոցիոլոգիական ուսումնասիրությունների արդյունքներով հիմնավորել ժամանակակից ուսանողի բարոյամշակութային արժեքների, ինովացիոն տիպի ձևավորման նոր մոդել:

Հետազոտության ընթացքում կիրառվել են տեսական և էմպիրիկ **մեթոդներ՝** հետազոտության հիմնախնդրին նվիրված փիլիսոփայական, հոգեբանամանկա-վարժական, աքսեոլոգիական, մասնագիտական գրականության, կրթական ոլորտի նորմատիվային փաստաթղթերի վերլուծություն, դիտում, զրույց, անկետավորում, մոդելավորում, սոցիոլոգիական հարցումների ընթացքում ստացված տվյալների վերլուծություն:

Հետազոտության բազա են հանդիսացել Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետը, ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղը, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը, Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական համալսարանը, Երևանի Հյուսիսային համալսարանը:

Հետազոտության գիտական նորույթն է.

1. Վերլուծվել և նորովի մեկնաբանվել է «արժեք» հասկացության փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, աքսելոգիական հիմքերը:

2. Բացահայտվել են գլոբալացման պայմաններում ազգային և համամարդկային արժեքների հարաբերակցությունը սոցիալական տարբեր ինստիտուտներում:

3. Մշակվել է բարձրագույն կրթության բարեփոխվող միջավայրում ուսանողի ինովացիոն տիպի մոդել՝ հիմք ընդունելով բարոյամշակութային արժեքների ձևավորվածության մակարդակները:

4. Անցկացվել է ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման հիմնախնդրի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումներ և կատարվել դրանց վերլուծություն:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Ուսանողների բարոյամշակութային արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացը տարբեր սոցիալական ինստիտուտներում վերաիմաստավորում և վերափոխում է ուսանողի անձի իրավիճակային հարաբերություններն արտաքին կենսափորձի արդյունքում՝ աշխարհաճանաչմանը

զուգընթաց:

2. Բարձրագույն կրթության համակարգում ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորումն արդյունավետ է իրականանում դասավանդողի և ուսանողի՝ ազգային, համամարդկային, մասնագիտական, հոգևոր-բարոյական արժեքների վրա հիմնված ստեղծագործական համատեղ գործունեության, դասավանդվող առարկաների մարդասիրական ուղղվածության արդյունքում:

3. Բարձրագույն դպրոցում ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման արդյունավետությունն ապահովում է այդ գործընթացի կազմակերպման համապատասխան մշակված մանկավարժական պայմաններով՝ կրթական ծառայությունների ազատականացում և մրցակցային դաշտի ձևավորում, մասնագիտական պատրաստություն իրականացնող կառույցների իրավասությունների ընդլայնում, կառավարչական գործառույթների, կառավարման մեթոդների, կառավարման ոճերի վերանայում:

4. Ուսանողի ինովացիոն նոր տիպի մոդելն իր բաղադրատարրերով նպաստում է ուսանողի բարոյամշակութային արժեհամակարգի ձևավորմանը և զարգացմանը:

5. Բարոյամշակութային արժեքների ձևավորումն ապահովում է հետագա մասնագիտական գործունեության արդյունավետությունը և կայուն նախադրյալներ է ապահովում ուսանողի լիարժեք սոցիալականացման համար:

Հետազոտության տեսական նշանակությունը. Բացահայտվել և տեսականորեն վերլուծվել են ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման առանձնահատկություններն արդի սոցիալ-տնտեսական, գլոբալացման պայմաններում, մեկնաբանվել է «բարոյամշակութային արժեք» հասկացության էությունը: Տեսականորեն վերլուծվել են կրթական արդի բարեփոխումների համատեքստում ուսանող-դասախոս միջանձնային փոխահարաբերությունները բարոյամշակութային արժեքների ձևավորման գործընթացում:

Հետազոտության գործնական նշանակությունը պայմանավորված է սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծությամբ, որի հիման վրա

մշակվել է ուսանողի ինովացիոն նոր տիպի մոդել:

Հետազոտության արդյունքները հաջողությամբ կարող են հիմք հանդիսանալ բուհում մասնագիտական նոր ծրագրերի մշակման և ներդրման գործում՝ հաշվի առնելով ուսանողի բարոյամշակութային արժեքների ձևավորման նոր ինովացիոն տիպը:

Ատենախոսությունը քննարկվել է Երևանի պետական համալսարանի մանկավարժության ամբիոնում, ատենախոսության թեմայով հրատարակված է յոթ գիտական հոդված:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործած գրականության ցանկից և հավելվածներից: Այն կազմում է համակարգչային 169 էջ, բովանդակում է 1 գծապատկեր, 11 աղյուսակ, 18 տրամագիր:

ԳԼՈՒԽ 1. ԱՆՁԻ ԲԱՐՈՅԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳԻՏԱՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Բարոյամշակութային արժեհամակարգի պահպանումը պետական քաղաքականության գերակա խնդիր

Բարոյամշակութային արժեքային համակարգի պահպանումն այսօր համաշխարհային պետական քաղաքականությունների գերակա հիմնախնդիրներից մեկն է: Այս նպատակի համար տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից մշակվել են օրենքներ, կանոնակարգեր, որոնք ապահովում են այդ արժեքների պահպանումը և հետագա սերունդներին անարգել փոխանցումը: Մասնավորապես՝ 1954թ. մշակվել է «Զինված կոնֆլիկտների դեպքում մշակութային արժեքների պահպանության Հաագայի կոնվենցիան»[25], նույն թվականին Եվրոպայում մշակվել է «Եվրոպական մշակութային կոնվենցիան[26]», 1970թ. նոյեմբերի 14-ին Ֆրանսիայում ստորագրվել է «Փարիզի կոնվենցիան մշակութային արժեքների անօրինական ներմուծման, արտահանման եւ սեփականության իրավունքի փոխանցման արգելման և կանխման վերաբերյալ (Նոյեմբեր 14, 1970)[27]», 1972թ. նոյեմբերի 16-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկրները ստորագրեցին «UNESCO-ի համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանման վերաբերյալ կոնվենցիան»[28], 1993թ. Ստամբուլում ստորագրվել է «Սևծովյան տնտեսական համագործակցության դաշնության համաձայնագիրը»[29] մշակույթի, կրթության, գիտության և տեղեկատվության բնագավառներում համագործակցության մասին, 1995թ. մշակվել է UNIDROIT-ի կոնվենցիան՝ գողացված կամ անօրինականորեն արտահանված մշակութային արժեքների մասին[30], 1998թ. Մոսկվայում ստորագրվել է «ԱՊՀ մշակութային համագործակցության աջակցության

[25] mincult.am/img/pdf/Konv-Haaga-54.doc
[26] http://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/018
[27] http://www.unesco.org/new/en/culture/themes/illicit-trafficking-of-cultural-property/1970-convention/
[28] http://whc.unesco.org/en/convention/
[29] http://www.bsec-organization.org/COMOFA/Reports/CMFA%20Report%20-%20%20RDR%20Moscow%20website.pdf
[30] http://www.unidroit.org/instruments/cultural-property/1995-convention

հիմնադրամի ստեղծման մասին հիմնադիր պայմանագիրը»[31], Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիան /Ֆլորենցիա, 2000թ./[32] և այլն: Արդյունքում այսօր աշխարհում գործում են «Մշակութային արժեքների ուսումնասիրման և վերականգնման միջազգային կենտրոնը (ICCROM, Հռոմեական կենտրոն)»[33], «Համաշխարհային հուշարձանների հիմնադրամը»[34], բազմաթիվ միջազգային և տեղական այլ կառույցներ, պետական և հասարակական կառույցներ:

Այս ամենից անմասն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը: Հայաստանի Հանրապետության մայր օրենքում ամրագրված է՝ մարդը, նրա իրավունքներն ու ազատությունը բարձարագույն արժեքներ են[35]: Միաժամանակ ՀՀ-ում յուրաքանչյուր քաղաքացի ունի հավասար իրավուքներ և պարտականություններ, որոնց շրջանակներում ամբողջացվում է համամարդ-կային և հասարակական արժեհամակարգը:

ՀՀ Սահմանադրության մի շարք հոդվածներում ամրագրված են արժեքային համակարգը կանոնակարգող դրույթներ, որոնք ազգային անվտանգության, մարտավարական կարևորություն են ստանում պետության կողմից սոցիալական ինստիտուտներին տրվող սոցիալական պատվերում, որտեղ հստակ ձևակերպվում է՝ ինչպիսի՞ն պետք է լինի ՀՀ քաղաքացին: Համամարդկային արժեքային համակարգը ենթադրում է, որ բոլոր երկրների մայր օրենքներում պետք է սահմանվեն այնպիսի կանոնակարգեր, որոնք կընդգծեն համամարդկային արժեքները՝ լուծելով հետևյալ հիմնախնդիրները.

- Յուրաքանչյուր անձ ազատ ապրելու, արարելու, դավանելու, արժեքներ կրելու իրավունք ունի,
- հարգանք իրենց նախնիների ձեռք բերած արժեքների նկատմամբ,
- սեր, հարգանք երկրի, մոլորակի մարդկանց իրավունքների նկատմաբ:

1972 թվականին ՄԱԿԳՄԿ-ը (Միավորված Ազգերի Կրթության, Գիտության և Մշակույթի Կազմակերպություն) ընդունել է «Համաշխարհային մշակութային և

[31] http://cis-legislation.com/document.fwx?rgn=3919
[32] http://www.coe.int/en/web/landscape/home
[33] http://www.iccrom.org/
[34] https://www.wmf.org/
[35] http://www.parliament.am/parliament.php?id=constitution

բնական ժառանգության պաշտպանման կոնվենցիան»[36] (ուժի մեջ է մտել 1975 թ.): ԽՍՀՄ-ը վավերացրել է կոնվենցիան 1988 թվականի մարտի 9-ին: Մինչև 2009 թվականի ապրիլը կոնվենցիան վավերացրել են 186 երկրներ:

Համաշխարհային արժեքային, հոգևոր, սոցիալական ժառանգության ցանկի ամենակարևոր նպատակն է պահպանել և հայտնի դարձնել յուրահատուկ օբյեկտները, անկողմնակալության համար ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից կազմվել են գնահատման չափանիշները:

Մինչ 1978 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից մշակվել էին միայն մշակութային ժառանգության օբյեկտների վեց կետերից բաղկացած չափանիշներ, այնուհետև, մայրցամաքների, այսպես ասած, հավասարակշռությունը պահպանելու համար բոլոր չափանիշները միացրել են և այսօր Համաշխարհային ժառանգության օբյեկտն ունի գոնե մեկ չափանիշ թվարկածներից:

Ներկայացնենք ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից մշակված և ընդունված վեց կետից բաղկացած մշակութային չափանիշները, որոնք ամբողջական կներկայացնեն համամարդկային արժեքիամակարգի պահպանման հիմնախնդիրը պետական քաղաքականության տեսանկյունից:

Դրանք են.

1. Օբյեկտը մարդկային ստեղծագործական գլուխգործոց է:

2. Օբյեկտը վկայում է մարդկային արժեքների տվյալ ժամանակահատվածում կամ որոշ մշակութային բնագավառում, ճարտարապետությունում կամ տեխնոլոգիայում, մոնումենտալ արվեստում, քաղաքների պլանավորման կամ լանդշաֆտների ստեղծման փոխադարձ ազդեցության մասին:

3. Օբյեկտը եզակի է կամ առնվազն բացառիկ՝ մշակութային ավանդույթի կամ քաղաքակրթության համար, որը գոյություն ունի մինչ այսօր կամ արդեն անհետացել է:

4. Օբյեկտը կոնստրուկցիայի, ճարտարապետական կամ տեխնոլոգիական անսամբլի, կամ լանդշաֆտի ակնառու օրինակ է, որը

[36] http://whc.unesco.org/en/conventiontext/

ներկայացնում է մարդկային պատմության զգալի հատված:

5. Օբյկետը մարդկային ավանդական կառուցման ակնառու օրինակ է, հողի և ծովի ավանդական օգտագործմամբ՝ ելնելով մշակույթի (կամ մշակույթների) կամ շրջապատող միջավայրի հետ մարդկային փոխհարաբերություններից: Օրինակ, հատկապես եթե բնությունը դարձել է խոցելի՝ անշրջելի փոփոխությունների ուժեղ ազդեցության պատճառով:

6. Օբյեկտը ուղղակիորեն կամ մասամբ կապված է իրադարձությունների կամ գոյություն ունեցող ավանդույթների, գաղափարների, համոզմունքների, գեղարվեստականի և գրականի հետ ունի համամարդկային նշանակություն[37]: (Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոմիտեի կարծիքի, այդ չափանիշը նախընտրելի է օգտագործել կամ ևս մեկ չափանիշի, կամ չափանիշների հետ:)

Գլոբալացման, տնտեսական, սոցիալ-հոգեբանական որոշակի փոփոխությունների ընթացքում օբյեկտիվորեն և սուբյեկտիվորեն փոփոխվում է նաև մարդու արժեհամակարգը, որի արդյուքնում նկատվում են ինչպես դրական, այնպես էլ բացասական տեղաշարժեր: Երբեմն հատկապես տուժում են ազգային և անձնային արժեքները, որոնք աստիճանաբար հանգեցնում են հասարակական համընդհանուր արժեքային փոփոխությանը, և հակառակը: Այս երկուսը իրարով պայմանավորված և իրար հակակշռող գործընթացներ են, որոնք կարգավորում են պետություն, հասարակություն, անձ, արժեքային համակարգը: Արժեհամակարգի կտրուկ փոփոխությունը, վերաիմաստավորումը հանգեցնում է հասարակության մեջ հոգևոր միասնության, պետականության ամբողջականության խախտման, փոփոխվում են երիտասարդ սերնդի բարոյա-մշակութային արժեքային կողմնորոշումները, որի արդյունքում նկատվում են վարքագծային փոփոխություններ:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, գրեթե բոլոր հանրապետություններում միասնական արժեքային համակարգի, գաղափարախոսության փոփոխությունը հանգեցրեց այլ արժեքների ներթափանցմանը, որը խախտեց հասարակության

[37] http://whc.unesco.org/en/criteria/

միասնական գիտակցված արժեքային համակարգի ընկալումը: Յուրաքանչյուր ազգի հոգևոր միասնությունն ու բարոյամշակութային արժեքները երկրի բարեկեցության կարևոր գործոններից են:

Ներկայումս ՀՀ գերակա հիմնախնդիրներից մեկն էլ համամարդկային, հասարակական, ազգային արժեքային համակարգի պահպանումն է, որը հասարակության, անձի գոյատևման և զարգացման կարևորագույն երաշխիքներից է:

Այս նպատակի համար ՀՀ պետական գերատեսչությունները իրականացնում են մի շարք պետական ծրագրեր. մասնավորապես՝ այսօր ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից իրականացվում է «Արի տուն» ծրագիրը, որի հիմնական նպատակներից մեկը սփյուռքում ապրող հայ երիտասարդներին հաղորդակից դարձնելն է մայր հայրենիքում ազգային մշակութային, բարոյամշակութային, հոգևոր, ընտանեկան արժեհամակարգին:

Բացի վերը նշված ծրագրերից՝ ՀՀ պետական քաղաքականության իրականացման շրջանակներում պետության կողմից իրականացվում են մի շարք ծրագրեր՝ տարածքային համագործակցության և համահայկական մշակութային ծրագրերի իրականացման շրջանակներում իրականացվում է «Երգում ենք Կոմիտաս» համահայկական փառատոնը[38], «Սփյուռք» ամառային դպրոցը[39] և այլն: Այս ծրագրերը նպաստում են ազգային, անձնային արժեքների յուրացմանը և փոխանցմանը հաջորդ սերունդներին՝ տարբեր սոցիալական ինստիտուտների միջնորդավորված ներգործությամբ, միջանձնային հարաբերություններում:

Սոցիալական տարբեր ինստիտուտներում անհրաժեշտ է ձևավորել հարգանք պետական խորհրդանիշերի, հայոց լեզվի, ազգային մշակույթի, հասարակական և ազգային արժեքների նկատմամբ: Պետական քաղաքականության շրջանակներում արժեքային համակարգի պահպանման առանցքային դերակատարությունը վերապահված է կրթությանը, որի գերակայող գործառույթներից մեկն էլ ազգային և համամարդկային, հասարակական

[38] http://www.edu.am/DownloadFile/3933arm-EDSP2011-15.pdf
[39] http://www.mindiaspora.am/am/Projects_2015

արժեքների ձևավորումը, պահպանումն ու փոխանցումն է: Անձնային արժեքների մեծ մասի ձևավորումն սկսվում է ընտանիքում, դպրոցում, ձևական և ոչ ձևական խմբավորումներում, զինվորական ծառայության ընթացքում, աշխատանքային հանրույթներում, զանգվածային տեղեկատվական աղբյուրների ներգործման արդյունքում և այլն:

Ընտանիքում ձևավորված բարոյամշակութային արժեքային համակարգը այն ցուցանիշն է, որի վրա հենվելով՝ կրթությունը փոխլրացնում է սովորողի բարոյամշակութային արժեքային համակարգը՝ աստիճանաբար ձևավորելով նաև ՀՀ քաղաքացու նկարագիրը: Հիմք ընդունելով սովորողների տարիքային շրջաբաժանման առանձնահատկությունները՝ անհրաժեշտ է անձի սոցիալականացման գործընթացում աստիճանաբար ձևավորել բարոյամշակութային արժեքային կայուն համակարգ, քանի որ անձի սոցիալականացման մինչաշխատանքային փուլում ապրած ու գիտակցված, յուրացված արժեքները հոգեբանորեն առավել կայուն են, դաստիարակչական ներգործության ելքային արդյունավետությունն առավել բարձր են, քան հետագա սոցիալականացման ընթացքում, որտեղ կարծրացած անձնային արժեքներն ու կողմնորոշումները գերակայող են:

Ինչպես իրավացիորեն կարևորում է Լ. Վիգոտսկին՝ «Տարիքային շրջաբաժանումների ընթացքում մի տարիքից մյուսին անցման կևևոր պահը՝ հետաքրքրությունների, պահանջմունքների, արժեքների վերաիմաստավորումն է»[40]:

Պետական քաղաքականության գերակա խնդիրներից մեկը ժամանակի մարտահրավերներին համապատասխան բարոյամշակութային հայեցակարգի ձևավավորումն է պետական մակարդակով, որը մեթոդաբանական հիմք է հանդիսանում կրթական չափորոշիչների մշակման համար:

Տարբեր սոցիալական կառույցների նպատակների, խնդիրների, մարտավարության, միասնական, համագործակցային աշխատանքների

[40] Выготский Л.С. Сборник сочинения Т.4. - М., 1983.– С. 385, էջ 142

արդյունքում անհրաժեշտ է ձևավորել բարոյամշակութային միասնական տարածք, որը գալիս է փոխլրացնելու կրթական միասնական դաշտին, ուր կներդաշնակվեն ազգային, համամարդկային, հասարակական և անձնային արժեքները:

ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագրում[41] ամրագրված է, որ պետականության կայացման և քաղաքացիական հասարակության կառուցման գործընթացում առանձնահատուկ է նոր սերնդի դաստիարակության կարևորությունը: Կրթության համակարգի խնդիրն է ակտիվ քաղաքացու ձևավորումը, որն ազգային արժեքների կրողն է:

Այսօր անձը ներգործվում է արտաքին աշխարհից գիտակցված և ոչ գիտակցված արժեքային տարբեր համակարգերի ազդեցությամբ, որի արդյունքում վերափոխվում է ազգային էթնոարժեհամակարգը, և պետական քաղաքականության գերակա կարևորագույն խնդիրներց մեկն էլ այդ վերափոխված արժեքային կողմնորոշումների ճիշտ ուղղորդումն է:

Այսօր անհրաժեշտ է պետական մակարդակով մշակել ՀՀ քաղաքացու բարոյամշակութային արժեհամակարգի ձևավորման միասնական հայեցակարգ, որի հիմքում պետք է հաշվի առնել պետական, ինքնուրույն մտածողություն ունեցող, ազատ, գործելաոճ ունեցող, ստեղծագործող քաղաքացու անձի ձևավորումը: Այդ առումով անհրաժեշտ է առաջադրել և լուծել բարոյամշակութային արժեհամակարգի պահպանման պետական քաղաքականության մի շարք խնդիրներ: Դրանք են.

- ժամանակակից դաստիարակչական համակարգի, իդեալի կերպարի ձևավորում, որտեղ կշեշտադրվի ազգային արժեքները,
- դաստիարակչական համակարգում կոնկրետ ենթակառույցների ձևավորում՝ տարիքային շրջաբաժանումներին համապատասխան,
- բարոյամշակութային արժեհամակարգի զարգացման նպատակների և խնդիրների սահմանում՝ չանտեսելով ժամանակով պայմանավորված օբյեկտիվ փոփոխությունները,

[41] http://parliament.am/law_docs/190711HO246havelvats.pdf

• սովորողների սոցիալականացման ընթացքում հենքային արժեքների ներդաշնակումն ազգային, հասարական, անձնային արժեքների հետ,

• սովորողների զարգացման ընթացքում բարոյամշակութային արժեքների ձևավորման համար սոցիալ-մանկավարժական, հոգեբանական սկզբունքների և պայմանների ապահովում:

Նշված գերակա խնդիրների լուծման շրջանակներում, երբ կրթական բարեփոխումների արդյունքում շրջանառվում է նոր կրթական հարացույցը, որը հնարավորություն է տալիս ոչ միայն կարևորել գիտելիքը, այլև սովորողների անձի սոցիալականացումը, անհրաժեշտ է առավել ընդգծել բարոյամշակութային արժեքային կողմնորոշումների ձևավորումը: Բարոյամշակութային արժեքային համակարգում կարևորվում են հիմնական հասկացություններ, որոնք պայմանականորեն կարելի է դաս-դասել երկու խմբի՝ **սոցիալական** և **մանկավարժական:**

Առաջին խմբի հասկացությունների մեջ կարելի է ներառել՝ ազգ, պետություն, ազգային ինքնագիտակցություն, ազգային ինքնաճանաչում, ազգային գաղափարախոսություն, հայրենասիրություն, քաղաքացիական հասարակություն:

Մանկավարժական հասկացությունների շրջանակն է կազմում անձի սոցիալականացումը, զարգացումը, սոցիալական դաստիարակությունը, հոգևոր-բարոյական անձի ձևավորումը և զարգացումը, քաղաքացու հոգևոր-բարոյական-մշակութային զարգացումը, իդեալը:

Այսպիսով՝ սահմանենք անձի, քաղաքացու բարոյամշակութային նկարագրի ձևավավորման որոշակի շրջանակ, որը թույլ կտա հետագայում ամբողջացնել ՀՀ քաղաքացու արժեքային կողմնորոշումները և հիմք կհանդիսանա վերահիմաստավորելու և գնահատելու դրանք: Այդ շրջանակի բաղադրամասերն են.

• անձի նախադրյալների, հնարավորությունների դրսևորում հոգևոր, բարոյամշակութային զարգացման ընթացքում՝ համապատասխան արժեքային համակարգի ձևավորմամբ,

• սոցիալականացման ընթացքում անձի բարոյական ինքնազարգացման և

ինքնակատարելագործման, ինքնաիրացման, կյանքի իմաստի, երջանկության իմաստավորման, համապատասխան բարոյամշակութային վարքագծի դրսևորում,

- սոցիալական միջավայրում շարունակական կրթության ընթացքում անձի ստեղծագործական ներուժի զարգացման, հարաբերականորեն կայուն բարոյական, գեղագիտական, իրավական նորմերի, արժեքների, կողմնորոշումների, վարքագծի դրսևորում,
- անձի օբյեկտիվ ինքնագնահատականի, տեղին ինքնաքննադատության ցուցչային համադրում ազգային արժեքներին, ավանդույթներին, սովորույթներին,
- միջանձնային հաղորդակցման ընթացքում մարդկանց այնպիսի արժեքային համակարգի ընդունում, որը չի վնասում ինչպես տվյալ անձի, այնպես էլ այլ մարդկանց մտավոր, ֆիզիկական, հոգևոր, բարոյամշակութային արժեքային կողմնորոշումներին,
- կամային հաստատուն որակների, անհանդուրժողականության, բացասական դիրքորոշման, հակազդեցության դրսևորում:

1.2. «Արժեք» հասկացության փիլիսոփայական և աքսեոլոգիական հիմքերը

Փոխակերպվող հասարակության առջև ծառացած ժամանակակից մարտահրավերներին ընդառաջ՝ անձի սոցիալականացման ընթացքում առանձնակի շեշտադրվում է բարոյամշակութային, հոգևոր արժեքների կորուստը, որն էական է դարձնում անձի կրթության և դաստիարակության գործընթացում անցումն արժեբանական հարացույցին, որը զուգակցվում է անձնակողմնորոշիչ, ձևավորող հարացույցի հետ:

Որքան փոփոխվում է սոցիալ-մշակութային, հոգևոր արժեհամակարգը, ազգային արժեքների պահմանման հիմնախնդիրը, այնքան առաջնային է դառնում մարդկային հասարակության արժեքների վերաիմաստավորման հրատապությունը, որը պայմանավորում է ժամանակակից գիտական ճանաչողության, արժեբանության

զարգացման միտումները: Արժեքները, արժեքային կողմնորոշումները փիլիսոփայության, բարոյագիտության, սոցիոլոգիայի, հոգեբանության, մանկավարժության հետազոտության օբյեկտն են: «Արժեք» հասկացությունը ժամանակակից հասարակական մտքի հենակետային հասկացություններից մեկն է և հանդես է գալիս որպես չափանիշ՝ ամփոփելով հասարակական իդեալները[42]:

Հետաքրքրությունը մարդկային փոխհարաբերություններում արժեքների դերի գիտակցման վերաբերյալ սկիզբ է առել հասարակության զարգացման ամենավաղ փուլերում:

Արևելք-Արևմուտք մշակութային հակադրության հիմքում ընկած է ինչպես արևելյան և արևմտյան ժողովուրդների հոգեկերտվածքի, աշխարհընկալման ու մտածելակերպի տարբերության, այնպես էլ մարդու կյանքում նրա տեղի և դերի մասին տարբեր ընկալումների համակարգը:

Այսպես, եթե արևմտյան մտածողությունը բնորոշվում է որպես իրատեսական, հասկացական, ապա արևելյանը՝ հայեցողական, կրոնա-առեղծվածային, պատկերավոր: Մարդկության գոյատևման տարբեր ժամանակահատվածներում բարոյամշակութային արժեհամակարգը ունեցել է զարգացման տարբեր ընթացք, մակարդակներ, չափանիշեր և մտածողության սեփական եղանակ: Սակայն սխալ կլիներ բացարձակացնել նրանց միջև գոյություն ունեցող մշակութային տարբերությունները և թերագնահատել թե՛ մեկի, թե՛ մյուսի ստեղծած մշակութային արժեքների տեղը և դերը մարդկության կյանքում[43]:

Չին փիփսոփա Կոնֆուցիուսը հիմնականում ուշադրություն է դարձնում մարդու, նրա բնության ու էության, բարոյամշակութային ինքնակատարելագործման, դաստիարակության, ինչպես նաև հասարակության կառավարմանը վերաբերող հարցերին[44]:

Նա տարբերակում է կառավարման երկու ձև, որոնք հենվում են վարչական

---

[42] Сластенин В.А., Чижакова Г.И. Введение в педагогическую аксиологию, Учебное пособие для студентов педагогических вузов. - М.: Академия, 2003. - 192 с.

[43] История философии : Учебник для высш. учеб. заведений / Отв. ред. В. П. Кохановский, В. П. Яковлев. — Ростов-на-Дону : Феникс, 2001. — 574 с.

[44] Конфуций. Суждения и Беседы: Азбука, Азбука-Аттикус; 2011, - 124 стр.

օրենքների և բարոյական օրենքների ու ավանդույթների հենքի վրա: Առաջինը, ըստ Կոնֆուցիուսի, անընդունելի է, քանի որ վարչական օրենքներով կամ բռնությամբ հնարավոր չէ կարգավորել մարդկային հարաբերությունները, հնարավոր չէ պահպանել բարոյական արժեքները: Ընդհակառակը, եթե մարդիկ կառավարվում են բարոյական օրենքներով ու ավանդույթներով, ապա հասարակության մեջ հաստատվում է խաղաղություն, արդարություն և մարդիկ էլ պահպանում են իրենց բարոյամշակութային արժեհամակարգն ու մարդկային դիմագիծը: Մարդու բնությունն ի ծնե բարի է, ուստի նրա բնությանն ավելի հարիր է կառավարման այն ձևը, որը հենվում է բարոյամշակութային ավանդույթների, արժեքների և առաքինությունների վրա:

Բառարաններում «արժեքը» մեկնաբանվում է որպես իրականության որոշակի երևույթների մարդկային, սոցիոլոգիական, մշակութային նշանակություն ցույց տվող հասկացություն[45]: Այն բնութագրում է իրերի, երևույթների հատկությունները և գոյություն ունի առանձին անձերի ու սոցիալական խմբերի հարաբերություններում[46]:

«Արժեք» հասկացության ինքնատիպ մեկնաբանություններ առկա են նաև սոփեստների տեսակետներում: Նրանք մերժում էին ավանդական պատկերացումները բարոյական, կրոնական և հասարակական արժեքների մասին: Կասկածի տակ դնելով ավանդական բարոյամշակութային արժեքների իսկությունը և դրանով իսկ մարդկանց միտքը ազատելով դիցաբանական նախապաշարում-ներից, տարածելով քննադատական ոգին՝ սոփեստները կարևոր դեր խաղացին լուսավորական, բնապաշտական, հումանիստական գաղափարների տարածման գործում, թեև, խարխլելով հին արժեքների համակարգը, նրանք չկարողացան ստեղծել ընդունելի նորը:

Տարբեր ժամանակներում արժեբանական հարցերը տարբեր տեսանկյուններից դիտարկել են Դեմոկրիտը, Սոկրատեսը, Պլատոնը, Արիստոտելը, Պյութագորասը, Էպիկուրը և այլք: Նրանք ուշադրություն էին դարձնում մի քանի գործընթացների վրա, որոնք հանգեցնում են սոցիալական և մշակութային արժեքների

[45] Բարոյագիտական բառարան (խմբ. Ի.Ս.Կոնի), Երևան, «Հայաստան» 1985, 456 էջ:
[46] Փիլիսոփայական բառարան, Երևան, «Հայաստան», 1975, 467 էջ:

զարգացմանը: Սակայն այդ ժամանակի փիլիսոփաները հիմնականում զբաղված էին գոյաբանական հարցերով[47]:

Արժեքների ընդհանուր տեսության հարցերը առաջ է քաշել բարոյագիտության հիմնադիր Սոկրատեսը: Նա անտիկ փիլիսոփաներից առաջինն էր, որ խոսելով բարօրության, բարեգործության, գեղեցկության մասին՝ փաստեց, որ դրանք ընկած են բարոյական վարքագծի հիմքում: Սոկրատեսը նշում էր, որ գիտելիքը բարիք է, քանի որ այն հնարավորություն է տալիս տարբերել իրական բարին: Հին հույն իդեալիստ փիլիսոփա Պլատոնը բարությունը, իմաստությունը դիտում էր որպես հոգու հատկանիշեր: Նա առաջինն է, որ դասավորեց արժեքները՝ չափ, չափավորություն, գեղեցկություն, կատարյալ, բանականություն, հաճույք: Պլատոնը գտնում էր, որ հասարակական և կրթական արժեքների փոխադարձ կապը բնութագրում է դաստիարակության նպատակները: Բարությունը, իմաստությունը հոգու դրսևորման ձևն է, իսկ հոգին անձի հիմքն է:

Արիստոտելը իր «Մեծ բարոյագիտություն» աշխատության մեջ խոսելով արժեքային խնդիրների մասին՝ շեշտադրել է բարիքը՝ որպես արժեք: Նա առանձնացրել է հոգևոր՝ հոգին, խելքը, նյութական՝ առողջությունը, գեղեցկությունը և հնարավորությունների բարիքներ՝ իշխանություն, հարստություն, ուժ: Ըստ Արիստոտելի՝ բարիքը կարող է գտնվել հոգում (առաքինություն), մարմնում (առողջություն, գեղեցկություն): Բարձրագույն բարիքը առաքինությունն է, որն ինչպես նա է նշում բարոյագիտական արժեք է և ձեռք է բերվում կյանքի ընթացքում: Առաքինի մարդը դառնում է դաստիարակության արդյունքում: Այդ պատճառով դաստիարակությունը ներառում է երեք փոխկապակցված և փոխպայմանավորված մասեր՝ ֆիզիկական, բարոյական և մտավոր[48]:

Արևելյան գաղափարախոսության մեջ արժեքների և մարդկանց նպատակների հարաբերակցության տարբեր տեսանկյուններ դիտարկվել է չին ականավոր փիլիսոփա Կունֆուցիուսի կողմից: Նպատակադիր լինելով դաստիարակել առաքինի մարդ՝ Կունֆուցիուսը կարևորում է բարոյագիտական արժեքները և նորմերը, որոնք

---

[47] Азбука нравственного взросления: методический материал / В.И. Петрова [и др.]. - СПб.: Питер, 2007. - 304 с.

[48] Батурина Г.И. Нравственное воспитание школьников на народных традициях: методический материал / Г.И. Батурина, К. Л. Лисова, Г. Ф. Суворова. - М.: Народное образование, 2002. - 112 с., էջ 77:

նա ներկայացրել է հինգ առաքինությունների տեսքով: Ըստ նրա բարոյամշակութային արժեքները և վարքի նորմերը պետք է դրսևորվեն որպես բնական պահանջմունք[49]: Բարոյամշակութային արժեքների վերաբերյալ դատողություններ ենք հանդիպում միջնադարյան մտածողների՝ Լ.Բ. Ալբերտի, Լ. Վալլի, Ա. Դանթեի, Ն. Մաքիավելլու, Դ.Պ. Միրանդոլայի աշխատանքներում[50]: Նրանք արժեքների տեսության մշակման հիմնական ուղղությունները դիտարկել են այնպիսի գիտությունների տեսանկյունից, ինչպիսի են գեղագիտությունը, փիլիսոփայությունը, բարոյագիտությունը: Մասնավորապես Թ. Կամպանելլան գեղեցիկի առանձնահատկությունը ձևակերպում է որպես մարդու հոգևոր արժեքների ուղեկցող և կրող, Լ. Վալլը դատում է բարոյամշակութային արժեքների, իսկ Լ. Բ. Ալբերտը՝ գեղեցիկի մասին՝ որպես յուրահատուկ արժեքի: Սակայն Մ.Ս. Կագանի կարծիքով «արժեք» հասկացությունը միջնադարում ձեռք չի բերում փիլիսոփայական կատեգորիայի նշանակություն[51]:

Եթե գերմանացի փիլիսոփա Ֆ.Նիցշեն արժևորում էր մարդու անձը, նրա համակողմանի և ներդաշնակ զարգացումը, ապա Թ. Հոբսը առաջինն էր, ով կարևորեց, որ արժեքներն ունեն սուբյեկտիվ և հարաբերական բնույթ. «այն ինչ մեկը կոչում է իմաստություն, մյուսը կոչում է վախ, մեկի կարծիքով դա համառություն է, մյուսը գտնում է, որ արդարություն է: Մարդու արժեքը, ինչպես բնորոշ է մյուս իրերին, նրա գինն է, այսինքն՝ մարդն արժե այնքան, որքան կարելի է օգտագործել նրա ուժը և կախված է թե ինչպիսին կլինի մյուսների գնահատականը»[52]:

Մենք համակարծիք ենք այն մոտեցմանը, որ արժենքներն ունեն սուբյեկտիվ և հարաբերական բնույթ, որոնք տեղայանացվում են անձի արժեհամակարգում և համապատասխան միկրոմիջավայրում և կարող են ունենալ իրավիճակային ընկալում:

«Արժեք» հասկացությունը փիլիսոփայության մեջ կիրառություն է ստացել 19-

---

[49] Конфуций. Суждения и Беседы: Азбука, Азбука-Аттикус; 2011, - 124 стр.

[50] Թորգոմյան Լ.Վ. Մանկավարժական արժեբանության հիմունքներ: Ուս. ձեռնարկ / Լ.Վ.Թորգոմյան ; Խմբ.՝ Գ.Հ.Հակոբյան. – Եր.: Ան-Ջոն հրատ., 2011. – 160 էջ:

[51] Каган М. С. Философская теория ценностей.- “Петрополис”, 1997.-205с

[52] Ницще Ф. Волья к власти: опыт переоценки всех ценностей.-М.: Наука, 1994.-351с.

րդ դարի երկրորդ կեսից, իսկ արժեքաբանության հիմքերը փիլիսոփայական գիտելիքների համակարգում ներդրել է Ի. Կանտը[53]:

Մշակելով մարդու՝ որպես ճանաչողական սուբյեկտի, ակտիվության խնդիր, Ի. Կանտը գործնական գիտակցությունը հակադրեց տեսականին՝ այն դուրս բերելով իմացաբանության սահմաններից: Ի. Կանտը տարանջատում է իմացության ոլորտները, գնահատականները և արժեքները, որոնք համապատասխանաբար վերաբերում են իմացաբանությանը, բարոյագիտությանը, գեղագիտությանը:

Ի տարբերություն Ի. Կանտի, Գ. Ֆ. Հեգելը կառուցել է իր փիլիսոփայական համակարգը՝ հենվելով գիտակցության գնահատականների և արժեքների փոխկապակցվածության վրա:

«Արժեք» եզրույթը փիլիսոփայության մեջ ներմուծել է գերմանացի փիլիսոփա և ֆիզիոլոգ Ռ.Գ. Լոտցեն՝ տեսականորեն առանձնացնելով արժեքային ոլորտը իրականության այլ ոլորտներից[54]:

Բարոյամշակութային արժեհամակարգի ստորադասությունն իր ուրույն տեղն ունի նաև հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ, որը վաղ ժամանակահատվածում արտահայտվել է բանավոր խոսքի, էպոսի, դյուցազներգությունների, ավանդապատումների մեջ:

Այդ մեկնությունն աչքի է ընկնում իր աշխարհիկ բովանդակությամբ, իմացաբանական, բարոյամշակութային արժեքների լավատեսությամբ ու մարդասիրությամբ: Անանուն հեղինակը ոչ միայն վերարտադրում է Դավիթ Անհաղթի մտքերը, այլև ստեղծագործաբար լրացնելով՝ առաջադրում է ուշագրավ գաղափարներ անտիկ և միջնադարյան մտածողության ու մշակութային կապերի, փիլիսոփայության սոցիալական դերի վերաբերյալ:

Ն. Լամբրոնացին հիմնավորում է ազգային և կրոնական հանդուրժողականության սկզբունքը, իսկ Մ. Գոշը քննարկում է մարդու բարոյական, սոցիալական և իրավական պաշտպանվածության խնդիրը: Ելնելով մարդու կամքի ազատության դրույթից՝ հայ մտածողները պաշտպանում են մարդու

---

[53] Кант И. О педагогике // Трактаты и письма. - М.,1980. - 445-504с.
[54] Փիլիսոփայական բառարան, Երևան, «Հայաստան», 1975, 467 էջ:

բարոյամշակութային, սոցիալական ազատության ու հավասարության, օրենքի առաջ բոլորի հավասարության, արդարության, միասնականության գաղափարը: Նրանց կարծիքով՝ պետության մեջ կարգ ու կանոնի, սոցիալական, բարոյամշակութային ներդաշնակության, խաղաղության և բարգավաճման երաշխիքը օրենքներով կառավարումն է: Մարդկային օրենքները հարաբերական և փոփոխական բնույթ ունեն, հետևաբար, դրանց գործածությունը պետք է կախված լինի ժամանակի և տեղի պարագաներից: Նույնիսկ Աստվաշնչյան պատվիրանները, ըստ Ն. Լամբրոնացու, բացարձակ բնույթ չունեն, որովհետև ժամանակն է իշխում պատվիրանների վրա և ոչ թե պատվիրանը՝ ժամանակի[55]:

Մարդիկ բնականից ծնվում են ազատ ու հավասար, իսկ անազատությունն ու անհավասարությունը սոցիալ-տնտեսական ու սեփականատիրական հարաբերությունների արդյունք են: Միջնադարի պայմաններում Մ. Գոշն առաջադրում է այն միտքը, թե անկախ ազգային, կրոնական պատկանելությունից, մարդու կյանքը բացարձակ արժեք է, որի դեմ ոտնձգություն կատարողը պետք է պատժվի:

Փիլիսոփայական տարբեր ուղղություններում «արժեք» հասկացության մեկնաբանումը, տեսակետները, մոտեցումները մեթոդաբանական հիմք հանդիսացան նաև արժեքի իմաստավորումը մանկավարժական աքսեոլոգիական տեսանկյունից:

Ներկայումս գոյություն ունեն արժեբանական մի քանի ուղղություններ, որոնք տարբեր կերպ են դիտարկում «արժեք» հասկացության էությունը: Պայմանականորեն դրանք կարելի է բաժանել հետևյալ տիպերի.

1. Օբյեկտիվ-իդեալիստական,
2. Սուբյեկտիվ-իդեալիստական,
3. Բնահարմարողական,
4. Սոցիոլոգիական,
5. Դիատեկտիկա-մատերիալիսական:

Համառոտակի դիտարկենք դրանցից յուրաքանչյուրը, որտեղ կարևորվում է

[55] Թորգոմյան Լ.Վ. Մանկավարժական արժեբանության հիմունքներ: Ուս. ձեռնարկ / Լ.Վ.Թորգոմյան ; Խմբ.՝ Գ.Հ.Հակոբյան. – Եր.: Ան-Ջոն հրատ., 2011. – 160 էջ:

«արժեք» հասկացության աքսեոլոգիական հիմքը:

Օբյեկտիվ-իդեալիստական: Այս մոտեցման կողմնակիցները դիտարկում են «արժեք» հասկացությունը որպես առեղծվածային էություն՝ անկախ ժամանակից և տարածությունից:

Սուբյեկտիվ-իդեալիստական մոտեցման կողմնակիցները «արժեքը» դիտարկում են գիտակցություն, որի հիմքում ընկած է մարդը որպես հոգեբանական օբյեկտ:

Արժեքի բնահարմարողական մոտեցման կողմնակիցները գտնում են, որ բացարձակ արժեք են մարդու բնական պահանջմունքները, որոնք կանխորոշվում են բնական օրենքներով: Այս դեպքում պահանջմունքը նրանք դիտարկում են որպես հետաքրքրություն, որն արտահայտվում է մի դեպքում դրական դրսևորումներով՝ սիրո, հավատարմությամբ, մյուս դեպքում՝ դրանց հակակշիռներով՝ չարությամբ, ատելությամբ, հիասթափությամբ և այլն:

Արժեքի սոցիոլոգիական ուղղությանը բնորոշ է սոցիալական ամբողջականության հարաբերականությունը: Այդ ուղղության ներկայացուցիչները «սոցիոլոգիական արժեք» ասելով հասկանում են սոցիալական հավասար միջավայրում անձի բարոյամշակութային, գեղագիտական, կրոնական պատկերացումների համակարգը:

Դիատեկտիկա-մատերիալիստական ուղղության ներկայացուցիչները արժեքը դիտարկում են հասարակության պատմական, տնտեսական, սոցիալական զարգացման դիալեկտիկայում:

«Արժեք» հասկացությունը սերտորեն համադրվում է «իդեալ» հասկացության հետ: Իդեալը, ըստ Դ. Ա. Լեոնտևի, արտահայտվում է հասարակության ընդհանրացված պատկերացումներում: Մարդու վարքի կողմնորոշվածությունը կախված է անձի արժեքային կողմնորոշիչներից[56]:

Դիտարկելով արժեք հասկացության ասքեոլոգիական հիմքերը՝ Լ. Պ. Տիխոնովան առաջարկում է արժեքի հետևյալ դասակարգումը.

- **կենսական արժեքներ**. առողջ ապրելակերպ, անվտանգություն,

[56] Леонтьев Д.А. Жизненный мир человека и проблема потребностей Психологический журнал.-1999.-Т.13. 107-120 с.

հոգատարություն, կենսական ներուժ,

- **սոցիալական արժեքներ**. հասարակական ակտիվություն, ընտանիք, հայրենասիրություն, փոխըմբռնում,
- **քաղաքական արժեքներ**. խոսքի ազատություն, պետականություն, օրինապահություն,
- **բարոյական արժեքներ**. բարիք, սեր, բարություն, քաղաքավարություն, հավատարմություն,
- **կրոնական արժեքներ**. հավատ, ծիսակատարություն, աղոթք[57]: Մենք կարծում ենք, անձի սոցիալականացման ընթացքում համադրվում են նշված բոլոր արժեքները, սակայն անհատական զարգացման որոշակի փուլում նրանցից որևէ մեկը կարող է գերակայել:

Բարոյամշակութային արժեքների դասակարգման, նրանց կողմնորոշումների, բնութագրերի առավել համակարգված և ամբողջական պատկերացում է տալիս Մ. Ս. Կագանը[58]: Նա դիտարկում է արժեքի ռեֆլեքսիվ- հուզական և կարգավորիչ գործառույթները: Ըստ նրա՝ միջանձնային հարաբերությունները ուղղորդվում, կողմնորոշվում և կարգավորվում են արժեհամակարգի միջոցով:

Ըստ Մ. Ս. Կագանի՝ արժեքային հարաբերությունները, որպես ամբողջականություն, ունի իր ներքին բովանդակությունն ու ձևը, որն արտահայվում է անձի հոգեբանական զարգացման ընթացքում (աղյուսակ 1):

[57] Социокультурные ценности и адаптационные механизмы их использования в системе гуманитарной подготовки в СПШ специалистов нового поколения / Рос. акад. образования. Ин-т сред. проф. образования. - Казань : ИСПО РАО, 1999. - 103 с.
[58] Каган М. С. Философская теория ценностей.- “Петрополис”, 1997.-205с

Աղյուսակ 1.

Արժեքային հարաբերությունների կառուցվածքը և բովանդակությունը



Այստեղից հետևում է, որ արժեքային կողմնորոշումների ներքին բովանդակությունը պայմանավորված է աշխարհաճանաչողական-իմաստային ընկալմամբ, որտեղ ձևավորվում է կոնկրետ արժեքի իմաստը, իսկ նրա ձևը՝ հոգեբանական գործընթաց է, որում արժեքը կառավարվում է գիտակցությամբ:

Ենթարկվելով տարբեր սոցիալ-մշակութային միջավայրերի ներգործությանը՝ արժեքային հարաբերությունները գնահատվող սուբյեկտի և արժեքների կրող օբյեկտի միջև կարգավորվում են երկու մակարդակներում՝ հոգեբանական և աշխարհաճանաչողական երկկողմանի հակադարձ կապերով:

Համանման տեսակետներ արտահայտվում է Ն. Ա. Աստաշովայի աշխատություններում, որտեղ արժեքը դիտարկվում է բազմամակարդակ համակարգի տեսքով, որի բաղադրատարրերն են իդեալը, նորմը, սկզբունքը, բաղադրատարրը, նպատակը, նշանակությունը[59]:

Այսպիսով՝ դիտարկելով «արժեք» հասկացության փիլիսոփայական և աքսեոլոգիական հիմքերը՝ նշենք, որ «արժեք» հասկացության էությունը, ընկալումը պատմամշակութային զարգացման ընթացքում տաբեր կերպ է իմաստավորվել

[59] Асташова Н.А., Учитель: проблема выбора и формирование ценностей. – М.: Московский психолого-социальный институт; воронеж: Издательство НПО «МОДЭК», 2000. – С. 83.

փիլիսոփայական ուղղություններում, որոնք հետագայում մեթոդաբանական հիմք են հանդիսացել «արժեք» հասկացության աքսեոլոգիական մեկնաբանման գործում:

1.3. «Արժեք» հասկացության հոգեբանամանկավարժական հիմքերը

«Արժեք» եզրույթի տարբեր մեկնաբանում են տվել ինչպես վերածննդի դարաշրջանի, այնպես էլ նոր և նորագույն ժամանակների մանկավարժներ, փիլիսոփաներ: Նրանք կարևորել են մի քանի գործոններ, որոնք հանգեցնում են սոցիալական և մշակութային արժեքների զարգացմանը: Մ. Մոնտենը բարձրագույն արժեք է համարել գիտելիքը, որը պետք է ծառայի մարդուն, ուղղորդի նրան, և բարոյական մաքրությունը: Նա գտնում էր, որ յուրաքանչյուր մարդ իր մեջ արտացոլում է ողջ մարդկության բնությունը[60]: Անգլիացի փիլիսոփա Ջոն Լոկը որպես բարձրագույն արժեք է համարել գիտելիքը, դաստիարակությունը:

Արժեբանական հիմնախնդիրներին են անդրադարձել նաև մանկավարժական մտքի ներկայացուցիչները՝ Յան Ամոս Կոմենսկին[61], Ի. Հենրիխ Պեստալոցցին, Ի.Ֆ. Հերբարտը, Ա. Դիստերվեգը[62], Ն. Կ. Հարությունյանը[63], Լ.Վ. Թորգոմյանը[64], Ռ.Ա. Մարդոյանը[65] և այլք:

Նրանց պնդմամբ, անձի համակողմանի և ներդաշնակ ձևավորման և զարգացման գործում բարձրագույն արժեք դիտարկվում է կրթությունը, գիտելիքը, դաստիարակությունը, անձի ազատությունը:

Կ. Դ. Ուշինսկին, կարևորելով կրթության շարունակականության գաղափարը, որպես բարձրագույն արժեք՝ դիտել է մարդկային բանականությունը, կրթությունը:

---

[60] Сластенин В.А., Чижакова, Г.И. Введение в педагогическую аксеология: М.: Академик,-2003, 185с.

[61] Коменский Ян Амос: Учитель учителей («Материнская школа», «Великая дидактика» и др. произв. с сокращ.). М.: Карапуз, 2009, 288 с.

[62] Краткая философская энциклопедия. - М.: Изд. группа «Прогресс».- «Энциклопедия»,-1994. - 576с.

[63] Հարությունյան Ն.Կ., Աբրահամյան, Ա. Վ., Մկրտչյան Ս. Շ., Հայ մանկավարժական հանրագիտարան, Հայ մանկավարժական մամուլ, Երևան, 2010թ.

[64] Թորգոմյան Լ.Վ. Մանկավարժական արժեբանության հիմունքներ: Ուս. ձեռնարկ / Լ.Վ.Թորգոմյան ; Խմբ.՝ Գ.Հ.Հակոբյան. – Եր. : Ան-Ջոն հրատ., 2011. – 160 էջ:

[65] Мардоян Р. А. Современные концептуальные основы педагогической аксиологии, дисс. На соискание доктора пед. наук, Ереван, 2012 г., 390 стр.

Ըստ նրա՝ կրթության արժեքը անձի կատարելագործումն է, ինքնազարգացումը[66]:

Ազատ դաստիարակության ջատագով Ժ.Ժ. Ռուսոն, որպես բացարձակ արժեք դիտարկելով անձի ազատությունը, արժևորում էր բնության հետ ներդաշնակ զարգացումը, ինչի արդյունքում տեղի էր ունենում ոչ միայն գիտելիքների յուրացում, այլև բարոյական արժեքների դաստիարակում: Ըստ Ժ. Ժ. Ռուսոյի՝ դաստիարակությունը արժեքի իմաստ է ստանում, երբ հենվում է անհատի բնական զարգացման վրա[67]:

Ի. Հ. Պեստալոցցին գտնում էր, որ կրթությունն արժեք է, եթե այն նպաստում է անձի ազատության և արժանապատվության ձևավորմանը[68]:

Հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ արժեքը որպես բարոյագիտական, մանկավարժական հասկացություն, դիտակվել է ամենատարբեր տեսանկյուններից և պատմական տարբեր ժամանակաշրջաններում. տիրող իրավիճակները իրենց ազդեցությունն են ունեցել արժեքների ստորադասության վրա: Ինչպես նշում է Լ. Թորգոմյանը. «Արժեքի գաղափարի աստիճանական էվոլյուցիան համընկնում է հայ իմաստասիրական և մանկավարժական մտքի զարգացման հետևյալ շրջանների հետ, որոնք պայմանականորեն կարելի է դասակարգել մի քանի փուլերի՝

- հեթանոսական և իմաստասիրական մտքի զարգացման,
- քրիստոնեության ընդունման և տարածման,
- գրերի գյուտին հաջորդած իմաստասիրական մտքի ու դպրության զարգացման /ոսկեդար/
- միջնադարյան եկեղեցական-վանական դպրոցի կամ և իմաստասիրության ձևավորման ու զարգացման,
- հայկական վերածննդի,
- գիտական մանկավարժության և իմաստասիրական մտքի զարգացման /17-21-

[66] Ушинский К. Д. О необходимости сделать русские школы русскими // Педагогические сочинения: В 6 т. М., 1988. Т. 2. С. 362–363

[67] Педагогика: учеб. пособие / под ред. П. И. Пидкасистого. — 2-е изд., П24 испр. и доп. — М. : Издательство Юрайт ; ИД Юрайт, 2011. - 502 с

[68] Песталоцци И.Г. Избранные педагогические произведения: В 3-х т. / Под ред. М.Ф. Шабаевой. Т.2. - М.: Изд-во АПН РСФСР, 1963. - 563 с.

րդ դդ.»[69]:

Ռ. Ա. Մարդոյանը, մանկավարժական արժեբանության ժամանակակից հայեցակարգային հիմքերը դիտարկելիս, նշում է, որ գործող տարբեր դաստիարակչական համակարգերը կարելի է դասակարգել երկու հիմնական տիպերի՝ ըստ արժեքային համակարգերի.

ա. **ավանդական դաստիարակչական համակարգ** (առավել բնորոշ է գենետիկորեն էթնոկիր ազգերին), որը հենվում է սոցիալական նորմերի, հասարակության կողմից անձին ներկայացվող պահանջների հասարակական արժեքային համակարգի վրա, որի արդյունքում կարգավորվում է անձի վարքագիծը: Այս համակարգին բնորոշ է այնպիսի մանկավարժական նորմեր, որտեղ առավել մեծ տեղ են զբաղեցնում հասարակական արժեքները:

բ. **հումանիստական դաստիարակչական համակարգ**, որն առավել կարևորում է անձի անհատական և հեռանկարային զարգացումը: Այս դեպքում անձն ինքն է սոցիալական տարբեր ինստիտուտներում ձեռք բերում անձնային արժեքներ, կողմնորոշումներ, վարքագծային դրսևորումներ, որոնք փորձում է ներդաշնակ համադրել հասարակական արժեքների հետ[70]:

Ժամանակի ընթացքում, մասնավորապես ներկայումս, այս երկու համակարգերը գտնվում են հակասությունների մեջ: Մանկավարժության գերակա հիմնախնդիրներից է՝ գտնել այն արդյունավետ, փոխլրացնող համակարգը, որը մի կողմից կփորձի պահպանել ավանդականը՝ պահպանելով ազգային արժեքները, մյուս կողմից, դիմագրավելով գլոբալիզացման արդյունքում ձևավորված արժեքներին, հումանիստական ուղղվածությամբ փորձի դիմագրավել ժամանակի մարտահրավերներին:

«Արժեք» հասկացության ամբողջական ընկալման համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև «արժեք» հասկացության հոգեբանական հիմքերին:

«Արժեք» հասկացության նորովի մեկնաբանման մեթոդաբանական հիմք են հանդիսանում անձի ձևավորման հոգեբանական տեսությունները և դրանց

[69] Թորգոմյան Լ.Վ. Մանկավարժական արժեբանության հիմունքներ: Ուս. ձեռնարկ / Լ.Վ.Թորգոմյան ; Խմբ.՝ Գ.Հ.Հակոբյան. – Եր. : Ան-Ջոն հրատ., 2011. – 160 էջ:

[70] Мардоян Р. А. Современные концептуальные основы педагогической аксиологии, дисс. На соискание доктора пед. наук, Ереван, 2012 г., 390 стр.-185 стр

զարգացումը: Ուշագրավ են Լ.Ս. Վիգոտսկու տեսակետները[71]:

«Արժեք» հասկացության հոգեբանական հիմքերը դիտարկելով՝ մենք կառաջնորդվենք նրանով, որ անձի զարգացումը պայմանավորված է մանկավարժական արժեհամակարգով, որը մեկ միասնական ամբողջություն է:

Սոցիալ-տնտեսական, հոգևոր ոլորտում առկա փոփոխությունները, անցյալի և ներկա արժեքների հակասական հարաբերակցությունը արժեքների ստորակարգությունում թելադրում են վերաձևավորումներ, ինչն անխուսափելիորեն ազդում է կրթության զարգացման վրա:

Արժեքների հետազոտության սոցիալ-հոգեբանական տեսանկյունների, անձի սոցիալականացման գործընթացում արժեքների դերի մասին իրենց աշխատություններում անդրադարձել են Ն.Ս. Մորովան[72], Ա.Վ. Մուդրիկը[73], Ա.Ա. Բոդալևը[74], Ա.Վ. Բրուշլինսկին[75], Օ.Ս. Գազմանը[76] և այլք:

Մի շարք հետազոտողներ «արժեք» հասկացությունը բնութագրում են որպես որոշակի հատկանիշների ամբողջություն, որը բնորոշ է հասարակական գիտակցության ձևերին՝ նշանակություն, անհարժեշտություն, իրավանորմատի-վություն, օգտակարություն, նպատակադրում: «Արժեք» հասկացությունը ներառում է նյութական և հոգևոր երևույթների մեծ շրջանակ և պայմանավորում է դրանց:

Հասարակության արժեքային կողմնորոշիչների բացահայտման համար անհրաժեշտ է արժեքների համակարգում գիտականորեն հիմնավորված դասակարգում:

Ռուս գիտնական Ա. Ց. Գարմայևը արժեքների կառուցվածքում ներառում է՝ սեփական արժեքները (բարությունը, գեղեցկությունը, օգուտը, ճշմարտացիությունը, ազատությունը, բարեկրթությունը, սոցիալական հավասարությունը և այլն), իդեալները (մարդու իդեալ, դպրոցներ, տրանսպորտային միջոցներ), վարքագծի

---

[71] Выготский Л.С. Сборник сочинения Т.4. - М., 1983.– С. 385

[72] Морова, Н.С., Шамсутдинов И.Г. Содержание и особенности социально-педагогической работы со студентами в России и за рубежом: учебно-методическое пособие // Н.С. Морова, И.Г. Шамсутдинов. - Казань: Изд-во "Печать-Сервис-XXI век", 2011. - 72 с.

[73] Мудрик А. В . Социальная педагогика : учебник для студ . высш. учеб . за- ведений / А. В . Мудрик. - 6-е изд., перераб . и доп . - М. Издательский центр «Академия», 2007 . - 224 с .

[74] Бодалев А.А. Личность и общение. Международная педагогическая академия, 1995 г. - 328 с.

[75] Брушлинский А.В. Проблемы психологии субъекта. Москва. Институт психологии РАН. 1994 г., 109 с.

[76] Газман О.С. Самоопределение. Тезаурус для учителей и школьных педагогов.-М.: Наука, 1995.-174с.

սկզբունքները, կոնկրետ նպատակները[77]:

Ակադեմիկոս Ա.Պ. Բելյաևան առանձնացնում է արժեքների հետևյալ խմբերը[78].

- **հենքային արժեքներ՝** կյանք, կրթություն, բնություն, մշակույթ, աշխատանք, ազատություն, գործունեություն և այլն,
- **հոգևոր արժեքներ՝** աշխարհի նկատմամբ վերաբերմունք, արդարություն, լավատեսություն, բարություն, հուսալիություն, անվտանգություն, համարձակություն ինքնատիրապետում, ինքնահաստատում,
- **բարոյական արժեքներ՝** քաղաքացիություն, հայրենասիրություն, առողջության պահպանում, առողջ ապրելակերպ, մարդկային վերաբերմունք անձի հանդեպ, անհատի բազմակողմանի մասնագիտական զարգացում, սոցիալական պատասխանատվություն, հարգանք սեփական անձի և ուրիշների նկատմամբ,
- **մասնագիտական արժեքներ՝** աշխատելու պատրաստվածություն, ընդհանուր և մասնագիտական կրթվածություն, բարեկրթություն, սոցիալական վարքագիծ, մասնագիտական աճ և այլն:

Վ.Պ. Տուգարինովի կարծիքով սոցիալական միջավայրում բոլոր արժեքներն առաջադրում են մարդիկ՝ ելնելով կյանքի իրական պայմաններից, և այդ իսկ պատճառով դրանք ունեն միանգամայն երկրային ծագում ու նշանակություն[79]:

Ս.Ֆ. Անիսիմովը, արժեքային կողմնորոշումները կապելով օբյեկտիվության և շրջապատող իրականության նկատմամբ մարդու գործնական հարաբերության հետ, ընդգծում է, որ շրջապատի առարկաները և երևույթները մարդկանց աչքում արժևորվում են այն դեպքում, եթե բավարարում կամ չեն բավարարում նրանց որոշակի նյութական և հոգևոր պահանջմունքները[80]:

Ըստ Ս.Լ. Ռուբինշտեյնի՝ «Արժեքները առաջնային չեն: Նրանցից չէ, որ պետք է սկսել վերլուծությունը, նրանք մարդու և աշխարհի փոխհարաբերության արդյունք են՝ արտահայտելով այն, ինչ կա աշխարհում, միավորելով այն, ինչ ստեղծում է

[77] Гармаев А.Ц. Этапы нравственного становления ребенка.-М.; Педагогика,1991.-87с.
[78] Беляева А.П. Методологияи теория профессиональной педагогики.-СПБ.: Ин-т профтех образования РАО, 1999.- 480с.
[79] Тугаринов В. П. Избранные философские труды, Л.: Издательство Ленинградского университета. 1988.—344 с.
[80] Анисимов С. Ф. Духовные ценности: производство и потребление. — М.: Мысль, 1988. — 255 с. էջ 48-52:

մարդը պատմության ընթացքում, և այն, ինչ կարևոր է մարդու համար»[81]:

Ըստ Դ. Ա. Լեոնտևի՝ «արժեք» հասկացությունը հոմանիշ է այնպիսի հասկացությունների, ինչպիսիք են՝ իմաստը, նշանակությունը: Այսպես, նրա բնութագրմամբ արժեքը հոգեբանական երևույթ է դառնում այն դեպքում, երբ ձեռք է բերում անձնային բնույթ[82]:

Այսպիսով՝ անձի աշխարհայացքը ենթադրում է իր կառուցվածքում արժեքների ամբողջականության առկայություն:

Որոշ հոգեբան-հետազոտողներ նշում են, որ որևէ օբյեկտի նկատմամբ արժեքային վերաբերմունքի հիմքում մարդու պահանջմունքները, հույզերը, զգացմունքները, ապրումներն են:

Արժեքները բնույթով սոցիալական են և ձևավորվում են հասարակական, անհատական գործունեության ընթացքում որոշակի պատմական-հասարակական հարաբերությունների շրջանակում:

Կարևորելով այդ հանգամանքը՝ Լ. Թորգոմյանը դիտարկում է «արժեք» հասկացության մի քանի նշանակություններ՝

- երևութների և առարկաների հատկանիշներ, որոնց հիմքում ընկած են գործնական և հուզական հարաբերություններ գնահատվող առարկաների և երևույթների նկատմամբ,
- բարոյական հասկացությունների բնութագրեր, այդ թվում նաև մարդու հոգեբանական բնութագիրը,
- սոցիալական երևույթների որակումներ, որոնք բնորոշում են մարդկանց միջև առկա հարաբերությունները[83]:

«Արժեք» հասկացությունը օգտագործվում է բնութագրելու համար մարդու հարաբերությունը աշխարհի հետ՝ ինչպես բանական, այնպես էլ զգայական առումներով: Եթե Ա. Ս. Կարմինի կարծիքով «արժեքը» ամբողջական տեսքով «սուբյեկտի համար օբյեկտի նշանակությունն է», ապա հոգեբանական

---

[81] Рубинштейн С. Л. Основы общей психологии: В 2 т. Т. I.—М.: Педагогика, 1989. - 488 с.

[82] Леонтьев Д. А. Ценность как междисциплинарное понятие: опыт многомерной реконструкции // Современный социо-анализ: сборник работ авторов, получивших гранты Московского отделения Российского научного фонда и Фонда Форда. VI вып. М., 1996, с. 5-23.

[83] Թորգոմյան Լ.Վ. Մանկավարժական արժեբանության հիմունքներ: Ուս. ձեռնարկ / Լ.Վ.Թորգոմյան ; Խմբ.՝ Գ.Հ.Հակոբյան. – Եր. : Ան-Ջոն հրատ., 2011. – 160 էջ, էջ 25-26:

մակարդակում «արժեքը» գոյություն ունի արժեքային վերաբերմունքի ձևով՝ օբյեկտի արժեքների որոշում՝ սուբյեկտի կողմից[84]:

Այսպիսով՝ արժեքը կարծես բաշխված է մարդու և շրջապատող աշխարհի միջև, այն գոյություն ունի միայն նրանց հարաբերություններում, միջանձնային հաղորդակցման ընթացքում:

Ակնհայտ է, որ անձի արժեքային ոլորտը բազմաշերտ, բազմամակարդակ, տարակազմ համակարգ է՝ տարբեր բաղադրիչներով:

Այսպիսով, արժեքները դիտվում են որպես բարդ, այլատարր երևույթներ, դրսևորումներ, որոնք ենթարկվում են հոգեկան երևույթների ուսումնասիրման հիմնական սկզբունքներին:

Արժեքների հիմնախնդրի հետազոտման գործընթացում առանձնացվում է սոցիալական և անձնային արժեքներ, ընդ որում պետք է փաստել, որ շատ հաճախ դրանք կարող են չհամընկնել, այլ դրսևորվեն առանձին-առանձին՝ կախված ամենատարբեր գործոններից, հանգամանքներից:

Հիմնական արժեքային կողմնորոշումների դասակարգման տեսական վերլուծությունը Ս.Ս. Բուբնովին թույլ տվեց արժեքների և անձի արժեքային կողմնորոշումների համակարգում առանձնացնել ստորակարգության երեք մակարդակ[85]

- **վերացական արժեքներ**՝ հոգևոր, սոցիալական, նյութական,
- **արժեքներ**, որոնք ամրապնդվում են մարդու կենսագործունեության ընթացքում և դրսևորվում որպես անձի որակ,
- արժեքներ, որոնք նպաստում են անձի վարքագծի ձևավորմանը:

Արժեքների տեսության զարգացման գործում կարևոր ներդրում ունի հետազոտող Մ. Ռոկիչը[86]: Ըստ Մ. Ռոկիչի՝ անձի արժեքները բնութագրվում են հետևյալ հատկանիշներով.

- արժեքներն ունեն մշակութային, հասարակական և անձնային բնույթ,
- արժեքների ընդհանուր քանակը, որը հանդիսանում է մարդու

[84] Кармин А.С. Основы культурологии (морфология культуры). Санкт-Петербург, Изд-во "Лань", 1997. - 512 с.
[85] Бубнова С.С. Ценностные ориентации личности как многомерная нелинейная система .- М., изд. “ИП РАН”, 1998.-24 с.
[86] Рокич М. Природа человеческих ценностей. М.; Нью-Йорк, 1973. - 276 с

սեփականությունը, համեմատաբար փոքր է,

- բոլոր մարդիկ կրողն են որոշակի արժեքների, տարբեր մակարդակներում
- բոլոր արժեքները հանդես են գալիս համակարգի ձևով:

Մենք կարծում ենք, որ համամարդկային արժեքների համակարգում կարելի է առանձնացնել՝

- առարկայական արժեքներ, որոնք մարդու կենսագործունեության կարևոր և անմիջական բաղադրիչն են, որոնց շնորհիվ աշխարհը ոչ միայն ճանաչվում նաև վերապրվում է,
- սուբյեկտիվ արժեքներ, որոնք արտահայտվում են որոշակի պատմական փուլում հասարակության կողմից մշակված ավանդույթների, իդեալների, սովորույթների, կանոնների ձևով:

Այսպիսով՝ արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացը կոչված է վերափոխելու անձի իրավիճակային հարաբերությունները արտաքին կենսափորձի արդյունքում՝ աշխարհճանաչմանը զուգընթաց (աղյուսակ 2):

Աղյուսակ 2.

Սուբյեկտի անձնային արժեհամակարգի ձևավորումը



Հասարակության պատմական զարգացման ընթացքում արժեքների համակարգերը ձևավորվում և փոփոխվում են: Նրանց նշանակությունը չի սահմանափակվում այն սոցիալական հասարակության գոյության ժամանակաշրջանում, որում առաջացել են այդ արժեքները:

Խոսելով արժեքների պատմական զարգացման մասին՝ մենք կարևորում ենք համամարդկային, սերնդեսերունդ փոխանցվող արժեքները, որոնք բնորոշում են անձի բարոյամշակութային ոլորտը:

Այսպիսով, բոլոր արժեքները կարելի է պայմանականորեն բաժանել երեք խմբերի.

• **համամարդկային արժեքներ**, որոնք իրենց մեջ ներառում են ամբողջ աշխարհը, նրա նշանակությունը մարդու կյանքի համար: Համամարդկային արժեքների համար բնութագրական է փոխկապակցվածությունը, նրանք կրում են վերպատմական բնույթ, նրանց յուրացումը իրականացվում է տարատեսակ գործունեությամբ,

• **հասարակական արժեքները**, արժեքների համակարգերը, նորմերը, սոցիալական խմբերի վարքագծի կանոնները բնութագրում են գիտակցության որոշակի մաս՝ կախված բնության յուրացման և պահպանման մարդու գործունեությունից,

• **անձնային արժեքներ**, յուրաքանչյուր մարդու արժեքների համակարգը:

Մենք կարծում ենք, որ համամարդկային արժեքների համակարգը կազմավորվում է ազգային, անձնային, մշակութային, հոգևոր, բարոյական, արժեքների համակարգերի առաջընթաց զարգացման գործընթացում և առաջնային է դառնում փոխակերպվող հասարակության ներկա ժամանակաշրջանում, և դա տեղի է ունենում պատմական ժամանակի խիստ արագացված պայմաններում, ինչն ամնիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա:

Ինչպես նշում է Ս. Յանավիչուսը՝ արժեքները գոյություն ունեն սուբյեկտների գործունեությունում, ինչը հանգեցնում է միջսուբյեկտային հարաբերությունների ձևավորմանը՝ բարոյամշակութային սկզբունքների, նորմերի, արժեքների հենքով[87]:

Բարոյամշակութային արժեքների յուրահատկությունը կայանում է նրանում, որ նրանք արտահայտում են սուբյեկտի վերաբերմունքը որոշակի օբյեկտի նկատմամբ: Բարոյական արժեքները թափանցում են մարդկանց կենսագործունեության բոլոր ոլորտները՝ բնութագրելով սուբյեկտների ուղղակի կամ անուղղակի փոխազդեցության տարբեր կողմերը, հարաբերությունների

[87] Янавичус С. Соотношение экологических и нравственных ценностей и их влияние на экологическую культуру // Проблемы формирования современной экологической культуры. –Вильнюс, 1987.- 62-74с

բովանդակությունը և ուղղվածությունը:

Անհրաժեշտ է նշել, որ արժեքները մշակույթի կարևոր բաղադրատարրերն են, քանի որ մշակույթը մարդու գործունեության արդյունքն է և համամարդկային արժեք է: Մշակույթում է խտացած ազգայինը, բարոյականը, գեղագիտականը և իրավմամբ մշակույթը, որոշելով կյանքի ձևը, որակը, մարդկանց վարքագիծը, աշխարհընկալումը, արժևորում է մարդկային հասարակության գոյությունը և պայմանավորում նրա հետագա կայուն զարգացումը: Յուրաքանչյուր մշակույթ տարբերվում է իր արժեքների համակարգով: Իր կենսագործունեության ընթացքում մարդը չի ընտրում արժեքները, չի ազդում արժեքների վրա, այլ ընդունում է դրանք և հետևում, առաջնորդվում դրանցով: Որոշակի հարաբերությունների, գործունեության տարբեր ձևերի արդյունքում համամարդկային արժեքների հենքով ձևավորվում է անձի արժեհամակարգը, որը, ինչպես գտնում են գիտնականները, մեծապես պայմանավորված է ազգային պատկանելիությամբ: Սոցիալական գործոնների ազդեցությամբ անձի արժեհամակարգը որոշակի փոփոխություններ կարող է կրել, վերաիմաստավորվել: Անձի կողմնորոշումը համամարդկային արժեքներին աստիճանական գործընթաց է, քանի որ արժեքներ չի կարելի պարտադրել, այլ դրանք յուրաքանչյուր մարդ ինքն է ընտրում, իմաստավորում՝ իր մեջ կրելով մարդու և իրականության յուրացման գնահատականը[88]:

Այսպիսով՝ մեր հետազոտության արդյունքում հանգեցինք այն եզրահանգման, որ անձի զարգացման և ձևավորման տեսանկյունից առաջնային է արժեքների ընտրության հիմնախնդիրը, որի հիմքում ընկած է համամարդկային, հասարարկական և անձնային արժեքների արդյունավետ համադրումը:

[88] Головаха Е. И. Жизненная перспектива и ценностные ориентации личности // Психология личности в трудах отечественных психологов. - СПб.: Питер, 2000. - С.256-269.

1.4. Գլոբալացման պայմաններում ազգային և համամարդկային արժեքները սոցիալական տարբեր ինստիտուտներում

21-րդ դարի ժամանակակից մարտահրավերներից մեկն էլ գլոբալացման հիմնախնդիրն է, որը տրամաբանական սերտ աղերսներ ունի կրթական համակարգի ապագա մոդելի հետ: Գլոբալացման որոշ բաղադրիչների ներդաշնակ, համապատասխան ներդրումը կրթական համակարգ կապահովի հետագա կրթական համակարգի շարունակական զարգացումը, նոր նվաճումների ձեռքբերումը, մարդկային ներուժի իրատեսական օգտագործումը: Երբ փորձենք համեմատել տարբեր զարգացած երկրներում գլոբալացման ներազդեցությունը բարձրագույն դպրոցի հետագա զարգացման վրա, ապա կնկատենք որոշ ընդհանրական գծեր, որոնք դրսևորվում են բոլոնյան գործընթացի համատեքստում: ՀՀ-ում նույնպես այդ ներգործությունը ակնառու է: Հասկանալի է, քանի որ ցանկացած պետություն, բացի կրթական ոլորտից, ներազդվում է նաև գլոբալացման արդյունքում մնացած բոլոր ոլորտներում՝ քաղաքական, տնտեսական, մշակութային, սոցիալական միջավայրի և այլն: Այս ներգործման արդյունքում է, որ երբեմն դրսևորվում է գլոբալացման հակասական դրսևորումները՝ որոշ առումով վտանգելով ազգային արժեքային համակարգը, ազգային մտածելակերպը, հոգեբանական առանձնահատկությունները, մշակույթը, ավանդույթները, սովորույթները, վարքագծային առանձնահատկությունները: Գլոբալացման հիմնական նպատակը աշխարհի միասնական ընկալման մեջ է: Գլոբալացումը մարդկության էվոլյուցիոն մի փուլ է՝ ***սոցիալական առաջընթաց***, որն աշխարհում թուլացնում և մեղմացնում է տնտեսական, կրթական, մշակութային սահմանները, որի արդյունքում մարդիկ իրենց առավել ապահով և ազատ են զգում: Ներկայումս գլոբալացումն առավել խորքային տնտեսական, քաղաքական, մշակութային դրսևորումներ է ենթադրում՝ ինտեգրում համաշխարհային տնտեսություն և ճյուղավորված շուկայի ձևավորում՝ աշխատանքի բաժանում, միգրացիա, մոլորակի կապիտալի կենտրոնացում, աշխատուժի բաշխում: Վերոթվարկյալ գործընթացները շարունակական և արմատային, համակարգային փոփոխություններ են

առաջացնում, որոնք ներգործում են հասարակական կյանքի բոլոր ոլորտներին[89]: Գլոբալացման արդյունքներն ու հետևանքները տարբեր ոլորտների մասնագետները վերլուծում են յուրովի: Օրինակ՝ պատմաբանները կարծում են, որ գլոբալացումը մարդկության պատմական կապիտալիստական զարգացման փուլերից մեկն է: Տնտեսագետները գտնում են, որ դա անխուսափելի փաստ է, քանի որ այն հնարավորություն է տալիս տնօրինելու ֆինանսական շուկան և հնարավորինս կայունացնելու կտրուկ փոփոխությունները: Քաղաքագետները կարծում են, որ դա միակ ճանապարհն է մարդկության հետագա զարգացման և ժողովրդավարական գործընթացների տարածման: Մշակութաբանները կարծում են, որ դա լավագույն միջոցն է համաշխարհային մշակութային տարածք ձևավորելու, համամարդկային արժեքային համակարգ ստեղծելու համար: Գոյություն ունեցող տեղեկատվական-տեխնոլոգիական տեսակետները կարելի է դասդասել երկու մոտեցումներով՝ ***ա. քաղաքական***, ***բ. տնտեսական***: Ներկայումս գլոբալիզացիան բազմամակարդակ և բամակողմանի էական, որակական փոփոխությունների բարդ, բաց համակարգ է, որտեղ կարևորվում են

- գլոբալ հաղորդակցման տարբեր ձևերն ու մեթոդները (ռեակտիվ ավիացիա, հեռուստատեսություն, բջջային հաղորդակցում, համացանց), համաշխարհային տնտեսության և շուկայի ձևավորման հիմնախնդիր,
- համաշխարհային քաղաքականություն,
- համաշխարհային մշակույթ,
- համաշխարհային լեզու և գիտություն,
- համաշխարհային արժեքային համակարգի ձևավորում՝ կյանքի, երևույթների նկատմամբ ընդհանրական մոտեցումներով:

Վերը թվարկած գլոբալացվող բազմագործոն, բարդ համակարգի կրողն ու փոխանցող ինստիտուտներից մեկը կրթական համակարգն է:

- Կրթական համակարգը ներգործվում է համաշխարհային տնտեսությանը բնորոշ նեոլիբերալ գաղափարախոսությամբ,
- զարգացող նորագույն տեղեկատվական, կրթական տեխնոլոգիաները, որոնք

[89] Флоренская Т.А. Диалог в практической психологии: наука о ду- ше. М.: Владос, 2001. 208 с.

հնարավորություն են տալիս համաշխարհային մակարդակում հաղորդակցվելու առանց տարածքային սահմանների, սահմանափակումների,

- կրթական միասնական տարածքը հնարավորություն է տալիս նոր համաշխարհային բարոյամշակութային արժեքերի ձևավորման, որոնց հիմքում համամարդկային արժեքային համակարգն է: Հիմնական կարգախոսն է՝ ոչ թե ուժեղի, հարուստի գերակայությունը թույլի, աղքատի նկատմաբ, այլ հումանիզմի, հանդուրժողականության հարգանքի, փոխհամագործակցության, մշակութային փոխհարստացման ձևավորումը: Ակնառու է, որ համաշխարհային մշակութային արժեքների շրջանակներում առավել գերակայողը դարձել են «ամերիկյան արժեքները», որոնք համաշխարհային լեզվի՝ /անգլերեն/ ներթափանցմամբ տարածվել են անձի սոցիալականացան բոլոր ինստիտուտներում և ոլորտներում, սոցիալական ագենտների գործունեության ընթացքում[90]:

Գլոբալացման արդյունքում ժամանակակից մարտահրավերներին դիմագրավելու համար անհրաժեշտ է դիտարկել հետևյալ մոտեցումները.

- ազատվել «պարտադրող» ավանդույթներից և ձևավորել փոփոխվող պահանջմունքներ նոր արժեքների նկատմամբ,
- կարծրատիպային մոտեցումների փոխարեն ցուցաբերել իրավիճակային դիրքորոշումներ շրջապատի, մարդկանց, հասարակական նորմերի նկատմամբ: Սկզբունքները, դիրքորոշումները չսահմանափակել ո՛չ քանակապես, ո՛չ էլ որակապես:
- Անընդհատ ձևավորել նոր մտքեր, և ամեն գնով փորձել դրանց հասնել:
- Փոփոխությունները տանել առանց զգացմունքային ճգնաժամերի, ցուցաբերել զգացմունքային կայունություն:
- Յուրաքանչյուր նոր պահ ախտորոշել, կանխորոշել ռիսկային գործակիցը:
- Ցանկացած փոփոխությունից հետո դնել նոր նպատակ, խնդիրներ և դրանք լուծել աստիճանաբար,
- Գործունեության ընթացքում անընդհատ ձգտել ինքնակրթության և ինքնակատարելագործման:

---

[90] Азбука нравственного взросления: методический материал / В.И. Петрова [и др.]. - СПб.: Питер, 2007. - 304 с.

Համաշխարհային գիտությունն ու մշակույթը, որպես բազմակառուցվածքային համակարգ, ունի տարածքային և կառուցվածքային առանձնահատկություններ:

Այս մակարդակում տարբեր աղերսներով փոխլրացվում են համամարդկային, մասնագիտական և հենքային, ազգային, անձնային արժեքային համակարգերը:

1. ***Համամարդկային արժեքային*** համակարգի կարգավորման համար իրավական-կանոնակարգող հիմք են հանդիսանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի, Համաշխարհային բանկի, Եվրոպական խորհրդի և այլ միջազգային կազմակերպությունների և կառույցների կողմից ներկայացվող միջազգային համաձայնագրերն ու օրենսդրական ակտերը, որոնք ձևավորում և կազմակերպում, կարգավորում են համաշխարհային միջազգային կրթական տարածքը: Թվարկված կառույցները փորձում են տարածաշրջաններում ինտեգրացիոն եզրեր գտնել, անհրաժեշտ պայմաններ ստեղծել տարբեր երկրների, ժողովուրդների կրթական, մշակութային համագործակցության համար: Այս մակարդակում որպես գերակայող, բացարձակ արժեք դիտարկվում են «մարդն» ու «կրթությունը»: Կարևորվում է մարդու իրավունքներն ու ազատությունը: Միջազգային կառույցների կողմից իրականացվող տարբեր գիտական, հետազոտական գործունեության ընթացքում առաջադրվում են տվյալ տարածաշրջանին բնորոշ պայմաններում անձի սոցիալականացման առանձնահատկություններին համապատասխան կանխատես-վող դրույթներ: Այդօրինակ աշխատանքներին ներգրավվում են տվյալ ոլորտներից մասնագետներ: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս առավել դիպուկ և տեղային ախտորոշել, ուսումնասիրել և ներկայացնել ազգային արժեքային համակարգը: Մասնավորապես կրթական բարեփոխումների արդյունքում ախտորոշվում է կրթական համակարգը, առաջադրվում են դասավանդման, ուսումնառության գնահատման, կազմակերպման նոր ձևեր և մեթոդներ, որոնք հնարավոր են մասնագիտական համապատասխան կոմպետենցիաների և մասնագիտական արժեքների հենքի վրա: Հարաբերակցությունը ուղղորդվում է համամարդկային արժեքներից դեպի մասնագիտական արժեքների տեղայնացում: Մասնագիտական շարժունակությանն ապահովում է կրթություն ամբողջ կյանքի ընթացքում՝ շարունակական ցկյանս կրթություն, որը նույնպես նպաստում նոր

մասնագիտական արժեքների ձևավորմանն ու պահպանմանը: Գլոբալացման արդյունքում առաջացող հակասությունները, հիմնախնդիրները հանգամանորեն քննարկվել են համեմատական մանկավարժության շրջանակներում իրականացվող Համաշխարհային կոնֆերանսներում, որտեղ Ժասիրա Դա Սիլվա Կոմարան, անդրադառնալով կրթական ոլորտում գլոբալացման տարբեր մշակութային ներգործության պայմաններում առաջացած հիմնախնդիրներին, առաջարկում է դրանք միավորել 3 խմբերում.

• ***Ասիմիլացիոն***–առաջարկում է հիմք ընդունել որևէ ազգի կրթությունն ու մշակույթը և մյուս տարածաշրջաններում կրթությունն ու մշակույթը ադապտացնել:

• ***Բազմամշակույթ***-առաջարկում է տարբեր մշակույթները դիտարկել առանձին, որտեղ յուրաքանչյուրը փորձում է պահպանել իր առանձնահատկությունները, եզակիությունը: Նման մոտեցումը սահմանափակում է լիարժեք ադապտացիայի, փոխներգործության և համագործակցության համար:

• ***Ներմշակութային***-Տարբեր մշակույթների փոխադարձ լրացում և համագործակցություն[91]:

Առաջարկված երեք տիպային մոդելներում համամարդկային և ազգային արժեքները գտնվում են որոշակի հարաբերակցության մեջ: Այսպես առաջին՝ ասիմիլացիոն մոդելում որևէ երկրի արժեքային համակարգը ընդունվում է գերակայող, իսկ մյուս երկրների ազգային արժեքային համակարգը պետք է ադապտացվի: Այս կողմնորոշմամբ հնարվոր են երկու մոտեցումներ՝ կամ տվյալ երկրի ազգային բարոյամշակութային արժեքային համակարգը աստիճանաբար «կլուծվի» այդ համակարգում: Հարմարման արագությունը պայմանավորված է տվյալ ազգի բարոյամշակութային արժեքային համակարգի կայունությունից, հենց իրենից ազգից, ազգի կառուվածքային միատարրությունից, որքանո՞վ է նա ուզում ադապտացվել, ընդունո՞ւմ է նոր առաջարկված ազգային արժեքները: Կամ տվյալ ազգը պահպանում է իր արժեքային բարոյամշակութային համակարգը: Այս դեպքում շատ դանդաղ և հակասական են ընթանում ասիմիլիացիոն գործընթացները:

[91] Постиндустриальный мир и процессы глобализации. //Мировая экономика и международные отношения. - 2008. - №3. - С. 93

Կարևոր են ոչ միայն ավագ սերնդի դիրքորոշումները, այլև առաջին հերթին՝ երիտասարդ սերնդի, քանի որ նրանք են ապագա ազգային, բարոյամշակութային էթնոկիրները:

Եթե դիտարկենք առաջարկվող երկրորդ մոդելը՝ բազմամշակույթ, ապա այն առավել իրատեսական է և շահեկան: Այս մոդելը առավել մեծ հնարվորություն է տալիս պահպանելու ազգային բարոյամշակութային արժեհամակարգը, քանի որ հնարավորություն է տալիս պահպանելու ազգային առանձնահատկություններն ու եզակիությունը: ***Բազմամշակութային մոդելը*** էվոլյուցիա անցած մոդել է եղել, քանի որ ԽՍՍՀ-ում եղել է այս փորձը, երբ համատեղ ապրել են տարբեր ժողովուրդներ, ազգեր, որոնք փոխադարձ հարգանքով են վերաբերել մյուսների արժեքային համակարգի նկատմամբ***: Ներմշակութային մոդելում*** առավել շատ դրսևորվում են արդեն ադապտացված գերակայող բարոյամշակութային արժեքները: Ներմշակութային մոդելի ձևավորմանը նպաստում է «ընտանիք» սոցիալական ինստիտուտը, որտեղ սկսվում և ամբողջ կյանքի ընթացքում շարունակվում է անձի սոցիալականացման գործընթացը: Ընտանիքում ձևավորվում են հենքային, հոգևոր, բարոյամշակութային արժեքները: Ներմշակութային մոդելում սոցիոլոգ Ա.Ինկելեսն առաջարկում է ենթամոդել. անալիտիկ մոդել: Նրա կարծիքով այս մոդելն հնարավորություններ է ստեղծում անձին ինտեգրվելու սոցիալական տարբեր ինստիտուտներ համեմատաբար հարմարված՝ առանց ցնցումների և կտրուկ տեղաշարժերի՝ յուրացնելով նոր արժեհամակարգը: Անալիտիկ մոդելի կառուցամասերն են՝

- մտածելակերպի, վարքագծային դրսևորումների, աստիճանական, պարբերաբար փոփոխություններ՝ անձի համար առանցքային, կարևոր արժեքները պահպանելով:
- Հանդուրժողական դիրքորոշում միջավայրում առկա բազմակարծության նկատմամբ, հարգանք և փոխընբռնում այլ արժեքների, կարծիքների, տեսակետների նկատմամբ:
- Կյանքի վեկտորիալ ուղղվածություն պահի, օրվա, ոչ թե անցյալի նկատմամբ;

Այս դեպքում նոր արժեքները ճկուն են դրսևորվում և վերաիմաստավորվում:

▪Հավատ կյանքի, վաղվա դրական առաջընթացային փոփոխությունների նկատմամբ:

▪Մասնագիտական ոլորտում աճ, ինքնագնահատականի համապատասխանեցում մասնագիտական առաջընթացին[92]:

Ազգային արժեքների ձևավորման առաջնային կառույցը ընտանիքն է, որտեղ ազգային արժեքները գերակայում են մնացած մյուս արժեքների նկատմամբ: Անձի սոցիալականացման ընթացքում՝ մյուս սոցիալական ինստիտուտներում՝ «կրոն», «մշակույթ», արժեքների հարաբերակցությունը փոփոխվում է, գերակայվում են հոգևոր, համակարդկային, մասնագիտական արժեքները: Այդ գերակայությունը կարող է դրսևորվել փոխլրացմամբ, եթե անձի անհատական հատկանիշները ներդաշնակվում են հասարակության մեջ ընդունելի բարոյամշակութային արժեքների հետ:

Սոցիալական յուրաքանչյուր ինստիտուտ բաց, գործուն համակարգ է, որտեղ կենսական, սոցիալական, քաղաքական, բարոյական, կրոնական արժեքների համակարգը դրսևորվում են երկու մակարդակում՝ ազգային և համամարդկային:

Մեր կարծիքով, ցանկացած սոցիալական ինստիտուտի գերակա խնդիրն է ազգային արժեքների պահպանումը, ազգային և համամարդկային արժեքների ներդաշնակումը, հայապահպան և հայակերտման գործընթացների ապահովումը: Իսկ դա հնարավոր է, եթե համապատասխան սոցիալական ինստիտուտում ազգային, մշակութային, բարոյական, ինքնության արժեքները փոխանցվեն միջսերնդային համագործակցությամբ:

[92] Карпова Ю. А. Инновации, интеллект, образование. – М.: Призма, 1998. – с. 93-94

ԳԼՈՒԽ 2.

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՐՈՅԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

2.1. 21-րդ դարի սոցիալ-տնտեսական, կրթամշակութային մարտահրավերները

21-րդ դարասկիզբը բնութագրվում է սոցիալ-տնտեսական, կրթամշակութային հիմնարար փոփոխություններով: Առաջավոր երկրները աշխարհի մակարդակով թելադրում են սոցիալ-տնտեսական մի շարք պայմաններ, որոնց դեպքում գրեթե անտեսվում են առանձին երկրների տեղային, սոցիալ-տնտեսական առանձնահատկություններն ու հիմնախնդիրները:

Համաշխարհային գլոբալացումը նոր հազարամյակի անցման, մարտահրավերներին հաղթահարելու ցուցանիշն է: Տնտեսական հիմնական ցուցանիշները սահմանվում են առաջավոր, զարգացած երկների կողմից: Դեռևս 18-րդ դարում նշմարվում էին նոր ժամանակների սոցիալ-տնտեսական ապագա մարտահրավերները, որոնց հիմնական նպատակը համաշխարհային շուկայական հարաբերություններում առավելագույն շահույթ ստանալն էր առանձին ազգային տարածաշրջաններից[93]:

Տարբեր ոլորտներում կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ ՀՀ-ը անմասն չի մնացել 21-րդ դարում առաջադրված այդ գործընթացներից: Այսօր իրականացվում են տնտեսական, քաղաքական և սոցիալական տարբեր բարեփոխումներ, որոնք ոչ բոլոր դեպքերում են ցանկալի արդյունք տալիս, սակայն դրանք թելադրված են ներկայիս շուկայական տնտեսակարգերով:

Այսօր առավել մտահոգիչ են պետության արտաքին պարտքի ցուցանիշները: Անընդհատ նվազող տնտեսական աճը թույլ չի տալիս ֆինանսավորել տնտեսության մի շարք ճյուղեր, որն իր հերթին արգելակում է ընդհանուր տնտեսության զարգացումը: Արդյունքում աճում է գործազրկությունը, սոցիալական

[93] Гринин Л. Е. Истоки глобализации: мир-системный анализ// Век глобализации. - 2011. № 1. - С. 80-94.

անապահովվածությունը, արտագաղթը և այլն: Օտար ներդրողները չեն շտապում ներդնել իրենց կապիտալը ՀՀ-ում, որը գոյություն ունեցող քաղաքական, տնտեսական, սոցիալական անկայունության հետևանքն է: Չնայած որ վերջին տարիներին ակտիվացել են հայկական տարբեր գաղթօջախներում բնակվող մեր հայրենակիցների ջանքերը՝ մայր Հայրենիքի տնտեսական, սոցիալական վիճակի առողջացման գործում:

Այսօր ՀՀ-ը կանգնել է տնտեսական գլոբալացման միտումների խաչմերուկում. մի կողմից ՌԴ գլխավորությամբ ստեղծվեց Եվրասիական տնտեսական միությունը, որին անդամակցում է նաև Հայաստանը, մյուս կողմից արևմտյան երկրները ջանում են իրենց կողմը ներգրավել ՀՀ:

Ժամանակակից աշխարհը վերածվել է միասնական առևտրային հարթակի, որում տարբեր երկրներ մրցակցում են միմյանց հետ՝ փորձելով դրսևորել գերակայություն: Առաքման ժամանակակից տեխնոլոգիաներն ու միջոցները հնարավորություն են տալիս արագ և արդյունավետ բավարարել սպառողների պահանջները: Սակայն շուկայում շատ արագ են փոխվում առաջարկ-պահանջակ հարաբերությունները[94]:

Խորհրդային կարգերի փլուզումը հանգեցրեց աշխարհի քաղաքական, տնտեսական իրավիճակի փոփոխմանը: Արդյունքում, գաղափարական տարաձայնությամբ պայմանավորված, շատ սահմաններ վերացան: Տարբեր երկրների միջև տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային ուղղակի շփումները ակտիվացան: Աշխարհի բոլոր անկյունները, բարձր տեխնոլոգիաների արդյունքում դարձան առավել հասանելի: Գլոբալացման արդյունքում ի հայտ եկան մի շարք մարտահրավերներ: Դրանցից կարող ենք նշել գլոբալ տնտեսական կոլապսի վտանգը, տեխնիկայից և էներգակիրներից կախվածությունը, մշակութային, դեմոգրաֆիկական, սննդային, տնտեսական մարտահրավերներ, համաշխարհային ահաբեկչություն և այլն: Այժմ դիտարկենք դրանք առավել մանրամասն:

---

[94] Яковец Ю.В. Глобализация и взаимодействие цивилизаций; Междунар. ин-т П. Сорокина-Н. Кондратьева. - 2-е изд., перераб. и доп. - М.: Экономика, 2003. - 411 с.

Գլոբալ տնտեսական ճգնաժամ: Տնտեսական, էկոլոգիական և տեխնածին վտանգների ցանկը բավականին լայն է: Զարգացած տնտեսական համակարգեր ունեցող երկրները (ԱՄՆ, Գերմանիա, Անգլիա, Չինաստան և այլն) կարող են մարդկության տնտեսական կայունության համար վտանգ ներկայացնել: Օրինակ՝ ԱՄՆ-ի ազգային արժույթի փոփոխությունները ուղղակիորեն իրենց ներգործությունն են թողնում համաշխարհային շուկայում տարբեր երկների տնտեսական ցուցանիշների վրա: ԱՄՆ-ի ներդրողները գրեթե բոլոր երկրներում ունեն իրենց ներդրումները, ազդեցությունը տեղական տնտեսական համակարգերի վրա: ՌԴ-ի էներգակիրների արտահանման խզումը մեծ հիմնահնդիրներ է առաջացնում Եվրոպայում: Ստացվում է, որ զարգացած երկրները տարաբնույթ կապերով փոխներգործում են զարգացող երկրների հետ: Պատահական չէ, որ 90-ական թթ.-ի տնտեսական ճգնաժամը անվանեցին «ասիական հարբուխ»: Ինչպես վիրուսն է վնասում միլիարդավոր մարդկանց առողջությունը, այնպես էլ տնտեսական ճգնաժամը ունակ է կործանելու համաշխարհային տնտեսությունը: Առանց սահմանների տնտեսությունն ունի բավականին մեծ հնարավորություններ, սակայն բավականին մեծ են նաև ռիսկերը:

Ժամանակակից աշխարում էականորեն աճում են միջազգային վճարային համակարգերը, համացանցային վճարային միջոցները, բջջային կապը: Սրա հետ մեկտեղ աճում է նաև դրանց աշխատանքի խափանումների քանակը: Մարդկությունը դժվար թե կարողանա հաղթահարել մասսայական էլեկտրոնային աղետները, երբ միլիարդավոր կապի և էլեկտրական միջոցներ միաժամանակ կարող են շարքից դուրս գալ:

Տեխնոլոգիական կախվածություն: Առաջին հայացքից էլեկտրական ցանցերում վթարները կարող են կաթվածահարել մարդկության կյանքը: Մասշտաբային էլեկտրական անջատումներ են տեղի ունեցել Կալիֆորնիայում, Ճապոնիայում, Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում: Նման անջատումների ժամանակ միանգամից կանգնում են մի շարք արտադրական գործընթացներ: Աշխարհը դառնում է իրականում տեխնոլոգիական միասնական համակարգ, սակայն փոքր պետություններն առավել շատ են տուժում այդ համակարգային

աղետներից:

Մենք առավել կախվածություն ենք ձեռք բերում հին և նոր էլեկտրոնային մեխանիզմներից, և որքան շատ են դրանք, այնքան մեծ է նրանց ռիսկայնության գործակիցը: Օրեցօր զարգանում են տեխնոլոգիական նորարարությունները, տարբեր տրանսպորտային միջոցները: Սակայն, զարմանալի չէ, որ դրանց արդյունքում չեն նվազում նաև գնացքների, օդանավերի վթարները: Տեխնիկան այնքան բարդ է և բազմաբնույթ, որ երբեմն դրանց ղեկավարումը դառնում է առավել դժվար գործընթաց: Աստիճանաբար անցում ենք կատարում համակարգչային կառավարմանը, որն էլ իր հերթին կարող է վտանգել մարդկային գործոնին: Այս հիմնախնդրով մտահոգված են գիտության տարբեր ոլորտներով զբաղվողները: Տեղեկատվական տարբեր աղբյուրներով մարդկային գիտակցության մեջ աստիճանաբար ներդրվում է այն գաղափարը, որ մարդկությունը կանցնի համակարգչային կառավարմանը, գիտակցմանը, վարքագծային դրսևորումներին, որը վտանգում է մարդ տեսակի ինչպես գոյը, այնպես էլ սոցիալական առանձնահատկությունները: Այսօր երիտասարդությունը իրեն չի պատկերացնում առանց համակարգչի, բջջային կապի, որը հանգեցնում է իրականության ընկալման աղավաղմանը:

Ժողովրդագրական մարտահրավեր: Աշխարհի շատ երկրների համար ակնհայտ է բնակչության կտրուկ տեղաշարժերը: Զարգացած երկրներում նկատվում է ծնելիության անկում, որի արդյունքում սրանում է տնտեսական և սոցիալ-հոգեբանական իրավիճակը: Այս իրավիճակը մասնակիորեն բարելավվում է տարբեր երկրներից փախստականների ներհոսքով: Արդյունքում՝ նոր հիմնախնդիրներ են ի հայտ գալիս՝ միջմշակութային, կրոնական, ազգային կոնֆլիկտներ: Այս ամենին անմասն չի մնացել նաև ՀՀ-ը:

ՀՀ-ում ծնելիության նվազումը համադրվում է մեծահասակների բարձր մահացության ցուցանիշներով, շատ հիվանդությունների երիտասարդացմամբ, ամուսնալուծությունների թվի աճով: Արդյունքում ծնելիությունը չի հավասարակշվռում մահացությամբ այն դեպքում, երբ աշխարհում, մասնավորապես մուսուլմանական երկրներում, արագորեն աճում է բնակչության թիվը:

Հարց է առաջանում, թե ինչու է դեմոգրաֆիական ցուցանիշը զարգացող երկրների համար վտանգ ներկայացնում: Դրա համար գոյություն ունեն մի շարք պատճառներ. ցամաքի կրճատումը հանգեցնում է գոյության միջոցների, բնական պաշարների կրճատմանը: Բնակչության թվի կրճատումը էականորեն ազդում է նաև տնտեսական բարեկեցության վրա. աշխատաշուկայում նկատվում է կադրային ռեսուրսի պակաս, ձեռնարկությունները ստիպված կրճատում են իրենց արտադրողականությունը բարձրորակ ինժեներների, կառավարիչների, որակյալ մասնագետների բացակայության պատճառով:

Բնակչության թվաքանակի պակասը առաջացնում է նաև երկրի անվտանգության խնդիր, որն առավել արդիական է ՀՀ-ի համար, երբ կրճատվում է ծառայողների, զինակոչիկների քանակը:

Մեծահասակ բնակչության քանակի հարաբերական աճը երիտասարդների քանակի նկատմամբ բերում է նաև ֆինանսական խնդիր, քանի որ աճում է պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական ծանրաբեռնվածությունը: Այսօր արդեն հասել ենք այն իրողության, որ մեկ աշխատող երիտասարդի հաշվին համապատասխանում է մի քանի թոշակառուներ: Սա բերում է հարկերի ավելացմանը:

ՄԱԿ-ի դեմոգրաֆիկական ծառայության հաշվարկների համաձայն՝ 2050թ.-ին բնակչության թիվը կհասնի 7,4 միլիարդի:

Սննդային մարտահրավերները պայմանավորված են երկու ուղղվածությամբ՝ քանակի և որակի: Ենթադրվում է, որ սննդի համապատասխան քանակը աստիճանաբար չի բավարարելու մարդկության թվաքանակի աճին, իսկ որակական ցուցանիշով՝ բնական սննդային պաշարները փոխարինվում են գենային ինժեներիայով ստացվածին: Սա նշանակում է, որ մի շարք հաշվարկներով երկրագնդի 5.5 միլիարդ բնակիչներ դատապատված են ինչ-որ բանի, մասնավորապես վառելանյութի և խմելու ջրի պակասին: Ժամանակակից հասարակության համար որպես գոյատևման հիմնական ռեսուրս հանդիսանում է նավթը, գազը, խմելու ջուրը: Բնական ռեսուրսները անհավասարաչափ են բաշխված աշխարհում, և առավել ապահովված են իրենց զգում այն երկրները, որոնք հարուստ

են նման պաշարներով, իսկ առավել սակավ բնական ռեսուրսներ ունեցող երկները փնտրում են այլընտրանքային տարբերակներ: Համաձայն Միջազգային էներգետիկ գործակալության տվյալների՝ որպեսզի երկիր մոլորակը մինչև 2030թ. ապահովվի էներգիայով, անհրաժեշտ է ներդնել 20 տրիլիոն ԱՄՆ դոլլար:

Մտահոգիչ է նաև խմելու ջրի հարցը: Ջրի օգտագործումը համաշխարհային մակարդակով աճել է ավելի քան վեց անգամ, և այն կկրկնապատկվի մինչև 2050թ.-ը: Ջրային ռեսուրսի ճգնաժամը, որը համարվում էր միայն աղքատ երկրների հիմնախնդիրը, չի շրջանցում նաև հարուստ երկրներին: Մեծ քաղաքներին այսօր չի բավարարում խմելու ջրի քանակը:

Սակայն ճիշտ քաղաքականության իրականացման շնորհիվ կարելի է երկրագունդը ապահովել էներգակիրների անհրաժեշտ քանակով:

Տնտեսական մարտահրավեր: ՀՀ տնտեսական համակարգը թույլ զարգացած է և դժվարությամբ է դիմագրավում համաշխարհային տնտեսական մարտահրավերներին: Խորհրդային կարգերի փլուզումից հետո հատկապես տուժել է ծանր արդյունաբերությունը: Ներկայիս տնտեսական ճգնաժամերը իրենց խորը ազդեցությունն են թողնում ՀՀ տնտեսական համակարգի վրա: Արտահանման և ներմուծման տնտեսական ցուցանիշները չեն ապահովում կայուն տնտեսական աճ: Չնայած աշխարհի շատ երկրներ դեռևս ցուցաբերում են տնտեսական անկայունություն, սակայան որոշների աշխարհագրական դիրքը նպաստում է տնտեսության որոշակի ճյուղերի ակտիվացմանն ու զարգացմանը: Աշխարհին համընթաց քայլելու համար անհրաժեշտ է ձևավորել կայուն տնտեսական պաշտպանված համակարգ՝ զերծ գլոբալ տարատեսակ տնտեսական ցնցումներից: Արդեն այսօր կառավարական մակարդակով սահմանվում են տնտեսության գերակա ճյուղեր և հատկացվում հսկայական ֆինանսական միջոցներ: Ըստ այդմ, ՀՀ-ում տնտեսության գերակա ճյուղ է հայտարարված բարձր տեխնոլոգիաների ոլորտը և գյուղատնտեսությունը:

Ժամանակակից քաղաքակրթության խոցելի կողմերից մեկը **միջազգային ահաբեկչությունն է**: Ահաբեկչության արդյունքում կիրառվում են ինչպես ավանդական զինատեսակներ, քիմիական, կենսաբանական զենքեր, այնպես է

կիբերհարձակումներ:

Սոցիալական մարտահրավերներ: Ժամանակակից մարտահրավերներից առավել ընդգծվում է սոցիալականը: Մեր հանրապետության համար դեռևս գերխնդիր է մնում միջին խավի ձևավորումը, որը թվաքանակով արևմտյան երկրներում գերակշռում է: Վերջինս ապահովում է հասարակության սոցիալական կայունությունը:

Ներկայումս նկատելի են պետության կողմից տրամադրվող հատկացումների և հասարակության եկամուտների միջև մեծ անջրպետ, որն արտահայտվում է հասարակության մեջ անապահով սոցիալական շերտերի օրեցօր ավելացմամբ: Ի տարբերություն զարգացած երկրների՝ ՀՀ-ում դեռևս չի ձևավորվել միջին խավը, որը նույնպես սոցիալական մարտահրավեր է:

ՀՀ-ում աղքատության ցուցանիշը, ըստ ազգային վիճակագրական ծառայության, հետևյալն է[95].

Աղյուսակ 3.

Աղքատության մակարդակը (ըստ 2009թ. մեթոդաբանության) / 2015 (Ըստ տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության արդյունքների), %

Թվական	Բացարձակ Արժեք	Նախորդ Տարվա Համապատասխան Ժամանակաշրջանի նկատմամբ (%)
2013	32.0	98.8
2012	32.4	92.9
2011	35.0	97.8
2010	35.8	105
2009	34.1	123.6
2008	27.6	100

Տվյալները վկայում են, որ նման սոցիալական պատկերը չի

[95] http://www.armstat.am/am/?nid=126&thid=soc&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC

համապատասխանում ոչ մի հայաստանցու պատկերացումներին: Աղքատությունը, անկասկած, այսօր մեկ քայլ հետ է նույնիսկ խորհրդային ժամանակահատվածի ընդհանուր ցուցանիշներից: Այն ժամանակներում սոցիալական հավասարությունը մարդկանց ապահովության, պաշտպանվածության զգացողություն էր առաջացնում, չնայած որ իրականում կային չդսրևորված սոցիալական տարբերություններ:

Այս առումով հատկանշական է պետության ընդհանուր տնտեսական աճի ցուցանիշը: Պետությունը բյուջետային տարբեր մեխանիզմներով ցուցաբերում է ֆինասական աջակցություն նրանց, ում նյութական բարեկեցությունն ուղղակիորեն կախված է իրենից՝ թոշակառուներ, բյուջետային միջոցներով աշխատակիցներ, պետծառայողներ, զինվորականներ, տարբեր շահակիցներ: Բայց այսօր հասարակության մեջ քիչ չեն նաև այն սոցիալական շերտերը, ովքեր ինքնուրույն են փորձում ապահովել իրենց սոցիալական կարիքները: Հենց այս շերտն է առավել զգայուն սոցիալական փոփոխվող պայմանների նկատմամբ, ովքեր էլ ապահովում են պետության ապահովված սոցիալական խավը, սոցիալական կայունությունը:

2.2. Բարձրագույն դպրոցի բարեփոխումներն ուսանողների արժեհամակարգի նորովի մոտեցման նախապայման

Ժամանակակից աշխարհում գլոբալացման պայմաններում գնալով մեծանում է կրթության արժեքը՝ որպես հասարակության նոր արժեքային համակարգի ձևավորման կարևորագույն գործոն: Առավել ընդգծվում է ուսանողների մտավոր ներուժի, գործունեության առաջատար դերը, իսկ դա նշանակում է, որ առաջնությունը տրվում է բարձրորակ կրթությանը:

Հայաստանի Հանրապետության զարգացման ներկա բարեփոխումների փուլում կրթության դերը նրա՝ ժողովրդավարական և իրավական պետության անցման, շուկայական տնտեսության զարգացման խնդիրներով, համաշխարհային մակարդակից երկրի ետ մնալու գործոնի հաղթահարման մեջ է: Կրթական բարեփոխումները անհրաժեշտ կադրային միջոցների ապահովման աղբյուր են,

ուսանողների արժեհամակարգի նորովի մոտեցման նախապայման:

Բարձրագույն դպրոցի բարեփոխումները, հանդիսանալով հասարակական կյանքի և պետական կառուցվածքի բարեփոխումների որոշակի ամբողջացնող մաս՝ ուղղված են պետական մարտավարական, անվտանգության խնդիրների լուծմանը, քաղաքացիների բարեկեցության մակարդակի բարձրացմանը, սոցիալական կայունության ապահովմանը, քաղաքացիական հասարակության ինստիտուտի զարգացմանը, հասարակության սոցիալ-մշակութային ամբողջականության պահպանմանը, աշխատաշուկայում որակավորված կադրերի պահանջարկի ապահովմանը, արժեքային համակարգի կողմնորոշմանը[96]:

Համաշխարհային զարգացման հետ մեկտեղ, յուրաքանչյուր երկրի կրթական համակարգ օժտված է բնութագրական առանձնահատկություններով, որն էլ իր հերթին փոխպայմանավորված է տվյալ ազգին բնորոշ առանձնահատկություններով, հոգեկերտվածքով, մտածելակերպով, վարքագծային առանձնահատկություններով, ավանդույթներով, սովորույթներով և իհարկե, բարոյամշակութային արժեհամակարգով: Բարձրագույն դպրոցում բարեփոխումների ընթացքը ենթադրում է, բացի համամարդկային և անձնային արժեքների համադրումից, մասնագիտական ոլորտում նոր արժեքների ձևավորում և կողմնորոշում, որն էլ իր հերթին հանգեցնում է սովորողների անձնային նոր որակների ձևավորմանը և կարևորմանը[97]:

2005 թ.-ին Հայաստանը միացավ Բոլոնիայի համաձայնագրին՝ դրանով իսկ պետական մակարդակով հայտարարելով եվրոպական բարձրագույն կրթական տարածք մուտք գործելու իր նպատակադրությունը[98]: Դեռ մինչև այդ՝ 90-ական թթ.-ից, մի շարք բուհերում (Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում, Երևանի պետական համալսարանում, Հայաստանի պետական ագրարային համալսարանում) նախաձեռնվել էին կրթական համակարգը վերափոխելու, այն եվրոպական բարձրագույն կրթության տարածքը ձևավորող

[96] Розов Н. С. Ценности в проблемном мире: философские основания и социальные приложения конструктивной аксиологии. Новосибирск: Изд-во Новосибирского ун-та. — 1998. — 292 с.
[97] Кулешова Л.Н. Нравственное воспитание личности как предмет психологи-ческого исследования // Развитие и формирование личности в современных условиях: Учебное пособие / Кулешова Л.Н. и др. М., 2009. С. 95–115.
[98] http://www.edu.am/index.php?id=-1533&topMenu=17&menu1=-1&menu2=17&arch=0

ֆորմալ պահանջներին համապատասխանեցնելուն ուղղված քայլեր, մասնավորապես՝ գործարկվեցին մագիստրոսի և բակալավրի կրթական ծրագրեր, կրեդիտային համակարգի որոշ տարրեր ներմուծվեցին կրթական պրակտիկա:

Միևնույն ժամանակ, բարձրագույն կրթության համակարգում վերափոխումներն ուղեկցվում են մի շարք բովանդակային դժվարություններով, որոնք պայմանավորված են կրթական տարածքում գլոբալացման պայմաններում բարոյամշակութային արժեքային կողմնորոշումների տարբերակմամբ:

Բարեփոխումների փաստացի մեկնարկից մոտ տասնհինգ տարի անց, դեռևս բազմաթիվ անելիքներ կան, մասնավորապես կրթական բովանդակային, կառուցվածքային, համակարգային վերափոխումները պահանջում են համալսարանական կրթության և գիտության ոլորտներում հիմնարար բարեփոխումների անցկացմանն ուղղված հետևողական քաղաքականության մշակում և իրականացում, որը պետք է նախատեսեր համակարգը կազմող հանգուցային մեխանիզմներում խորը կառուցվածքային, մեթոդաբանական, հոգեբանական և ֆինանսական վերափոխումների կատարում: Կրթական բովանդակային հենքի ձևավորումն ու զարգացումն ընթանում է դանդաղ, իսկ որոշ հենքային խնդիրներ դեռևս մնացել են չլուծված: Կրթական բնագավառի նորարարություններն ու նորամուծությունները դժվար ընկալելի և իրագործելի են հատկապես ավագ սերնդի պրոֆեսորադասախոսական կազմի համար[99]:

Կրթական համակարգի խորհրդային տարիներից մնացած ածանցյալ վիճակը, այն զգալի իներցիոն ուժը, որն առաջանում է համակարգի գործառությունն ապահովող վարչական և ակադեմիական ռեսուրսի՝ կրթական գործընթացի բովանդակության և կառավարման եղանակների վերաբերյալ կարծրատիպային պատկերացումներից և ակադեմիական միջավայրում ինովացիոն մշակույթի ցածր աստիճանից, բարեփոխումների ընթացքը արագացնելու համար անհրաժեշտ նպաստավոր հող չեն ստեղծում:

Եթե առավել ընդհանուր գծերով վերլուծելու լինենք դրա հիմնական պատճառները, ապա կարելի է նշել մի շարք խնդիրներ.

[99] http://www.osf.am/wp-content/uploads/2013/10/M-Gabrielyan-Policy-Brief.pdf

1. Կրթական գործընթացի ուղղահայաց կառավարման գծի փոփոխությունը հորիզոնական գծի կիրառմամբ, որի արդյունքում ստեղծվում են բարեփոխումների համար նպաստավոր մթնոլորտ: Կառավարման համակարգում ակադեմիական- դեմոկրատական մեխանիզմների կազմավորմումը փոխլրացվում է գիտելիքի հասարակություն ձևավորելու գլխավոր մարտահրավերներից մեկով՝ աստիճանակարգված կառավարման մոդելից դեպի փոխկապակցված (ցանցավորված) ինքնավարություն անցնելու հրամայական: Այս պայմաններում համալսարանների կառավարման բարձրագույն մարմինը ստանում է բարեփոխումներն իրականացնելու հնարավորություն, որտեղ իրենց ներդրումն են փորձում բերել ուսանողները՝ կառավարման գործընթացներին մասնակցնելով, ինքնակառավարմամբ: Համալսարանական օրգանիզմի ինտեգրումն ընդհանուր եվրոպական տարածք փոխարինվում է «ինքնաինտեգրմամբ» դասախոսների և ուսանողների շարժունությունը՝ «ինքնաշարժունությամբ» :

2. Համալսարանական կրթական բարեփոխումները տեղայնացվել են. կրթական համակարգի տրոհում երկու աստիճանի՝ բակալավրիատ և մագիստրատուրա, հետբուհական կրթություն, կրեդիտային համակարգի ներդրում: Արդյունքում առաջացած բովանդակային մոտեցումները ենթադրում են ուսուցման կազմակերպման նոր ձևեր, նորագույն դասավանդման, ուսումնառության, գնահատման նորովի մոտեցումներ: Բարեփոխումների արդյունքում առաջանում են հոգեբանական և սոցիալական բնույթի արգելքներ, որոնք պայմանավորված են կրթական արդյունավետ նոր մոդել ձևավորելու անհրաժեշտությամբ: Դա իր հերթին ենթադրում է բարեփոխումների հիմնարար հայեցակարգ ստեղծելու, այդ ուղղությամբ համապատասխան հետազոտական և վերլուծական աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն: Մինչդեռ բարեփոխումների ընթացքը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում նոր խնդիրներ և առաջնահերթություններ է առաջադրում: Կրթական արդյունքների վրա հենվող ուսումնական ծրագրերը, դասավանդման «դասախոսակենտրոն» համակարգից «ուսանողակենտրոն» համակարգին անցնելու նպատակները, խնդիրները լուծումներ են ենթադրում: Համակարգում խոչընդոտող գործոնները նպաստավոր չեն կրթական համակարգի

հետագա զարգացման համար, եթե հաշվի առնեք, որ ներկայումս և առաջիկա տարիներին բուհերը լուրջ ֆինանսական դժվարությունների առջև է կանգնած թե՛ առաջ եկած տնտեսական ճգնաժամի, թե՛ դիմորդների թվի անկման պատճառով, և այդ պակասորդը անհրաժեշտ է լրացնել կրթական ծառայությունների բազմազանությամբ, ինչը ենթադրում է կրթական ծառայությունների շուկայում առաջացող փոփոխությունների դինամիկային ճկուն, իրավիճակային կերպով արձագանքելու և կրթական արդիական արտադրանք թողարկելու հարցում շահագրգիռ լինելու ունակություն՝ նպատակ, որը հնարավոր է իրականացնել բուհ-աշխատաշուկա հարաբերակցությունը կանխատեսելով և պլանավորելով:

Ակնհայտ է, որ կրթական բարեփոխումների ընթացքն արագացնելու համար անհրաժեշտություն է առաջանում մշակել կառավարման աստիճանական ապակենտրոնացման ծրագիր, որի հիմքում պետք է ընկած լինեն հետևյալ հիմնական մոտեցումները.

- կրթական ծառայությունների ներքին շուկայի ազատականացում և մրցակցային դաշտի ձևավորում, կրթական գործընթացի նկատմամբ գործատուի իրական ուշադրություն:
- մասնագիտական պատրաստություն իրականացնող կառույցների ֆակուլտետների իրավասությունների ընդլայնում՝ ռեսուրսների կենտրոնացում, կադրային ռեսուրսների նպատակային օգտագործում:
- կառավարչական գործառույթների, կառավարման մեթոդների, կառավարման ոճերի վերանայում:

Ի՞նչն է կառավարման այսօրվա համակարգում խոչընդոտում արժեքային միասնականության, կամ կորպորատիվ միասնական շահի ձևավորմանը: Թերևս կարելի է առանձնացնել հետևյալը.

- բարեփոխումների նպատակադրությունների և բովանդակության տեղեկատվական աջակցության սահմանափակումը և ակադեմիական լայն շրջանակի, հասարակության անտեղյակությունը բարեփոխումների գործընթացից:
- Ուսանողների որակյալ կրթություն ստանալու հասարակական խթանների բացակայությունը և կրթական գործընթացում սեփական դերը գիտակցելու ցածր

աստիճանը, ինքնաիրացվելու դժվարությունները:

Կառավարման ներկայիս համակարգում միշտ չէ, որ ֆակուլտետները, ամբիոնները, ուսանողները դրսևորում են իրական ինքնավարություն, նախաձեռնողականություն. քիչ են խթանող մեխանիզմները:

Ուսումնական գործընթացի կառավարման ուղղությամբ սահմանափակ են արտալսարանային գործընթացների կազմակերպումը: Որպես հետևանք՝ կրթական գործընթացին ներկայացվող պահանջները հաշվի չեն առնում վերջինիս իրական հնարավորությունները, ուստի ուսուցման գործընթացի հնարավորությունները և ներկայացվող պահանջները մտնում են հակասության մեջ: Արդյունքները բարելավելու համար անհրաժեշտ է բարելավել գործընթացի իրականացման մանկավարժական պայմանները, որից հետո միայն առաջադրել այդ պայմաններին համապատասխանող նոր պահանջներ:

Հասկանալի է, սակայն, որ ներկայիս բարեփոխումները վերաբերում են ոչ միայն բուն կրթական գործընթացին, այլ նաև այն ապահովող այլ գործոններին՝ կազմակերպական, ֆինանսական, մեթոդական և այլն, ուստի կրթական համակարգի արդյունավետ զարգացումը կարող է իրականանալ դրանց ամողջական հաշվառմամբ: Այդ խնդրի լուծումը հնարավոր է միայն բարեփոխումների ընթացքի բոլոր չափանիշներով՝ հետազոտական, վերլուծական և ստեղծագործական աշխատանք կազմակերպելու պարագայում:

Կրթական գործընթացի գլխավոր շահակիցը ուսանողությունն է, մինչդեռ ուսանողների մոտ այսօր գրեթե բացակայում են որակյալ կրթություն ստանալու հասարակական պահանջմունքները, խթանները և ցածր է կրթական գործընթացում սեփական դերը գիտակցելու աստիճանը: Ակնհայտ է, սակայն, որ կրթական բարեփոխումների հաջող և արդյունավետ ընթացքի համար որպես գլխավոր (և որոշ իմաստով նախապայման հանդիսացող) գործոն հանդես է գալիս ուսանողության՝ որպես ընդհանուր սոցիալական շահ ունեցող խավի կազմավորումը: Ուսանողության՝ որպես երիտասարդության ինտելեկտուալ բնույթի նպատակադրություններով միավորված և, հետևապես, առաջատար հատվածի սոցիալական կառույց, պետք է մեծապես նպաստի բարեփոխումների ընթացքը

«ներքևից» խթանելու և իրական բովանդակությամբ բեռնելու, հասարակության մեջ ինովացիոն մշակույթ տարածելու և, ի վերջո, հասարակության ժողովրդավարացումը և քաղաքացիական հասարակության ինստիտուտների վերջնական կայացումը ապահովելու գործում: Դա թույլ կտա նաև շեշտակիորեն բարձրացնել բուհական համակարգի վարկանիշը՝ ձևավորելով ժամանակակից մտավոր և հոգևոր պահանջներին համապատասխան մթնոլորտ, որի պակասը առաջացնում է ստեղծագործ և նորարար երիտասարդության արտահոսք[100]:

Նման մթնոլորտի ձևավորումը ենթադրում է համապատասխան ակադեմիական միջավայրի առկայություն, որտեղ իրականում կգործեն ժամանակակից աշխարհի հասարակական կառուցվածքներին բնորոշ հարաբերությունների համակարգերը և կձևավորվի մարդու և մասնագետի անհատականությունը: Այս դեպքում հնարավոր է միայն ապահովել բարձրագույն կրթության համաչափ համալրումն ակտիվ գիտակրթական դիրքորոշում ունեցող երիտասարդ մասնագետներով, իսկ կրթական համակարգում աշխատող երիտասարդ մասնագետները ակտիվորեն ներգրավված կլինեն համալսարանական կառավարման գործընթացներում, և ուսանողական կազմակերպությունները թերևս կլինեն իրապես գործող կառույցներ:

Կարծում ենք, որ մենք կանգնած ենք այսօր բարոյամշակութային լուրջ տեղաշարժի, վերաիմաստավորումների անհրաժեշտության առջև: Սակայն պետք է նկատել, որ ուսանողների բարոյամշակութային արժեքային հենարանների ձևավորումը պետք է ընթանա կառուցվածքային վերափոխումներին զուգընթաց:

Ուսանողների բարոյամշակութային արժեհամակարգի հիմքը բարոյական նորմերն են, որոնցում համադրվում է բարոյականության, հոգևոր և պրակտիկ գործունեության, բարոյական վարքագծի ամբողջականությունը: Բարոյամշակութային արժեհամակարգում արտահայտվում է սոցիալական ժառանգության արդյունքում ձեռքբերված փորձից բաղադրիչներ, որոնք լրացվում և վերաիմաստավորվում են բարեփոխումների արդյունքում՝ նորովի մոտեցմամբ: Սակայն որքան էլ ժամանակի ընթացքում դրանք ենթարկվեն փոփոխության,

[100] Багаутдинова Н.Г. Высшая школа сегодня и завтра: пути преодоления кризиса. – М.: Экономика, 2003. – 426 с.

այնուամենայնիվ ունեն որոշակի բնութագրական չափանիշներ.

1. **Համապիտանի են**. Յուրաքանչյուր սոցիալականացված անձ ունի իր արժեհամակարգը և դրան համապատասխան սոցիալական միջավայրում դրսևորում է բարոյամշակութային համարժեք վարքագիծ:

2. **Հիմնարար են**. Արժեքային հիմք են հանդիսանում հասարակության գիտակցության ձևավորման բարոյամշակութային արժեհամակարգի համար, իսկ մյուս արժեքներն անձը ձեռք է բերում սոցիալականացման ընթացքում՝ մշակութային, քաղաքական, կրոնական, կրթական և այլն:

3. **Հարաբերական շարժունակ են**. Հասարակության մեջ ընթացող փոփոխությունները բերում են տարբեր վայրիվերումներ, որոնք, երբեմն, հանգեցնում է երիտասարդների շրջանում արժեքային համակարգի ճգնաժամի:

Կրթական ներկայիս բարեփոխումների արդյունքում ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման գործընթացում առաջարկվում է 3 խումբ չափանիշներ.

- Ինտելեկտուալ
- Դրդապատճառային
- Վարքագծային

Ինտելեկտուալ չափանիշը բնութագրում է ուսանողների ուսումնառության ընթացքում ձեռք բերվող գիտելիքների, կարողությունների և հմտությունների համակարգ, որը բավարարում է նոր մասնագիտական արժեհամակարգին, և նախադրյալներ է ստեղծում ուսանողների հետագա ինքնակրթության, ինքնազարգացման, ինքնաիրացման համար: Ինտելեկտուալ չափանիշը բխում է բարձրագույն դպրոցում իրականացվող բովանդակային՝ ծրագրամեթոդական բարեփոխումներից: Կրթության բովանդակային ընդգրկվածությունը ենթադրում է այնպիսի ուսումնական առարկաների ներգրավում կրթական ծրագրերում, որոնք հնարավորություն կտան ուսանողներին առավել մրցունակ լինելու աշխատաշուկայում և ապահովել սահուն անցում տեսական մակարդակից պրակտիկ գործունեություն:

Դրդապատճառային. Բնութագրական, որակական չափանիշ է հատկապես,

երբ գիտելիքահեն կրթական հարացույցը փոխարինվում է անձնակողմնորոշիչ, զարգացող կրթական հարացույցով, որի դեպքում իրականացվում է ուսանողակենտրոն ուսուցում, որտեղ ուսանողը հանդես է գալիս որպես ակտիվ սուբյեկտ: Որպես ակտիվ սուբյեկտ՝ կրթական դրդապատճառային հիմքով իրականացվում է ինտերակտիվ-համագործակցային աշխատանք: Որքան ուսանողների դրդապատճառներն առավել ակտիվ են, այնքան կանխորոշվում է ապագա մասնագետի պրակտիկ գործունեության արդյունավետությունն ու որակը:

Կրթական միջավայրում համագործակցային աշխատանքի ցուցիչը դրդապատճառների արդյունավետ համադրումն է կրթական պահանջմունքների հետ:

Վարքագծային. Վերոնշյալ երկու չափանիշների հիման վրա արտահայտվում է ուսումնադաստիարակչական, կրթական միջավայրում վարքագծայինը, որը հնարավորություն է տալիս ախտորոշելու ուսանողների մասնագիտական արժեքային կողմնորոշումները:

Բարձրագույն դպրոցում կրթական բարեփոխումների համատեքստում Պ.Ի. Պիտկասիստին բարոյամշակութային արժեհամակարգը բնութագրելիս առաջարկում է կարևորել հատկապես դաստիարակչական բաղադրամասը կամ մանկավարժական վերլուծությունը: Նա գտնում է, որ ուսանողների բարոյամշակութային արժեհամակարգը պետք է գնահատել դաստիարակչական գործընթացի որակով, որի համար առաջարկում է քննարկել երկու մոտեցումներ՝ առաջին մոտեցումը վերաբերում է դասավանդողների անձնային, մասնագիտական, կազմակերպչական որակներին, երկրորդ մոտեցումը վերաբերում է ուսանողների կրթվածության, զարգացվածության աստիճանին, որտեղ ուղղորդողը ուսանողների բարոյամշակութային համակարգն է:

Մենք կարծում ենք, որ այս տեսակետին պետք է ավելացվի նաև երրորդ մոտեցումը, որը կբնութագրի կրթական միջավայրում դասախոս-ուսանող, սուբյեկտ-սուբյեկտային փոխհարաբերությունների ընթացքում նրանց բարոյամշակութային արժեհամակարգը, քանի որ միշտ չէ, երբ առաջին և երկրորդ մոտեցումները ներդաշնակ փոխլրացնում են միմյանց: Շատ հաճախ կրթական միջավայրում

հակասություններ և կոնֆլիկներ ծագում են հենց այդ տարբերություններից:

Կրթական բարեփոխումների հիմնադրույթներից մեկն էլ ուսանողների շարժունակությունն է, որը հնարավորություն է տալիս ուսանողին հարմարվել կրթական նոր միջավայրում: Որպես բացարձակ արժեք դիտարկելով կրթությունը՝ այն համադրվում է սովորողների բարոյամշակութային նոր որակների ձևավորման հետ.համարձակություն, ակտիվություն, դյուրահաղորդականություն, սեփական տեսակետը արտահայտելու կարողություն, ինքնավերլուծություն, մասնագիտական նոր նվաճումների կանխատեսման հնարավորություն[101]:

Այս ամենի արդյունքում ուսուցման նոր կազմակերպման ձևերն ու մեթոդները էական նախապայման են հանդիսանում բարոյամշակութային արժեքային կողմնորոշումների համար:

2.3. Ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման գործընթացի առանձնահատկությունները

Հետազոտության նախորդ գլուխներում մենք դիտարկեցինք ուսանողների բարոյական, մշակութային արժեքների ձևավորման ուսումնասիրության տեսական-հայեցակարգային հիմքերը: Մեր հետագա ուսումնասիրության նպատակն է ուսանողության բարոյական գիտակցության և բարոյական, մշակութային արժեքների ձևավորման առանձնահատկությունների բացահայտումը: Ներկայումս բարձրագույն կրթության համակարգում առկա բարեփոխումները դեռևս լիովին չեն նպաստում բարձրագույն դպրոցի առջև ծառացած բարոյահոգեբանական ճգնաժամը հաղթահարելուն, որը պայմանավորված է ինչպես տեսական, այնպես էլ սոցիալական բնույթի մի շարք խնդիրներով ու դժվարություններով:

Հասարակության գերակա խնդիրներից է երիտասարդության մեջ բարոյամշակութային և հոգևոր կողմնորոշիչների ձևավորումը, հարգալից վերաբերմունքը հոգևոր-բարոյական գործունեություն իրականացնող մարդու

[101] Газалиев А.М. Значение профессиональной мобильности в процессе становления специалиста технической направленности // Высшее образование сегодня. – 2011. - № 10. – С. 6-10.

նկատմամբ: Այս առումով անհրաժեշտ է ապահովել երիտասարդության, առաջին հերթին երիտասարդ մասնագետների համար հասարակության մեջ և հասարակական հարաբերություններում կայուն, հուսալի դիրքորոշում, ինչպես նաև կենսական բնականոն գործունեության պայմաններ: Այս խնդիրը դժվարություններ է հարուցում այն իրավիճակների պատճառով, որոնք բնութագրվում են կյանքի տարբեր ոլորտներում ճգնաժամային դրսևորումներով՝ պայմանավորված սոցիալ-քաղաքական, տնտեսական տեղաշարժերով, գլոբալացմամբ, կրթական ինստիտուտներում խոր բարեփոխումների արդի գործընթացներով:

Բարեփոխման գործընթացի բարդությունը, երկրում սոցիալ-քաղաքական և տնտեսական իրավիճակների անկայունությունը իրենց բնորոշ դրոշմն են թողնում ուսանողների վարքի և գիտակցության, առաջին հերթին բարոյամշակութային գիտակցության և բարոյական վարքի վրա: Այսօրինակ անկայուն իրավիճակներում ուսանողների բարոյական, մշակութային արժեքը ձևավորվում է առավելապես սոցիալական միջավայրում, զանգվածային լրատվամիջոցների ազդեցությամբ և ավելի քիչ՝ ուսումնադաստիարակական, կրթական համակարգում: Դրան են նպաստում նաև առկա բացասական երևույթները՝ բուհական կյանքի ոչ դինամիկ բարեփոխումները, ուսանողական և երիտասարդական շատ կազմակերպություն-ների զուտ ձևական գոյությունը, դրանց թույլ գործունեությունը և այլն: Ուսանող երիտասարդության բարոյական, մշակութային արժեքների ձևավորման գործընթացը դժվարանում է վերը թվարկված հանգամանքներով, որոնք և իրենց հերթին արդի փուլում նորանոր խնդիրներ են հարուցում ուսանողների բարոյական գիտակցության ձևավորման գործընթացում: Անձի բարոյական կրթվածությունն ինքնին բարոյական, մշակութային արժեքների չափանիշ չէ: Վերջինս ձևավորվում է բարոյական զգացմունքների, կամքի, բարոյական գիտելիքների, կարողությունների և համոզմունքների, մարդու հասարակական ակտիվ գործունեության արդյունքում: Այս խնդիրը առավել արդիական է, քանի որ բարձրագույն կրթության ողջ համակարգի առջև ծառացած է մարդասիրացման խնդիրը, որն իրականանում է անձնակողմնորոշիչ մոտեցման պայմաններում: Բարձրագույն դպրոցը կոչված է առաջին հերթին այնպիսի մասնագետներ պատրաստելու, որոնք կտիրապետեն, ի

թիվս մասնագիտական բարձր հատկանիշների, նաև հոգևոր-բարոյական արժեքների, անձնային որակների: Այս առումով կրթության մարդասիրական բովանդակության շեշտադրումը այսօր բարձրագույն կրթության արդիական հիմնախնդիրներից է: Ուսանող երիտասարդության բարոյական, մշակութային արժեքը բնութագրում է ողջ հասարակության բարոյամշակութային արժեքների վիճակը, ունի իր յուրահատկությունները, որոնք, մեր կարծիքով, պայմանավորված են ուսանողների տարիքային առանձնահատկություններով և հասարակության սոցիալական կառուցվածքում ուսանողության գրաված դիրքով: Ահա թե ինչու տրամաբանական կլինի առաջին հերթին բացահայտել հենց տվյալ սոցիալական խմբի յուրահատկությունն ու սոցիալական կարգավիճակը:

Ուսանողությունը հասարակության այն առանձնահատուկ խումբն է, որը կրում է հասարակության սոցիալական կառուցվածքի բոլոր բաղադրատարրերի նկատմամբ տարբեր փոխհարաբերություններին բնորոշ ներքին դինամիկ փոփոխությունները և փոխադարձ կապերի մշտապես առկա բարդությունները:

Այստեղից էլ ակնհայտ է դառնում «ուսանողություն» հասկացության սահմանման դժվարությունը և ուսանողության սոցիալական կարգավիճակի համակողմանի բնորոշման ոչ միանշանակ և բարդ բնույթը: Հավելենք նաև այն, որ ուսանողությունը բնութագրող հասկացության հետազոտությունը մղում է այդ խնդրին առնչվող մի շարք խնդիրների համալիր հետազոտության: Դրանց թվում առաջնային են այն խնդիրները, որոնք կախված են սոցիալական շարժունությամբ բնութագրվող յուրահատուկ նոր սոցիալական խմբերի կազմավորման հետ:

Այսօր առավելապես քննարկվում և բանավեճեր են հարուցում հասարակության սոցիալական կառուցվածքում ուսանողության տեղի, դերի, սոցիալականացման գործընթացների բնույթի և առանձնահատկությունների խնդիրները, թեև, հարկ է նշել, ուսանողների խնդիրներին ոչ քիչ հետազոտություններ են նվիրված:

Բարձրագույն կրթության խնդիրներին նվիրված գրականության վերլուծությունը բացահայտում է մի շարք տեսակետներ: Այդ մոտեցումներում ուսանողությունը համարվում է սոցիալ-ժողովրդագրական խումբ, սոցիալ-մասնագիտական խումբ, հատուկ հասարակական խումբ, երբեմն էլ այն

ներկայացվում է որպես մտավորականության մի մասը[102]: Մասնագիտական-նախապատրաստական, կրթական և դաստիարակչական գործառույթները, որոնք բնորոշ են բարձրագույն դպրոցին, առանձնահատուկ սոցիալական հարաբերությունները, որոնցում ներգրավվում է բուհական երիտասարդությունն իր կենսագործունեության բոլոր ձևերով, ուսանողության ձևավորման հիմքն են, նրա՝ սոցիալական նշանակություն ունեցող բնորոշ տարբերիչ առանձնահատկությունը: Շատ հեղինակների կողմից ընդգծվում է, որ ուսանողների կայացումն ու զարգացումը իրականանում է հասարակության մեջ ընթացող ինչպես ընդհանուր սոցիալական, այնպես էլ առհասարակ սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային գործընթացների որոշակի ազդեցությամբ[103]:

Ուսանող երիտասարդության խնդիրները հետազոտող շատ գիտնականներ նշում են, որ ուսանողական տարիքը մարդու՝ որպես անձի ու հասարակության ակտիվ անդամի կայացման կարևոր ժամանակահատված է: «Տարիքն այստեղ միաժամանակ որպես սոցիալական գործոն է հանդես գալիս: Ուսումնառությունը բուհում իրականանում է հիմնականում պատանեկության երկրորդ փուլում՝ պատանու և աղջկա՝ որպես սոցիալապես հասուն անձ ձևավորման շրջանում»[104]:

Հոգեբան Բ.Գ. Անանևը իր հետազոտություններում նշում է, որ «անձնային հարաբերություններում այս տարիքը հատուկ նշանակություն ունի՝ որպես բարոյամշակութային և գեղագիտական զգացումների ակտիվ զարգացման, բնավորության ձևավորման, կայունացման և, որ ամենակարևորն է, չափահաս մարդու սոցիալական գործառույթների լիարժեք համալիրի ձևավորման փուլ»[105]:

Խոսելով ուսանող երիտասարդության՝ որպես սոցիալ-ժողովրդագրական խմբի մասին՝ սովորաբար առանձնացնում են նրա այն հատկանիշները, որոնք արտացոլում են անձի ձևավորման, զարգացման և հասարակության մեջ կայացման գործընթացները՝ կապված տարիքային բնույթի որոշակի հակասությունների

---

[102] Теория культуры: Учебное пособие. Под ред. С. Н. Иконниковой, В. П. Большакова, — СПб.: Питер, 2008. — 592 с

[103] Якушева С.Д. Основы педагогического мастерства и профессионального саморазвития: Учебное пособие / С.Д. Якушева. - М.: Форум: НИЦ ИНФРА-М, 2014. - 416 с

[104] Смолянинова, О. Г. Организация учебного процесса бакалавров/магистров педагогики в модульной кредитно-рейтинговой системе обучения / О. Г. Смолянинова, Е. В. Достовалова, О. А. Савельева. - Красноярск: Сибирский федеральный ун-т, 2009. - 294 с.

[105] Ананьев Б.Г. Человек как предмет познания.-СПБ: Питер, 2001.-288с., էջ 25

հաղթահարման հետ: Դրանցից են, օրինակ ավագ սերնդի փորձի նկատմամբ դյուրըմբռնողության աստիճանը, վստահությունը կամ քննադատական, նույնիսկ նիհիլիստական (մերժողական, ժխտողական) վերաբերմունքը հին և քարացած արժեքների ու դրսևորումների նկատմամբ, ձգտումը դեպի նորը, աշխարհը նորովի վերափոխելու ցանկությունները, որոնումները, համամարդկային խնդիրների ոչ խոր, մակերեսային ընկալումը, հիասթափությունն ու հուսալքությունը, չհասկացված լինելու բարդույթը, սեփական կարծիքի չափազանցված գնահատումն ու արժևորումը և գործնական ունակությունների, գիտելիքների, հմտությունների, փորձի, մշակույթի անբավարար առկայությունը, բարձր դյուրագրգռությունը, ավելորդ հուզականությունը, բացառիկ երևույթների նկտամամբ հաճախ առօրեական վերաբերմունքն ու անտարբեր կեցվածքը և այլն: Երիտասարդ մարդուն բնորոշ այս հակասությունները չափահաս դառնալու, սոցիալական հասունության հասնելու հետ աստիճանաբար հաղթահարվում են: Այս դժվարությունների հաղթահարման, որպես լավ, արժանավոր քաղաքացու կայացման ուղղությամբ ուսանողներին մեծապես օգնում է բարձրագույն դպրոցը:

Թեև անձն իր կյանքի որոշակի ժամանակահատվածում է միայն գտնվում ուսանողի կարգավիճակում, այնուհանդերձ ուսանողական փուլը ոչ միայն կյանքի և հասարակական ակտիվ գործունեության նախապատրաստական շրջանն է, այլև կյանքի կարևոր, բարդ ու նշանակալի հատվածը: Ուսանողությունը ապրում է իր ինքնուրույն և յուրահատուկ չափանիշներով բնութագրվող սոցիալական ու քաղաքացիական կյանքով: Հասարակության մեջ ուսանողության սոցիալական վիճակը ձևավորվում է որպես այնպիսի առանձնահատուկ սոցիալական հարաբերությունների արդյունք, որոնցում նա հանդես է գալիս իր ուսումնական-մասնագիտական գործունեության ընթացքում: Ուսանողությունը ներգրավվում է հաարակական բոլոր հարաբերությունների ամբողջության մեջ տնտեսական և սոցիալական բոլոր մակարդակներում՝ սկսած միջանձնային և ներխմբային կապերից մինչև միջազգային հարաբերությունները: Հասարակության զարգացման տվյալ փուլում ուսանողությունն արդեն չի պահպանում նախկին որակական ամբողջականությունն ու որոշակիությունը. հասարակության շերտավորումը

արտացոլվում է ժամանակակից ուսանողության որակական կազմում:

Ուսանողության՝ որպես սոցիալական խմբի կայացման էական գործոններից մեկը ուսումնական-մասնագիտական գործունեությունն է: Ոչ պակաս կարևոր է ուսանողության բարոյամշակութային գործունեությունը: Ուսանողների բարոյական գործունեություն ասելով ի նկատի ունենք այն գործունեությունը, որը նպաստում է հիմնական սոցիալական գործառույթի իրականացմանը: Այդ գործառույթի վրա է հիմնվում ուսանողության սոցիալական կազմավորումը, ինչպես նաև ուսանողության հնարավոր և իրական մասնակցությունն արդիական այն գործնական խնդիրների իրականացման գործում, որոնք բխում են առհասարակ հասարակության ամբողջական զարգացումից: Այդ գործընթացում ուսանողությունը հանդես է գալիս ինչպես միջանձնային, այնպես էլ հասարակության նկատմամբ որոշակի բարոյական և սոցիալական փոխհարաբերություններում: Միաժամանակ ուսանողության համար մշակվում են բարոյագիտական հրահանգներ, նորմեր, ցուցումներ, ուսանողների մեջ ձևավորվում են բարոյական գիտակցություն, բարոյական ակտիվություն, այսինքն՝ բարոյական մշակույթ: Այս փաստի գիտակցումն ինքնին արդիական է ուանողների բարոյական մշակույթի ձևավորման հիմնախնդրի կարևորության գիտակցման, բարոյական մշակույթի առանձնահատկությունների դիտարկման համար:

Այսպիսով՝ վերլուծությունների արդյունքում կարելի է որոշակիորեն սահմանել, որ ուսանողությունը հասարակության սոցիալական այն խումբն է, որը կազմված է մոտավորապես միևնույն տարիքի երիտասարդներից, որոնք համեմատաբար նույն կրթական մակարդակն ունեն և հասարակության մյուս խմբերի անդամներից տարբերվում են կենսագործունեության կազմակերպման ձևերով, անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների ստացման ընդհանուր նպատակադրմամբ:

Քանի որ ուսանողությունը մտավորականության համալրման հիմքն է, ուստի և նրա սոցիալական դերն ամփոփված է ժողովրդական տնտեսության, առողջապահության, կրթության, մշակույթի, գիտության, կառավարման բնագավառում սոցիալական հետաքրքրությունների և պահանջմունքների ամբողջ համալիրի սպասարկմանն ուղղված ակտիվ սոցիալական դիրքորոշումներին և

գործառույթներին տեսական և գործնական պատրաստության, ուսանողի՝ որպես անձի պահանջմունքների արտահայտման և ամբողջ հասարակության մշտական նորացման մեջ:

Ուսանողության բազմանշանակ գործառութային կոչումը կամ նախանշվածությունը, ամբողջությամբ վերցված, պայմանավորված է նրա սոցիալական դերով: Արդի փուլում ուսանողների հիմնական սոցիալական գործառույթներին է վերաբերում՝ մտավորականությանը բարձրորակ մասնագետներով ապահովելը: Միաժամանակ դա հասարակության մշակութային, մտավոր և գիտատեխնիկական ներուժի բարձրացման գործառույթն է, հասարակությանը ոչ միայն բարձրորակ մասնագետներով, այլև լայն աշխարհայացքով, բարոյամշակութային բարձր հատկանիշներով և արժեքային համակարգով օժտված քաղաքացիներով համալրումը: Սա կարելի է միանշանակ ձևակերպել «հասարակության բարոյական-մշակութային արժեքների ներուժի բարձրացման գործառույթ»[106]:

Քանի որ բարոյական, մշակութային արժեքների հիմնախնդիրը թափանցում է կյանքի բոլոր ոլորտներն ու բնագավառները, ուստի արդի սոցիալական բազմաբնույթ գործառույթների արդյունավետ իրականացման համար ուսանողությանն անհրաժեշտ է տիրապետել բարոյական բարձր մշակույթի, որը ընդհանուր կամ հոգևոր մշակույթի տիրապետման արտահայտություն է:

Ուսանողների բարոյական, մշակութային արժեքների ձևավորումը բարձրագույն դպրոցի կարևոր խնդիրն է հասարակության զարգացման արդի ժամանակահատվածում: Հիմնախնդիրն արդիական հնչեղություն է ձեռք բերում երկրում սոցիալ-տնտեսական վերափոխումների պայմաններում:

Ուսանողության հիմնախնդիրներին նվիրված ժամանակակից հետազոտություններում չկա միասնական կարծիք ուսանողների՝ ըստ գործնական կողմնորոշումների դասակարգման վերաբերյալ: Գոյություն ունի, մեր կարծիքով, բավականաչափ հիմնավորված դասակարգում, որն առանձնացնում է հետևյալ

[106] Вдовюк В.И., Фильков С.М. Основы педагогики высшей школы в структурно-логических схемах: Учебное пособие. – М.: МГИМО(У) МИД России, 2004. – 67 с

դասակարգումը՝

- ուսանողներ, որոնք իրենց օտարում են և՛ ուսումնական հաստատությունից, և՛ հասարակական կյանքից, որոնց համար էականը բուհում «պատսպարվելն» է զինվորական ծառայությունից խուսափելու համար, բարձրագույն կրթության վկայական ստանալը, գուցե և հետբուհական կրթությունը՝ առանց հեռահար նպատակների,
- «բիզնեսմեն» ուսանողներ, որոնց գլխավոր նպատակն է կարիերան և ձեռնարկչատիրական հաջողակ գործունեությունը,
- լավատես ուսանողներ, որոնք ապագայի հստակ նպատակներ ունեն,
- ջանասեր ուսանողներ, որոնք երբեք չեն կորցնում ուսման նկատմամբ հետաքրքրությունը,
- թերահավատ ուսանողներ, որոնք չեն հավատում դրական փոփոխություններին, ապրում են՝ կարծես իրենց կեղևի մեջ պարփակված, լոկ իրենց սահմանափակ աշխարհով ու հետաքրքրություններով,
- ուսանողներ, որոնք հիասթափված են իրականության մեջ տեղի ունեցող այլևայլ երևույթներից և կորցնում են իրենց հաստատունությունը,
- հարմարվող ուսանողներ, որոնք համբերատարությամբ հարմարվում են բոլոր տեսակի փոփոխություններին,
- ինքնիշխան, անհնազանդ ուսանողներ, որոնց համար կյանքում ամենակարևոր արժեքը անձի ազատությունն է, կամայականությունը,
- եսասեր ուսանողներ, որոնք արտաքուստ պահպանում են պատշաճության կանոնները, հանրորեն ընդունված նորմերը, սակայն պատրաստ են, հանուն իրենց շահի ու օգտապաշտության, խախտել ընդունված կարգուկանոնը,
- ագրեսիվ ուսանողներ, որոնք ակնհայտորեն կարող են հակամարդկային դիրքորոշում ունենալ:

Այլ դասակարգում ենք առաջարկում նաև մենք՝ առանձնացնելով ուսանողների երեք տիպեր՝ հետազոտող, ղեկավար, զրուցակից: Ուսանողական խմբի ուսումնասիրման ժամանակ մենք շեշտում ենք այն գործընթացների հետազոտության անհրաժեշտությունը, որոնք իրականանում են տվյալ խմբի

ներսում: Հարցման ենթարկված ուսանողների 15-30%-ը ներգրավված են առաջին խմբում, երկրորդ խմբում են 10-15% ուսանողներ, երրորդ խմբում՝ 60-70% ուսանողներ:

Ըստ Ն.Օ. Լոսսկու՝ ուսանողական խմբի վերլուծության արդյունքում կարելի է առանձնացնել ուսանողների հետևյալ տիպերը՝ 1. գործակալ, 2. էմիգրանտ (որոնք ձգտում են երկից դուրս գալ), 3. ավանդապահ[107]:

Ուսանողների նմանօրինակ դասակարգումները, մեր կարծիքով, նշանակալիորեն ընդլայնում են ուսանողների բարոյական, մշակութային արժեքների ձևավորման հնարավորությունները: Ցանկացած գործունեություն՝ սոցիալական, գեղագիտական և այլն, որոշակի ազդեցություն է գործում բարոյական, մշակութային արժեքների ձևավորման վրա: Այնուհանդերձ ուսանողների բարոյական, մշակութային արժեքների ձևավորման ցուցանիշներն են նրա մակարդակները (ցածր, միջին և բարձր), ինչպես նաև ուսանողների կողմից մշակույթի նկատմամբ վերաբերմունքը:

Բուհում սովորող ուսանողը՝ ապագա մասնագետը, կայանում է երկու փուլով՝

1) ուսանողի կարգավիճակի յուրացում,

2) մտավորականի սոցիալ-մշակութային դերին նախապատրաստում:

Առաջին փուլին են վերաբերում հետևյալ գործընթացները՝ բուհ ընդունված ուսանողի հարմարվելը բուհական կյանքին, բուհի բարոյահոգեբանական միջավայրին, ուսանողության շրջանում ընդունված բարոյական նորմերին ու չափանիշներին, ուսանողական կենսակերպի յուրացում և այլն: Այս փուլում հատկապես կարևոր են կայունությունը իմացական, հոգևոր-բարոյական ոլորտում, բարոյամշակութային նոր պահանջմունքների և կողմնորոշումների ձևավորումը:

Երկրորդ փուլում կայունանում են բարոյական գիտելիքները, ուսման մեջ և կենսական տարբեր իրավիճակներում ու հարաբերություններում արմատավորվում են բարոյական սկզբունքները, գործունեության տարբեր ոլորտներում դրսևորվում է բարոյական գործունեություն, դրվում է բարոյամշակութային համակողմանի

[107] Лосский Н.О. Свобода воли. - М.: Прогресс.-1991.-285с.

զարգացման հեռանկարային ծրագրի հիմքը:

Արդի պայմաններում ուսանողների բարոյական մշակութային արժեքների ձևավորման գործընթացում մեծ ազդեցություն ունեն հասարակության բարեփոխման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները: Արմատական փոփոխություններ են տեղի ունենում նաև ուսանողների հոգեբանության, աշխարհընկալման մեջ. նրանց մեծամասնությունն այս փոփոխություններն ու հասարակության տարբերացումը բնականոն է համարում:

ԽՍՀՄ հասարակարգում «գործազրկություն» հասկացությունը գրեթե չէր շրջանառվում: Այդ ժամանակահատվածում հասարակական կյանքում առկա էին բացասական շատ երևույթներ, սակայն զանգվածային գործազրկությունը՝ որպես մշտական սոցիալական երևույթ, չէր արձանագրվում: Կապված շուկայական տնտեսությանն անցման հետ՝ գործազրկությունն առավել կամ պակաս չափով մշտական երևույթ դարձավ: Ուսանող երիտասարդության շրջանում արդի ժամանակաընթացքում նոր վերաբերմունք է ձևավորվել սոցիալական այս կարևոր խնդրի նկատմամբ: Այդ վերաբերմունքը ակնառու է արտահայտված զույցների ընթացքում տրված հետևյալ հարցման արդյունքում. *«Որքանո՞վ է գործազրկությունը ձեզ համար սոցիալական իրական սպառնալիք»*: Հիմնախնդիրն անհանգստություն է պատճառում հարցման ենթարկված 50% ուսանողներին, 33,1%-ը բնավ չի անհանգստանում, դժվարանում է պատասխանել 16,9 %-ը:

Գործազրկությունը դանդաղ, բայց հաստատուն մուտք է գործում մեր հասարակության մեջ՝ դառնալով մարդկանց կենսակերպի դրսևորում: Միանգամայն հիմնավորված կարելի է վիճաբանել այն մասնագետների հետ, որոնք պնդում են, թե գործազրկությունն ինչ-որ տեղ բարիք է բերում հասարակությանը: Համաշխարհային պրակտիկան ցույց է տալիս, որ գործազրկությունը ոչ թե խթանում է աշխատանքի արտադրողականությունը, այլ, ընդհակառակը, սաստկացնում է սոցիալական բախումները, հանգեցնում հանցագործությունների աճին: Այս առումով հատկապես մտահոգիչ է երիտասարդության բարոյահոգեբանական և հոգևոր խաթարումների վիճակագրական պատկերը՝ ըստ Ազգային վիճակագրական տվյալների:

Աղյուսակ 4.

Գործազրկության մակարդակը ՀՀ-ում 2016 թ. դրությամբ

Թվական	Բացարձակ Արժեք
2015	18.5
2014	17.6
2013	16.2
2012	17.3
2011	18.4
2010	19.0
2009	18.7
2008	16.4
2007	28.7
2006	27.8
2005	31.2
2004	31.6
2003	31.2
2002	35.3
2001	38.4

Սկսած 2008թ.-ից ցուցանիշը համադրելի չէ նախորդ տարիների ցուցանիշների հետ: 2008թ.-ից գործազուրկների թվաքանակը ՀՀ ԱՎԾ կողմից հաշվարկվում է Եվրամիության երկրների կողմից կիրառվող ԱՄԿ ստանդարտ սահմանման համաձայն: Վերջինս մասնակիորեն տարբերվում է 2001-2007թթ. կիրառված մեթոդաբանությունից, որի հիմքում ընկած էր ԱՄԿ կողմից առաջարկված գործազրկության ընդլայնված սահմանումը՝ անցումային փուլում գտնվող երկրներում կիրառելու համար (ըստ երկրի հայեցողության)[108]:

Հասարակության խոր բևեռացումը, նրա հիմքերի խարխլումը հանգեցրին հասարակական շատ հեղինակությունների արժեզրկմանը: Դրա վկայությունն են ժամանակակից ուսանող երիտասարդության սոցիալական արժեքային

[108] http://www.armstat.am/am/?nid=126&id=08010&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC

համակարգում լուրջ ձևախեղումները և աղավաղված դրսևորումները:

Այս հանգամանքը ևս մեկ անգամ վկայում է, որ անձի բարոյական մշակութային արժեքների զարգացումը հնարավոր է միայն բացարձակ ազատության պարագայում, որի էությունն ամփոփված է ոչ միայն ուսանողության կենսական պայմաններում, այլև նպատակներում, իդեալներում, դրդապատճառներում:

Ուսանողի բարոյական մշակութային արժեքների առկայությունը նրա բանականության ձայնն է, հենց ազատության առկայությունը՝ ի հակակշիռ խաբեության և բռնությունների: Երեսպաշտությունը, խարդախությունը, անազնվությունը, կեղծ դիրքորոշումը, սուտը, բռնությունը, արմատապես հակասում են բարոյամշակութային արժեքներին:

Հոգևոր-բարոյական իդեալներին հասնելու անկարողության, բարոյամշակութային ճգնաժամի պայմաններում ավելի ու ավելի տարածում է գտնում ցանկացած գնով նյութական բարօրության հասնելու հնարավորության՝ հասարակության կողմից թույլատրելիությանը: Այս կարծիքն է արտահայտում հարցման ենթարկված երիտասարդների 24%-ը:

Ուսանողների գերակշիռ մասի՝ 56,44%-ի համար կրթաթոշակը կազմում է հիմնական եկամուտը: Հարցվածների 24,75%-ը պատասխանել է, որ նույնիսկ այդ եկամուտը չունի: Կողմնակի վաստակ ունի միայն հարցվածների 7,5%-ը, 51,6%-ը չունի որևէ կողմնակի վաստակ կամ մասամբ վաստակում է ամառային արձակուրդների ընթացքում պատահական զբաղվածության միջոցով: Հարցման ենթարկված ուսանողների 61,39%-ը ապրում է ծնողների հաշվին:

Ըստ ուսանողների շրջանում հարցազրույցների արդյունքների՝ հարցվածների միայն մեկ հինգերորդ մասի համար է միջին եկամուտը համապատասխանում ապրուստի նվազագույն սպառողական զամբյուղին: Հարցվածների 80%-ը իր եկամուտը միջինից ցածր է գնահատում: Այսպիսով՝ թե՛ եկամտի մակարդակի ցուցանիշները, թե՛ նյութական բարեկեցության ինքնագնահատումը ակնհայտորեն ցույց են տալիս, որ ժամանակակից ուսանողության երկու երրորդը ապրում է կեցության նվազագույն կենսամակարդակում:

Ուսանողների բարոյական մշակութային արժեքների ձևավորման ուղղությամբ մեծ ազդեցություն ունեն տարածաշրջանի մշակութային ավանդույթները, բուհի և ֆակուլտետի ուղղվածությունը, ուսանողների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, բուհի, կուրսի, խմբի մշակութային և բարոյահոգեբանական մթնոլորտը:

Էական նշանակություն ունի նաև բուհ ընդունվող ուսանողի բարոյամշակութային զարգացման մակարդակը, որը մեծապես կախված է ընտանիքի մշակութային արժեքների զարգացվածության մակարդակից, դպրոցական և արտադպրոցական կրթության և դաստիարակության որակից, միջավայրի ազդեցությունից:

Պրակտիկան ցույց է տալիս, որ բուհում ուսումնառության ավարտին միևնույն խմբում հաճախ չի հաջողվում ուսանողների մեծ մասի բարոյական, մշակութային արժեքների բարձր մակարդակ ապահովել:

Դեռևս բուհ ընդունվելիս դիմորդներն արդեն գիտելիքների որոշակի պաշար ունեն, նրանցից շատերն ունեն արժեքային դրդապատճառներ, պահանջմունքներ կողմնորոշումներ: Բայց ոչ միշտ են այդ հատկանիշները լավագույնս իրացվում ուսանողի ուսումնառության գործընթացում, վարքում և առհասարակ գործելակերպում: Մենք այն համոզմանն ենք, որ ուսանողի բարոյական, մշակութային արժեքների ձևավորման գործընթացում բուհի խնդիրն է մշակել կայուն ստեղծագործական հետաքրքրություններ և պահանջմունքներ, այսինքն՝ օգնել գործնականում յուրացնելու բարոյական, մշակույթի բովանդակությունը, որի նախադրյալներն արդեն դրվել են դպրոցի, ընտանիքի, սոցիալական միջավայրի կողմից:

Հաճախ է պատահում, որ ուսանողը յուրացնում է ոչ այն, ինչն իրական արժեք ունի, այսինքն՝ կեղծ արժեքներ: Բարոյամշակութային արժեքները տարերայնորեն են ձևավորվում: Այնուհանդերձ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ բարոյամշակութային հատկանիշները փոխկապակցված են հոգևոր մշակույթի այլ բաղադրատարրերի հետ: Մարդուն չի կարելի պարտադրել, որ նա տիրապետի բարոյականության բարձր արժեքներին, և առավել ևս հանդիմանել, որ նա

բարոյական բարձր մակարդակ չունի: Ընդհակառակը, հատկապես սոցիալական այդ խմբում՝ ուսանողության մեջ պետք է հետևողական աշխատանք կատարել և ձգտել ամրապնդելու եղած արժեքներն ու բարոյական պատկերացումները: Անձի ներաշխարհում բարոյական մշակութային արժեքներ ձևավորելու ցանկացած բռնի մոտեցում՝ պատժի թե խրախուսանքի ձևով, ինքնին անբարոյական է:

Բարոյամշակութային արժեքների դաստիարակության առումով շատ կարևոր է բարոյական սկզբունքների ու չափանիշների սահմանումը՝ մարդասիրական գաղափարների գերակշռությունը եսապաշտական մղումների, համամարդկային գաղափարներինը՝ անձնապաշտության նկատմամբ, քանի որ մշակելով այսօրինակ չափանիշներ՝ ուսանողը ձևավորում է իր սոցիալ-ստեղծագործական դիրքորոշումները: Եվ այնպես, ինչպես առանց կատարյալ զարգացած չափանիշների չի կարող ձևավորվել մասնագետի՝ գործունեության նկատմամբ որակական մոտեցումը և իր ստեղծագործական աշխատանքից ստացած բավարարվածությունը, այնպես էլ առանց բարոյական, մշակութային արժեքների առկայության չի կարող ձևավորվել ուսանողի հոգևոր արժեքներն ընդհանրապես:

Հոգևոր արժեքները՝ որպես մարդու բարոյական ներուժի արտահայտություն, և բարոյական արժեքները՝ որպես նրա մի մասը, որոշում են բարոյամշակութային հատկանիշների բովանդակությունն ու կառուցվածքը:

Արդի պայմաններում հասարակական կյանքի վերակառուցման գործընթացների հիմնական խնդիրներն ու նպատակներն են անձնակողմնորոշիչ մոտեցումների մշակումը, հասարակական կյանքի մարդասիրացումն ու ժողովրդավարացումը: Այս խնդիրներին համապատասխան էլ բարձրագույն դպրոցի առջև ծառացած է այնպիսի մարդու ձևավորման խնդիրը, որն ազատ է սոցիալական գաղափարախոսական պարտադրանքից և ինքնազարգացման ու ինքնիրացման լայն ընտրության հնարավորություն ունի: Քանի որ առավել ունակ և առաջադեմ երիտասարդության ձևավորումը հիմնականում իրականանում է բուհում, ուստի և քննարկվող հիմնախնդիրը ենթադրում է յուրաքանչյուր ուսանողի՝ որպես ազատ և ստեղծագործ անձի զարգացման համար գործուն մանկավարժական պայմանների ստեղծում՝ նրա կարողություններն ու իրական հնարավորությունները

բացահայտելու, առկա էական ուժերը իրացնելու համար: Դա իրականանում է ուսումնադաստիարակչական և մասնագիտական պատրաստության գործընթացում՝ դրանով իսկ նրա մեջ քաղաքացիական և մասնագիտական բարձր հատկանիշներ ձևավորելու համար:

Այս պայմաններում առավելապես շեշտվում է յուրաքանչյուր ուսանողի անձի նկատմամբ դաստիարակության սուբյեկտների կողմից անհատական մոտեցման խնդիրը՝ հիմք ընդունելով դաստիարակության անձնային մոտեցման սկզբունքը: Ահա թե ինչու արդի ժամանակահատվածում բարձրագույն դպրոցի առաջնահերթ խնդիրն է դառնում յուրաքանչյուր ուսանողի անձի՝ հասարակության նորացման գործընթացների ապագա կազմակերպչի ու իրականացնողի բարոյական մշակույթի ձևավորումը:

Ուսանողների բարոյամշակութային արժեհամակարգի հիմնախնդիրներին նվիրված գիտագործնական կոնֆերանսների նյութերը, հմուտ մանկավարժ-հետազոտողների մեթոդական մշակումները, հոդվածները, աշխատություններն ու առանձին հրատարակումները ցույց են տալիս, թե որքան բազմազան են այն խնդիրները, որոնք կապված են ուսանողների բարոյական մշակութային արժեքների ձևավորման գործընթացների հետ: Այդ գործընթացների ներկա փուլի արդիականությունը հատկապես շեշտվում է այն հանգամանքներով, որ այսօր օրախնդիր է նորովի մտածողությամբ օժտված մարդու դաստիարակությունը: Ամբողջ բարդությունն այն է, որ բարոյական մշակութային արժեքների ձևավորման խնդրի իրականացումը անհնար է առանց հասարակության բարոյականության համակարգի ձևավորման ծրագրի ընդհանրապես և ուսանողությանը մասնավորապես:

2.4. Ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման ուղիներն ու միջոցները

Ուսանողների բարոյամշակութային, մասնագիտական արժեքների ձևավորման համակարգված աշխատանքն առավել նպատակասլաց և արդյունավետ է

իրականանում հատկապես ուսանողական տարիներին: Ուսանողական տարիներին են իրականացվում երիտասարդության ակտիվ կենսագործունեությունը և հոգևոր-բարոյական կայացումը, որոնք, դպրոցական արդեն հարազատ դարձած միջավայրից հետո հայտնվելով նոր ու անծանոթ միջավայրում, ներգրավվում են բարդ միջանձնային հարաբերություններում և առավել կարիք ունեն աջակցության, խորհուրդների, բարոյական սատարի, ապրումակցման, հաղորդակցման:

Խնդիրը հատկապես սրվում է սոցիալական անկայունության և հասարակական ցնցումների պայմաններում, երբ նույնիսկ փորձառու մարդիկ և մասնագետներ դժվարանում են շատ հարցերի պատասխաններ տալ՝ կապված բարոյամշակութայնին արժեքների հետ: Հատկապես այն դեպքում, երբ դասախոսը լսարանային պայմաններում իրավունք չունի անդրադառնալու քարոզչական, քաղաքական, գաղափարական հարցերի, բացառությամբ որոշ հումանիտար դասընթացների շրջանակների: Փաստորեն ուսանողն իրականում հիմնականում հնարավորություն չունի տեսնելու դասախոսի՝ կառավարող սուբյեկտի արժեքային կողմնորոշումները, վարքագծային արժեքային առանձնահատկությունները, դասախոսի անձնական օրինակները արժեքների ձեռբերման գործընթացում: Շուկայական հարաբերություններում ոչ բավականաչափ կողմնորոշումը, անորոշությունը, քրեական միջավայրի աշխուժացումը, աշխարհայացքային կայուն կողմնորոշումների և բարոյական համոզմունքների բացակայությունը երիտասարդության շրջանում շփոթություն և անորոշություն են հարուցում, և նրանք հեշտությամբ հայտնվում են վատ միջավայրում, հոռի բարքերի ազդեցության տակ: Երիտասարդները հաճախ են հայտնվում ծայրահեղության մեջ, բախումնային իրավիճակներում, կորցնում հոգեկան-հուզական հավասարակշռությունը. արմատապես փոխվում է արժեբանական կողմնորոշումների համակարգը:

Սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական ճգնաժամը, որի հաղթահարումը հասարակության կարևոր խնդիրներից է, պահանջում է ազգային և համամարդկային գաղափարների համախմբում: Կրթության և մշակույթի բնագավառի շատ գործիչներ կոչ են անում վերադառնալ ավանդական արժեքներին, նախնիների ավանդույթներին, շատերն էլ առաջարկում են

ակտիվորեն ներգրավվել արևմտյան համակարգերին (անհատականացում, պրագմատիզմ, բարոյական արժեքների նկատմամբ նյութական արժեքների գերակայություն): Նորովի են հնչում ազգայնական և ազգայնամոլության աշխարհայացքային ուղղությունները: Հակասական են մեկնաբանվում «հայրենիք», «քաղաքացիություն», «հայրենասիրություն», «ազգայնականություն» հասկացությունները:

ԽՍՀՄ կրթական համակարգում բարձրագույն դպրոցն ուներ ուսանող երիտասարդության դաստիարակության որոշակի կոնկրետ համակարգ, որի բովանդակությունը տոգորված էր իշխող գաղափարախոսությամբ, բայց կազմակերպական տեխնոլոգիական դրվածքի պայմաններում այն բավականաչափ արդյունավետ էր իրականանում: Սոցիալ-քաղաքական հասարակարգերի հերթափոխը ժողովրդի աշխարհայացքում խոր տեղաշարժեր և շփոթություն առաջացրեց, որը բացասաբար ազդեց նաև բուհում դասավանդողների հոգևոր ներաշխարհի, կողմնորոշումների, պատկերացումների վրա, ավելին, նրանցից շատերը այն համոզմանն են, որ դաստիարակչական աշխատանքը պետք է իրականանա ուսումնական գործընթացի շրջանակներում: Բարձրագույն դպրոցում երիտասարդության դաստիարակության խնդիրն ամբողջությամբ վերցված ոչ բավականաչափ արդյունավետ է լուծվում՝ ուսանողական գիտական ընկերության, ուսանողական խորհուրդների ջանքերով: Դրա համար առկա են մի քանի պատճառներ՝

1) մասնակի են պահպանված դաստիարակության նախկին ավանդույթները,

2) բացակայում են ժամանակի ոգով ձևավորված աշխարհայացքային դրույթներ և տեսական ու պրակտիկ դաստիարակության մեթոդաբանական մշակումներ,

3) փոխվել է ժամանակակից ուսանողի սոցիալական դեմքը. ուսանողական միջավայրում սոցիալական շերտավորումը հանգեցնում է նյութապես ապահովված ընտանիքների ուսանողների սպառողական հոգեբանության ձևավորմանը, նրանց գաղափարական պասսիվությանը,

4) բուհի ֆինանսական դժվարությունները, դասավանդողների աշխատա-

վարձը, լրացուցիչ վարձատրման անհրաժեշտությունը հանգեցնում են բարձրորակ մասնագետների կրճատմանը,

5) ուսման վարձավճարները, որոնք որոշ ուսանողներին ներգրավում են աշխատանքային գործունեության մեջ: Այս դեպքում ուսումնառությունը ստվերվում և խոչընդոտվում է աշխատանքային գործունեության ընթացքում առաջացող դժվարություններով՝ գիշերային հերթափոխ, ցածր աշխատավարձ, գերլարված, գերհոգնեցնող ռեժիմ, ֆիզիկական ծանրաբեռնվածություն և այլն:

Այս եզրահանգումները բավականաչափ լուրջ բնույթ ունեն, և դրանք պետք է խորապես հաշվի առնվեն: Բարձրորակ մասնագետների պատրաստումը, սակայն, ենթադրում է բուհի շրջանավարտի հոգևոր-բարոյական հատկանիշների ձևավորում, հակառակ դեպքում հնարավոր չէ խոսել այն մասին, որ բուհը համապատասխան մակարդակով է իրականացնում պետության և հասարակության պահանջները: Ուսուցման գործընթացն ինքնին ենթադրում է դաստիարակչական համակարգի ձևավորում, որը երիտասարդությանը թույլ է տալիս յուրացնել մարդկության՝ ժամանակով ստուգված հոգևոր-մշակութային արժեքները և ձևավորել բարոյամշակութային կայուն համոզմունքներ: Ի.Ա. Իլյինը գրում է. «Կրթությունն առանց դաստիարակության ոչ թե ձևավորում է մարդուն, այլ սանձազերծում է նրան, նրա տրամադրության տակ է դնում կենսականորեն շահավետ հնարավորություններ, տեխնիկական հմտություններ, որոնցով նա, դառնալով անհոգի, անխիղճ, անհավատ և անբովանդակ, չարաշահում է այդ գիտելիքները»[109]:

Ուսումնադաստիարակչական գործընթացում չի կարելի հաշվի չառնել մարդու մեջ ենթագիտակցական ոլորտի դերը, որի հետազոտությամբ զբաղվել են Զ. Ֆրոյդը և Կ. Յունգը: Ըստ Կ. Յունգի՝ հակումները, որոնք կուտակված են մարդու մեջ, կործանարար են և առավել վտանգավոր, քան նախամարդու բնազդները: Այդ հակումները հատկապես արտահայտվում են երիտասարդ հասակում՝ հաճախ դրսևորվելով անկանխատեսելի ձևերով, և անհնար է այդ հակումները չափավորել

[109] Ильин И.А. О грядущей Росии. М., 1993.-78с.

դաստիարակչական գործընթացից դուրս, որը մարդուն բարի, մարդասեր, ազնիվ ու առաքինի է դարձնում[110]: Քաղաքակիրթ հասարակության համար մարդը բարձրագույն արժեք է, և հենց հասարակությունն էլ պետք է անի ամեն հնարավորը՝ բացահայտելու մարդու՝ բնությունից շնորհված տվյալներն ու անհատականությունը, իրացնելու հոգևոր և ֆիզիկական ներուժը, լիովին դրսևորելու իր ստեղծագործական հնարավորությունները:

Այսօր բուհում պետական հոգածությամբ պետք է ստեղծել բարոյամշակութային դաստիարակության նոր համակարգ՝ արդի տնտեսական, քաղաքական և սոցիալական իրավիճակին համապատասխան: Միաժամանակ պետք է խորապես հաշվի առնել նախկին բուհական համակարգի դաստիարակչական լավագույն ավանդույթները, հատկապես կազմակերպական բնույթի, որոնց ընթացքում լուծվում էին երկու կարևոր խնդիրներ՝ դաստիաակության օբյեկտների (ուսանողների) վրա ներգործություն և ուսանողներին դաստիարակչական գործընթացի սուբյեկտների վերածում: Հատկապես արժևորվում է երկրորդ ուղղությունը, երբ ուսանողները իրենք են նախաձեռնում դաստիարակչական բովանդակությամբ տարբեր միջոցառումներ: Արդի բուհում նշանակալի տեղ պետք է գրավի աշխարհայացքի ձևավորումը, ստեղծագործական ունակությունների զարգացումը և մասնագիտական էթիկայի ձևավորումը:

Դաստիարակչական նոր համակարգի ստեղծման համար անհրաժեշտ է միավորել փիլիսոփայության, սոցիոլոգիայի, մշակութաբանության, ազգագրության, հոգեբանության բնագավառում առկա բոլոր գիտելիքները անձի ներաշխարհի, միջանձնային և միջազգային հարաբերությունների, ազգային, քաղաքացիական-հայրենասիրական և համամարդկային գիտակցության մասին: Այդ գիտությունների՝ մանկավարժական տեսանկյունից միավորումը, հայրենական և արտասահմանյան մանկավարժական փորձի վերլուծությունը՝ հիմնված փոխադարձ հարգանքի, հանդուրժողականության վրա, տարբեր ժողովուրդների մշակույթների վերլուծությունը հնարավորություն են տալիս հետազոտել դաստիարակության արդի

[110] Янг К.Г. О психологии восточнчых религий и философии.-М.: Медиум, 1994.-255с.

համակարգի հիմնախնդիրները, ստեղծել գիտելիքների ամբողջական, տրամաբանորեն փոխկա-պակցված համակարգ:

Միջանձնային հարաբերությունների և հաղորդակցման մշակույթի զարգացման գործընթացի մանկավարժական վերլուծությունը թույլ է տալիս տեսական դրույթներ մշակել, որոնք և կազմում են դաստիարակության տեսության կառուցվածքի բաղադրատարրերից մեկը: Նպատակասլաց դաստիարակությունը մենք դիտարկում ենք որպես անձի սոցիալականացման գործընթաց, որի կազմակերպումը կոչված է կարգավորելու էթնոսոցիալական միջավայրում մարդկանց հարաբերությունները, ձևավորելու նրանց միջանձնային հարաբերությունները, բացառելու միջանձնային հարաբերություններում բացասական ազդեցությունը:

Բուհի կրթական համակարգում պետք է կենտրոնացվի ազդեցությունը էթնոսոցիալական միջավայրում ուսանողների վրա, նրանց հաղորդեն այնպիսի գիտելիքներ, որոնք նպատակաուղղված լինեն սեփական և այլ ժողովուրդների մշակույթների նկատմամբ դրական հարաբերությունների ձևավորմանը, ժողովուրդների բարեկամության, քաղաքացիականության, հայրենասիրության զգացումների դաստիարակությանը:

Արժեքների գերակայության հարցում պետք է ելակետ ունենալ այն հանգամանքը, որ համամարդկային արժեքները համադրվեն ազգային արժեքներին: Մեջբերենք ազգային և համամարդկային արժեքների մասին Ն.Ս. Բերդյաևի խորհրդածությունները. «Արժեքը երբեք չի եղել և երբեք չի լինի վերացական մարդկային. այն միշտ կոնկրետ մարդկային է, այսինքն՝ ազգային, անհատական-ժողովրդական և այդ հատկանիշների շնորհիվ էլ բարձրանում է մինչև համամարդկային արժեքների»[111]:

Ըստ Գ.Ն. Վոլկովի՝ «…Ժողովուրդները խոսում են տարբեր լեզուներով, սակայն նրանց մեջ առկա է հոգևոր ընդհանրությունը»[112]:

Ուսանողների դաստիարակության գործընթացում մշակութային արժեքների միջավայրի ստեղծումը հիմնավորվում է այն համոզմունքով, որ միայն բարձր

[111] Бердяев Н.А., Судьба России, М., 1990. - 327с.
[112] Волков Г. Н. Этнопедагогика. М.: Изд. Центр «Академия», 1999.-168с.

մշակութային արժեքների առկայության մթնոլորտում է հնարավոր դաստիարակել այնպիսի մարդու, որը ձգտում է ինքնիրացման և օժտված է սոցիալական պատասխանատվության զգացումով, քննադատական մտածողությամբ և նյութական ու հոգևոր այն արժեքները գնահատելու կարողությամբ, որոնք կուտակված են մշտապես փոփոխվող աշխարհում այդ արժեքները ստեղծագործաբար հարստացնելու ունակ մարդկության կողմից: Մշակույթի դաստիարակչական նշանակությունը կապված է ոչ միայն ազգային և համամարդկային արժեքների, նորմերի, ավանդույթների փոխադարձ հաղորդման, այլև բազմաշերտ և հարափոփոխ աշխարհում դրանք ներառելու հնարավորության հետ: Մշակութային արժեքների տիրապետումն ընդլայնում է ընտրության սահմանները, մարդուն հնարավորություն է ընձեռում իրեն հետաքրքրող հարցերի պատասխանները ինքնուրույնաբար որոնել, բացահայտել աշխարհը, հարաբերակցել իր պատկերացումները բնության և հասարակության մեջ ձևավորված շատ երևույթներին: «Մշակութապես կիրթ է այն մարդը,- գրում է Վ.Վ. Ռոզանովը,- որը ոչ միայն իր մեջ որևէ բանի պաշտամունք ունի, այլև իր գաղափարներում, զգացմունքներում, ձգտումներում, վերջապես կենսական իրավիճակներում իր դրսևորումներում բարդ է, ոչ պարզունակ, ոչ միանշանակ»[113]:

Զգացմունքների և դատողությունների բազմազանությունը մարդու մեջ արտահայտվում է այն ժամանակ, երբ ընդլայնվում է նրա հաղորդացման շրջանակը այլ մարդկանց, նրանց հայացքների, սեփական և այլ ժողովուրդների պատմամշակութային ավանդույթների հետ: Գտնվելով տարբեր մշակույթների հետ ակտիվ շփման մեջ՝ ուսանողը ձեռք է բերում ինքնորոշման, կենսական դիրքորոշումներում ճիշտ դրսևորման, նոր գիտելիքների բացահայտման, այլ կրոնների, մշակույթների, հոգեբանության, կարծիքների, գաղափարների նկատմամբ բարյացակամ վերաբերմունք ձևավորելու ունակություն:

Մշակութային հաղորդակցումը հնարավորություն է տալիս զգալու կյանքի լիարժեքությունը: Մշակութային արժեքը թափանցում է անձնական պատկերացումների և

[113] Розанов В.В. Религия. Философия. Культура. -М.: Республика, 1992.-397с.

պահանջմունքների շրջանակը, իսկ դա այն հիմքն է, որը թույլ է տալիս ավելի ներդաշնակորեն լուծել կրթության և դաստիարակության խնդիրները՝ չպարտադրելով արդեն իսկ առաջարկված դրույթները և անձին ընդգրկելով մշակութային արժեքների, իդեալների, նախընտրելի կերպարների փոխազդեցության ոլորտում:

Բարոյական, մշակութային արժեքների ձևավորումը բարոյական դաստիարակության նպատակների համալիր դրսևորումներից է, որը միավորում է այդ նպատակներին հասնելու բոլոր միջոցները սոցիալական և սոցիալ-հոգեբանական որոշակի պայմանների հաշվառմամբ: Բարոյական մշակութային արժեքների դաստիարակության ակտիվացման՝ գիտականորեն հիմնավորված ուղիների առանձնացման համար պետք է խորապես հաշվի առնել հետևյալ դրույթը. ուսանողների կողմից բարոյամշակութային արժեքների յուրացման արդյունավետությունը կախված է ուսանողի՝ իր անձի կատարելագործման ուղղությամբ նպատակաուղղված աշխատանքից, ուսանողի կենսական ակտիվ դիրքորոշումից:

Ուսանող երիտասարդության բարոյական մշակութային արժեքների զարգացման հիմնական ուղիներն են՝

- բարոյամշակութային ինքնակատարելագործման ձգտման ձևավորումը՝ որպես բարոյական մշակութային արժեքների հիմք և ցուցիչ, այդ ձգտման կատարելագործումը և ակտիվացումը,
- այդ ձգտման իրականացման ունակության զարգացումը անձի կենսագործունեության բոլոր ձևերում և տեսակներում:

Առաջադրված նպատակներին հասնելու համար կարող են կիրառվել ինչպես նոր, այնպես էլ ավանդական տարբեր միջոցներ: Դրանցից ամենակարևորը թերևս արվեստին հաղորդակցվելն է:

Արվեստի ստեղծագործություններում արտացոլված են մարդկանց բազմադարյան փորձը, աշխարհի մասին գիտելիքները: Արվեստը հասկացող, սիրող և գնահատող մարդը առավել խոր և համակողմանի է ճանաչում շրջապատող աշխարհը: Միլիոնավոր մարդկանց համար արվեստը ոչ միայն կյանքի

ճանաչողության միջոց է, այլև մարդու ներաշխարհը լցնում է այնպիսի բովանդակությամբ, որն ի զորու չեն անելու անձի հոգեկան աշխարհի վրա ազդող ներգործության մյուս միջոցները: Ըստ Վ.Գ. Բելինսկու՝ որտեղ չկա արվեստի տիրակալություն, այնտեղ մարդիկ ոչ թե առաքինի, այլ միայն խելամիտ են, ոչ թե բարոյամշակութային, այլ զգույշ են. նրանք չեն մարտնչում բարու դեմ, այլ խուսափում են նրանից[114]:

Արվեստի ստեղծագործություններն ունեն ներգործուն մեծ ուժ: Նրանք նշանակալի հետք են թողնում մարդու գիտակցության մեջ, նրան մղում են ավելի լավ և կատարյալ լինելու: Բայց որպեսզի արվեստի ստեղծագործությունները կատարեն իրենց դաստիարակչական գործառույթները, մարդու մեջ պետք է զարգացած լինի գեղեցիկի զգացումը, նա պետք է կարողանա ընկալել գեղարվեստական ստեղծագործությունները, խորհրդածել դրանց շուրջ, դասեր քաղել:

Արվեստի ցանկացած ստեղծագործություն, անկախ հեղինակի բարոյական դիրքորոշումից, ձևավորում է մարդու աշխարհայացքը: Նույնիսկ եթե ստեղծագործությունը պարունակում է որոշակի բարոյագիտական օրինակ կամ կերպար, այդ ազդեցությունը անմիջապես չի երևում. այն երկարատև գործընթաց է, և արդյունքը ոչ միշտ է ակնհայտորեն արտահայտվում անգամ բուհում ուսումնառության տարիներին: Հոգևոր բարձր հատկանիշների, հետաքրքրություն-ների և պահանջմունքների, աշխարհայացքի և համոզմունքների ձևավորումը բարդ և երկարատև աշխատանք է պահանջում:

Ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման միջոցներից են ոչ միայն արվեստը (դասական երաժշտություն, թատրոն, բալետ, գեղարվեստական գրականություն, ցուցահանդեսներ), այլև ազգային մշակույթը (ժողովրդական սովորույթներ և ավանդույթներ, մայրենի լեզու, գրականություն, բանահյուսություն):

Բարոյական մշակութային արժեքների ձևավորման կարևոր միջոց է բարոյագիտական կրթվածությունը: Մեր կողմից արդեն նշվել է, որ բարոյական

[114] Белинский В.Г. Избранные педагогические сочинения, М-Л Акад. Наук РСФСР /Под ред. дейст. чл. АПН Е.Н. Медынского/ М., 1948. - 280с.

մշակութային արժեքների ձևավորման պայմաններն են աշխարհայացքի հասունությունը, բարոյագիտական կրթվածությունը: Այս գործընթացում կարելի է առանձնացնել մի քանի ուղղություններ՝

1) արվեստի և բարոյագիտության բնագավառում տեսական գիտելիքների յուրացում (համապատասխան առարկաների ուսումնասիրման գործընթացում),

2) այցելություն մշակութային օջախներ, ցուցահանդեսներ, մասնակցություն մշակութային բազմաբնույթ միջոցառումների,

3) ներբուհական և արտալսարանային գործունեություն:

Բարոյամշակութային կրթվածությունն ազդում է անհատական ինքնագիտակցության, կենսական տարբեր իրավիճակներում որոշումներ ընդունելու և դրանք իրագործելու համար բարոյական դիրքորոշումների ձևավորման վրա: Այն օգնում է վարքի չափանիշներ սահմանել, կենսական որոշակի իրավիճակում ճիշտ ընտրություն կատարել: Բարոյագիտական կրթվածությունը բարձրացնում է բարոյամշակութային գիտակցության և վարքի մշակույթը, ամրապնդվում են վարքի կարգավորիչները:

Բարոյամշակութային կրթվածությունը նախատեսում է բարոյաէթիկական գիտելիքների, հիմնական սկզբունքների, վարքի նորմերի և կանոնների, իդեալների, հայացքների, ինչպես նաև բարու, պարտքի, խղճի, պատասխանատվության, երջանկության, կյանքի իմաստի հասկացությունների յուրացման հետևողակա-նություն և համակարգվածություն: Դա անձի՝ վճռական որոշումներ ընդունելու կարողության զարգացման նախապայմանն է:

Բարոյամշակութային կրթվածությունն օգնում է կարգավորել և վերահսկել սեփական վարքը: Ուսանողի բարոյամշակութային կրթվածությունը հիմնականում ձևավորվում է ուսումնական գործընթացում՝ նրան գիտելիքներ հաղորդելով, որի գլխավոր սուբյեկտը դասավանդողն է: Ուսանողի բարոյամշակութային համակարգը ներգործվում է դասավանդողի բարոյական կերպարով, արժեքային համակարգով, նրա անձնական օրինակով:

Միաժամանակ չի կարելի գերագնահատել ուսանողի անձի վրա նպատակաուղղված ուսումնադաստիարակչական ազդեցության հնարավորություն-

ները: Այդօրինակ ըմբռնումը պարզունակ է դարձնում բարոյամշակութային համոզմունքների և ամբողջությամբ վերցված բարոյական մշակութային արժեքների ձևավորման գործընթացը: Բացի ուսումնադաստիարակչական գործընթացից, կարևոր գործոններ են նաև շրջապատող իրականության՝ հոգևոր, սոցիալական և, ամենակարևորը, տնտեսական գործընթացների, մակրո և միկրոմիջավայրերի ազդեցությունը, ինչպես նաև հենց իր՝ ուսանողի առանձնահատկությունները: Նշված բոլոր գործոնների, այդ թվում և ուսումնադաստիարակչական ներգործության արդունավետությունը մեծապես կախված է ուսանողի՝ բարոյական գործընթացների գիտակցմանը միտված մտավոր գործունեությունից, նրա մտածելակերպից, այդ թվում, բարոյագիտական մտածելաոճից:

Ամենից առաջ կարևոր է, որ դասավանդողը, ճնշում չգործադրելով ուսանողի հոգեվիճակի վրա, նրան չպարտադրելով իր հայացքները, կարողանա նպաստել ուսանողի՝ ինքնուրույն և ստեղծագործաբար մտածելու ունակության զարգացմանը: Դա ուսանողին կմղի իր բարոյական արժեքների բարձրացման անհրաժեշտության գիտակցմանը՝ նրան հնարավորինս ակնհայտ դարձնելով հասարակության հոգևոր նորացման անհրաժեշտությունը. դա բարձրացնում է ուսանողի անձի՝ որպես հասարակության կարևոր մասնիկի պատասխանատվությունը: Սա է արդի փուլում դասավանդողի՝ ուսանողի բարոյական արժեք ձևավորողի առաքելությունը:

Հասնելու համար այսօրինակ գիտակցականությանը՝ ուսանողը պետք է ունենա ընդհանուր մշակույթ, լայն աշխարհայացք, որոշակի գիտելիքներ և պատկերացումներ անձի և հասարակության բարոյական արժեքների մասին:

Ապագա մասնագետների պատրաստման գործընթացին նման մոտեցումը պահանջում է այնպիսի նոր միջոցների կիրառում, որոնք պայմաններ կստեղծեն ուսանողի անձի ազատ և ստեղծագործական զարգացման համար: Հենց այս ուղղությամբ էլ անհրաժեշտ է իրականացնել կրթական համակարգի բարեփոխումները, հումանիտար առարկաների դասավանդման նոր մոտեցումներ ու տեխնոլոգիաներ մշակել: Հարկ է ընդգծել, որ ուսուցանվող առարկաները և դասավանդման մեթոդները շատ կարևոր են, բայց արդի փուլում առաջնային է հումանիտար գիտությունների բովանդակային կողմը:

Ներկայումս անձի բարոյական մշակութային արժեքների զարգացումն անհնար է առանց հումանիտար լայն պատրաստության: Հետևաբար անհրաժեշտ է, որ ուսանողները տիրապետեն այնպիսի գիտելիքների, որոնք ձեռք կբերվեն հայրենական և արտասահմանյան մշակույթի պատմության, արվեստի պատմության դասավանդման ընթացքում: Ուսանող երիտասարդության բարոյական համոզմունքների ձևավորումը կախված է նրանից, թե հաղորդվող գիտելիքները որքան ներդաշնակորեն են կապված գեղարվեստական կերպարների և արժեքների հետ, որոնք ուսանողն ընկալել է հուզական-զգայական մակարդակում: Այստեղից հետևում է, որ սկզբում անհրաժեշտ է զարգացնել նրա զգացմունքային ներաշխարհը և ապա միայն աստիճանաբար անցնել հոգևորին: Երիտասարդությանն առնչվող բարոյական փաստարկումները պետք է ոչ միայն տրամաբանորեն հիմնավորված լինեն, այլև հոգեբանորեն համոզիչ:

Այսպիսով՝ անհրաժեշտ է մարդասիրական բովանդակություն հաղորդել կրթական ամբողջ գործընթացին, քանի որ այն ոչ միայն ուսանողների ընդհանուր մշակութային արժեքների ձևավորման միջոց է, այլև ապագա մասնագետների բարոյական արժեքների ձևավորման անհրաժեշտ պայման:

Քանի որ համամարդկային բարոյական արժեքների մեծ մասը դարերի ընթացքում զարգացել է համաշխարհային կրոնների գաղափարախոսության հիման վրա, անհրաժեշտ է ուսումնասիրել այդ կրոնների պատմությունը՝ իմաստավորելով դրանք գիտական, փիլիսոփայական և բարոյագիտական տեսանկյուններից: Կրոնների պատմության ուսումնասիրությունը նպաստում է ուսանողների՝ համաշխարհային մշակույթի և արվեստի բարոյական արժեքներին, հաղորդակցմանը, քանի որ այդ արժեքները մեծ մասամբ ձևավորվել են կրոնների շնորհիվ:

Միաժամանակ շատ կարևոր է բարոյական ներուժը, որն ամփոփված է ընդհանուր մշակութային այն մակարդակում, որին տիրապետում է ուսանողը: Բարոյական և մշակութային արժեքների բարձր մակարդակ ունեցող մարդը իրեն չի կարող թույլ տալ գործունեության հակամարդկային միջոցներ կիրառել հասարակական հարաբերությունների տարբեր ոլորտներում՝ հաղորդկացման մեջ,

տնտեսական և սոցիալական գործունեության ընթացքում, գիտական բանավեճերում, միջանձնային հարաբերություններում: Հետևաբար անհրաժեշտ է ձևավորել յուրաքանչյուր ուսանողի անձի ընդհանուր մշակույթը. դա անմիջականորեն կազդի նաև նրա բարոյական մշակութային արժեքների ձևավորման վրա, որի գլխավոր միջոցը ամբողջ կրթության մարդասիրացումն է:

Կրթական ծրագրերում ընդհանուր դասընթացների փիլիսոփայության՝ որպես բուհական ուսումնական առարկայի խնդիրն է յուրաքանչյուր ուսանողի մեջ մշակել տեսական և դիալեկտիկական այնպիսի մտածողություն, որը բխում է մարդկության կուտակած փորձից, հասարակության զարգացման օրենքների մասին գիտելիքներից, ամբողջությամբ վերցված մշակույթի նվաճումներից:

Այսպիսին են դիտարկվում այն ուղիներն ու միտումները, որոնց միջոցով պետք է բուհում իրականանան հումանիտար առարկաների դասավանդման բովանդակային բարեփոխումները, ինչպես նաև ուսանողների բարոյական կրթության և բարոյական գիտակցության ձևավորման գործում այդ գիտությունների դերի հիմնավորումը, առանց որի անհնար է բարոյական արժեքների ձևավորումը: Բարոյամշակութային արժեքների՝ ժամանակակից չափանիշներով ձևավորման ոլորտում հումանիտար առարկաների արդիական խնդիրն է ուսանողներին իննովացիոն գաղափարներին հաղորդակցելը, յուրաքանչյուր ուսանողի մեջ բարոյական նոր մտածողության ձևավորումը:

Այս առումով էապես կարևորվում են հումանիտար առարկաների դասավանդման նոր մեթոդների կիրառումը, դաստիարակչական գործընթացի մարդասիրացումը և ժողովրդավարացումը, մանկավարժական համագործակցությունը, ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման ակտիվ ձևերի օգտագործումը:

Յուրաքանչյուր ուսանողի մեջ քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորման գործուն միջոց է համագործակցային մանկավարժությունը, որը ենթադրում է դասավանդողների և ուսանողների միջև ստեղծագործական երկխոսություն: Այս պարագայում դասավանդողը պետք է ոչ թե պարզապես գիտելիքների փոխհաղորդող լինի, այլ ուսանողների ստեղծագործական

և հետազոտական գործունեության կազմակերպիչը: Ստեղծագործական համատեղ աշխատանքի ընթացքում դասավանդողը պետք է ձգտի ուսանողներին մղել ինքնուրույն դատողությունների, նրանց մեջ ինքնուրույն մտածողության պահանջմունք ձևավորի: Ի դեպ, կարևոր է, որ դասավանդողի բարոյական և գիտական դիրքորոշումը ուսանողների մեջ հարգանք և վստահություն առաջացնի դասավանդողի անձի նկատմամբ:

Դասախոս-ուսանող համագործակցային աշխատանքի ընթացքում ուսումնադաստիարակչական գործընթացը մարդասիրացվում է, դասավանդողը պետք է անհատական մոտեցում ցուցաբերի յուրաքանչյուր ուսանողի նկատմամբ, հարգանք ուսանողի անձի, նրա հայացքների ու տեսակետների հանդեպ, որը նպաստում է ուսանողի անձի, նրա ստեղծագործական ունակությունների համակողմանի զարգացմանը:

Ուսումնադաստիարակչական գործընթացում ուսանողների բարոյական արժեքների ձևավորման կարևոր միջոց են բարոյագիտական տարբեր թեմաներով սեմինար-բանավեճերը, որոնք ուղղված են՝

- ուսանողության մեջ բարոյագիտական մտածողության բարձր մակարդակի ձևավորմանը, որն անհրաժեշտ է ստացված գիտելիքները համոզմունքների վերածելու և հետագայում դրանք գործնականում կիրառելու համար,
- սոցիալական բարդ երևույթներն ու գործընթացները բարոյագիտական տեսանկյունից դիտարկելու կարողությունների մշակմանը, որը կօգնի այդ գործընթացները գնահատել և տեսական ընդհանրացումներ անել,
- բանավեճերի ժամանակ սեփական համոզմունքները հետևողականորեն պնդելու, այլոց կարծիքը հարգելու կարողությունների ձևավորմանը:

Անցկացվող բանավեճերի ընթացքում արտահայտված դրական, քննադատական, բացասական կարծիքները պետք է ներդաշնակորեն միահյուսված լինեն հուզականորեն հագեցած երկխոսությանը: Ճշմարտության բացահայտումը պետք է իրականանա տարբեր կարծիքներ բազմակողմանիորեն քննարկելով, ընդդիմադիր տեսակետ արտահայտող անձի նկատմամբ խոր հարգանք, էթիկա,

հանդուրժողականություն ցուցաբերելով:

Բանավեճն արդյունավետ է ընթանում հետաքրքության, տարակարծության, համագործակցության, մրցակցային միջավայրում: Բանավեճի ընթացքում ուսանողը բացահայտում է իր իրական հնարավորությունները՝ դրսևորելով անձնային և քաղաքացիական հատկանիշները: Տարբեր տեսակետների բախման արդյունքում ստացված և յուրացված բարոյական գիտելիքները կայուն բնույթ ունեն և գործնականում փորձարկվելով՝ վերածվում են բարոյամշակութային համոզմունքների:

Արդի ժամանակահատվածում ուսանողների բարոյական գիտակցության ձևավորման ուղղությամբ բացի հումանիտար առարկաներից մեծ նշանակություն ունեն զանգվածային լրատվական միջոցները (ԶԼՄ), տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաները, թեև մեր հետազոտության շրջանակները հնարավորություն չընձեռեցին ավելի խորությամբ վերլուծել զանգվածային լրատվամիջոցների, ինտերնետային տեղեկատվության ազդեցությունը երիտասարդ սերնդի բարոյական կերպարի ձևավորման ուղղությամբ: Մի կողմից՝ համացանցը տեղեկատվության հարուստ աղբյուր է՝ անսպառ ներուժով, որն իր առավելությունների շնորհիվ բացառիկ դեր է խաղում անձի զարացման, կրթության և ինքնակրթության տեսանկյունից: Մյուս կողմից՝ համացանցը լեփ-լեցուն է անձի բարոյական, հոգևոր և մշակութային զարգացման համար վտանգավոր, վնասակար տեղեկատվությամբ, որն իր մատչելիությամբ կարող է անմիջական ներգործություն ունենալ դեռևս բարոյամշակութային կայուն համոզմունքներ չունեցող երիտասարդության բարոյական գիտակցության, պատկերացումների, աշխարհընկալման, արժեքային ըմբռնումների վրա:

Մեր կողմից արդեն նշվել է, որ բարոյական արժեքը ենթադրում է ոչ միայն անձի բարոյամշակութային ուղղվածություն, այլև բարոյամշակութային գործունեություն, որն իրականանում է ըստ այդ ուղղվածության: Հետևաբար յուրաքանչյուր ուսանող միայն որոշակի գործունեությամբ կարող է իրականացնել իր բարոյական դիրքորոշումները՝ դրանով իսկ ձևավորելով ամբողջությամբ վերցված բարոյամշակութային արժեքները, ամրապնդելով բարոյական այնպիսի

համոզմունքներ, որոնք ձևավորվում են դաստիարակչական նպատակաուղղված ներգործությամբ:

Ուսանողի անձի բարոյական արժեքների ձևավորման հիմնական ուղիներից է նրան ինչպես բուհի ներսում, այնպես էլ բուհից դուրս սոցիալական լայն գործունեության մեջ ներգրավումը: Այդպիսի միջոցներից են ուսանողի մասնակցությունը ներբուհական կառավարմանը, ուսանողական ինքնակառավարմանը:

Կոլեկտիվիզմի գաղափարի ոչ լիարժեք ըմբռնումն այսօր հանգեցնում է անձի ինքնարտահայտման հնարավորությունների սահմանափակմանը և խոչընդոտում է կոլեկտիվում նրա սոցիալական պատասխանատվության և ակտիվության ձևավորմանը:

Բուհում երիտասարդ մասնագետների պատրաստության կազմակերպման կոլեկտիվ ձևերը պետք է անձի համակողմանի զարգացմանն ուղղված անհատական գործընթացի համար լայն հնարավորություններ ընձեռեն, օգնեն նրա ընդունակությունների և անհատականության բացահայտմանը, ոչ միայն պարզապես ուսանողի, այլ ստեղծագործ անհատի, ապագա մասնագետի և ակտիվ քաղաքացու ձևավորմանը: Այդպիսի հատկանիշներով օժտված մասնագետների ձևավորմանը նպաստում է ուսանողական կոլեկտիվում ինքնակառավարումը, որն ուսանողի անձի ձևավորման և բարոյամշակութային արժեքների դրսևորման իրական գործոն է:

Կյանքը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր գործի հաջողությունը կանխորոշված է նպատակների, խնդիրների, ծրագրերի ու մտահղացումների իրականացման գործուն մեխանիզմների առկայությամբ: Բուհական գործընթացների կառավարմանը ուսանողների մասնակցությունն ապահովող մեխանիզմները կարող են գործի դրվել միայն պրակտիկ գործունեության ընթացքում: Դրանց հիմքում պետք է ընկած լինեն ուսանողական ինքնակառավարման իրավական երաշխիքներ:

Ուսանողական ինքնակառավարման ակտիվացման և զարգացման ճանապարհին լուրջ խոչընդոտ է ուսանողների ոչ գործուն մասնակցությունը, կոլեկտիվի և հասարակության առջև այս կամ այն գործունեության համար

պատասխանատվություն կրելու պատրաստակամության բացակայությունը:

Բուհում ուսանողների իրավունքների ապահովման գործուն մեխանիզմների ստեղծումը բուհական կյանքին ուսանողների ներգրավման անհրաժեշտ, բայց ոչ միակ պայմանն է:

Անհրաժեշտ է նաև ուսանողների ներգրավումը հասարակության մեջ ընթացող սոցիալ-քաղաքական գործընթացներին, այդ գործընթացներին իրենց անձնական մասնակցության կարևորության գիտակցման ձևավորումը: Դա նաև բուհում բարոյական գործունեության իրականացման պայման է, այլ կերպ ասած՝ ինքնակառավարման գործընթացներին մասնակցության պահանջմունքի առկայություն: Այդ պայմանների ստեղծման հիմնական միջոցներն են, ինչպես արդեն նշվեց, հասարակական կյանքի բոլոր ոլորտների մարդասիրացումն ու ժողովրդավարացումը:

Ուսանողության բարոյական արժեքների զարգացման կարևոր պայման են ինքնաստուգման, ինքնավերահսկողության և ինքնատիրապետման կարողությունների ձևավորումը, այդ գործընթացի նկատմամբ գիտակցված վերաբերմունքը: Այդ կարողության տիրապետումը ենթադրում է ընդհանուր հոգևոր մշակույթի, մարդա-սիրական կողմնորոշումների առկայություն: Այն բացահայտում է ուսանողի բարոյա-գիտական գրագիտության, բարոյագիտական հիմնախնդիրների ոլորտում տեղեկաց-վածության մակարդակը: Բարոյական գիտակցությունը դրսևորվում է մարդկանց նկատմամբ հարգանքի, սեփական արարքների մեջ բարի մտադրությունների մարմնավորման չափանիշներով գործելու հետևողական ձգտման մեջ:

Ի. Կանտը նշում է, որ բարին ցանկանալը և բարին արարելը տարբեր երևույթներ են: Բարին ցանկանալը չի կարող ինքնին բարոյամշակութային արժեքների տիրապետման բավականաչափ հիմք լինել, քանի դեռ չի արտացոլվել գործողություններում[115]:

Բարոյական արժեքների տիրապետումն ուսանողից անձնական մեծ ջանքեր և մշտական ինքնադաստիարակություն է պահանջում: Ինքնադաստիարակությունը

[115] Кант И. О педагогике // Трактаты и письма. - М.,1980. - 445-504с.

կապված է առաջադրված բարոյական իդեալի որոշակիության և անձնական կատա-
ռելագործման ծրագրի ստեղծման հետ: Իդեալի առկայությունը ենթադրում է անձի
հոգևոր-բարոյական ներաշխարհի զարգացման այնպիսի չափանիշներ, որոնց
շնորհիվ ձևավորվում է անձի բարոյականությունը: Այն արտահայտվում է
գիտակցության և վարքի միասնության մեջ՝ իրականանալով ուսանողի՝ որպես
բարոյական հարաբերությունների սուբյեկտի բարոյամշակութային ինքնագիտակ-
ցության մակարդակում: Բարոյական մշակութային արժեքների ձևավորումը
նշանակում է գիտակցված դրդապատճառների առկայություն, բարոյական
պատվիրաններով առաջնորդվելու ներքին մղում, բարի արարքների գիտակցված
իրականացում: Որպեսզի բարոյամշակութային գիտելիքներն ու վարքը,
ցանկությունն ու պարտականությունը միմյանց ներդաշնակ ու համահունչ լինեն,
անհրաժեշտ է բուհում ընդլայնել ուսանող երիտասարդության սոցիալականացման
ոլորտը, նրան հասարակության մեջ ինքնադրսևորման և ինքնահաստատման
հնարավորություններ ընձեռել, այսինքն՝ իր գիտելիքները, կարողություններն ու
հմտությունները հասարակական կարևոր և օգտակար գործերում կիրառելու
հնարավորություններ ստեղծել: Կարելի է պրակտիկայում լայնորեն կիրառել
այնպիսի միջոցներ, որ ուսանողները հնարավորություն ունենան ծրագրեր և
մտահղացումներ ինքնուրույնաբար ներկայացնելու համընդհանուր
հետաքրքրություն ունեցող հիմնախնդիրների վերաբերյալ: Ընդ որում, այսպիսի
գործունեությունը պետք է համապատասխան ուշադրության արժանանա բուհի
ռեկտորատի, նախարարության և այլ գերատեսչությունների կողմից: Ուսանողների
մեջ պետք է արմատանա իրենց աշխատանքի օգտակարության և հասարակական
պիտանելիության համոզմունքը, ուստի և անհրաժեշտ է գնահատել այդ
աշխատանքը ըստ համապատասխան արդյունքների:

Ուսանողների բարոյամշակութային կրթվածությունը, գիտելիքների
ձեռքբերումը, դրական վարքի մշակումը օգնում են ուսանողների կողմից
բարոյական մշակութային արժեքների տեսական գործնական և հուզական
մակարդակների միասնական ընկալմանը: Բարոյական գիտակցության մեջ ոչ
բավարար գործնական մակարդակը հանգեցնում է վարքի ոչ լիարժեք դրսևորման,

որն արտահայտվում է հախուռն, տարերային արարքներով, անձի կողմից դրանց հետևանքների չգիտակցմամբ, իր արարքները վերահսկելու անկարողությամբ:

Բարոյական դաստիարակության և բարոյամշակութային ուսումնառության գործընթացում նմանօրինակ հակասությունների հաղթահարման համար անհրաժեշտ է հասնել գիտելիքների և բարոյական ապրումների ներդաշնակ համադրմանը, մտքերի և զգացմունքների համաձայնեցմանը: Սրանք անձի բարոյամշակութային նկարագրի միմյանց փոխադարձաբար լրացնող կառուցվածքային բաղադրատարրերն են: Միայն կրթվածությունը, գիտելիքների ստեղծագործաբար յուրացումը և դրանց համադրումը քաղաքացիական հատկանիշների ձևավորմանը՝ ի հակակշիռ գիտելիքների նկատմամբ նեղ օգտապաշտական մոտեցմանը, որոշում են անձի մեջ բարոյամշակութային արժեքի առկայությունը:

Բարոյամշակութային կրթվածության հասնում են մտածողության, պատկերացումների, ըմբռնումների նպատակաուղղված ձևավորմամբ: Այս գործընթացում ուսանողների տարերային դրսևորումները կանխելու համար անհրաժեշտ է նրանց բարոյական բովանդակություն ունեցող այնպիսի գիտելիքներ հաղորդել, որոնք երիտասարդները կկիրառեն իրենց կենսագործունեության ընթացքում՝ ուսման մեջ, հասարակական-քաղաքական աշխատանքում, վարքում և կենցաղում:

Բարոյամշակութային կրթվածությամբ է պայմանավորված, թե որքանով է ուսանողը յուրացնում բարոյամշակութային նորմերը, կարող է հաղթահարել առկա թերությունները: Բարոյական ներաշխարհի ձևավորման արդյունավետությունը ոչ թե հասարակության մեջ ընդունված նորմերի ու պատվիրանների մեխանիկորեն իրականացման, այլև բարոյական իմաստավորված վարքի դրսևորման մեջ է: Դա բացահայտվում է ուսանողների՝ ուսումնական կոլեկտիվում ներդաշնակ հարաբերությունների ստեղծմամբ, ինքնուրույն լուծումների որոնմամբ, հաստատուն, ճշմարիտ համոզմունքների առկայությամբ, վարքի անհատականացված դրսևորումներից հրաժարվելու պատրաստակամությամբ, բացասական հատկանիշների՝ անկազմակերպվածության, անկարգապահության,

անպատասխանատվության, ծուլության հաղթահարմամբ: Բուհում սովորելու համոզմունքը ուսանողի մեջ պետք է ամրապնդվի բարոյական դիրքորոշմամբ, ապագա մասնագիտության նկատմամբ բարեխիղճ և պատասխանատու վերաբերմունքով, գիտելիքների և կարողությունների գիտակցված ձեռքբերմամբ, օրինավորությամբ, ազնվությամբ, ուսումնական գործընթացում առաջադրանքների բարեխիղճ կատարմամբ, օրինակելի վարքով:

Բուհի ուսումնական գործընթացի բարեփոխման ընթացքում անհրաժեշտ է մշտապես կիրառել ուսուցման նորագույն ակտիվ ձևեր՝ արդիական խնդիրների վերաբերյալ ուսանողների գրավոր կարճ պատասխաններ, հարցումներ, խնդիրներ և վարժություններ, բարոյագիտական բնույթի խաղեր, գործնական վարժություններ, թեստեր, որոնք ճշգրտում են ուսանողների դիրքորոշումները, օգնում են արագ և հստակ կողմնորոշվել որոշակի իրավիճակում, ճիշտ, դիպուկ և մտածված պատասխաններ տալ: Պատասխանները ցույց են տալիս, որ բարոյական հասունությունը պայմանավորված է ուսումնական ծրագրերում բարոյամշակութային բաղադրատարրի ներդրմամբ, ուսանողի իմացական և գործնական ակտիվությամբ, բարոյական դիրքորոշման կայունացման անհրաժեշտության գիտակցմամբ, կենսական տարբեր իրավիճակներում բարոյական վարքի և արժեքային կողմնորոշումների սկզբունքների առավել հստակ տիրապետմամբ, բարոյական բարձր հատկանիշների զարգացմամբ[116]:

Ապագա մասնագետների քաղաքացիական, բարոյական և մասնագիտական կայացման գործում էապես կարևորվում է բարոյագիտական և հումանիտար այլ առարկաների ուսումնասիրման գործընթացում ինքնուրույն աշխատանք կատարելը՝ բարոյամշակութային թեմաներով ռեֆերատներ, կուրսային աշխատանքներ, զեկուցումներ, թեզեր գրելը: Այդպիսի աշխատանքներ գրելու ընթացքում ուսանողները իրենց ուշադրությունը սևեռում են այնպիսի հարցերի վրա, որոնք անմիջականորեն վերաբերում են բուհական կյանքին՝ գիտելիքների և բարոյականության, գիտելիքների և համոզմունքների, գիտելիքների և արարքների,

[116] Громкова М.Т. Педагогика высшей школы: учебное пособие. Юнити-Дана, 2012г. 446 с.

կրթվածության և դաստիարակվածության փոխներգործությանը: Հատկապես խոր ուշադրությամբ են քննարկվում անձի բարոյական հասունության ձևավորման, ուսանողության մասնագիտական պատրաստության բարոյական կողմին, անձի ներդաշնակ զարգացման գործում բարոյական դաստիարակության տեղին ու դերին առնչվող հիմնախնդիրները:

Գործնական մեծ նշանակություն ունեն ուսանողների այն գիտական աշխատանքները, որոնցում օգտագործվում են սոցիոլոգիական հարցումների վերլուծության արդյունքները: Օրինակ՝ Սոցիալական մանկավարժության բաժնի, հոգեբանության, աստվածաբանության, մշակութաբանության, սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանողները, հետազոտելով ուսանողության բարոյամշակութային արժեհամակարգի ձևավորման վրա ազատ ժամանակի, տարբեր գործոնների ազդեցության հիմնախնդիրը, կարող են այդպիսի հետազոտություն անցկացնել իրենց ֆակուլտետում, կուրսում, խմբում՝ արդյունքում մշակելով՝ հանձնարարականներ, առաջարկություններ՝ ուսանողների հոգևոր, բարոյամշակութային պահանջմունքներից և հետաքրքրություններից բխող արդյունավետ և բովանդակային օգտագործման վերաբերյալ:

Բուհի միկրոմիջավայրը, զուգակցված արտալսարանային աշխատանքներով, լայն հնարավորություններ է ընձեռում անձի ստեղծագործական և ներդաշնակ զարգացման համար: Այստեղ ուսանողները հասնում են իրենց մտավոր ընդունակությունների ձևավորման որակապես բարձր մակարդակի, կարողանում են մտածել, վերլուծել, համադրել փաստերը, ընդհանրացնել, եզրակացություններ անել, հիմնախնդիրներ լուծել: Իմացական կարողությունները և լայն աշխարհայացքը անհրաժեշտ են ժամանակակից մասնագետին հասարակական զարգացման և հասարակական խոր տեղաշարժերի արդի պայմաններում:

Մասնագետի բարոյամշակութային արժեքների համակարգում հատկապես կարևոր տեղ է զբաղեցնում մասասնագիտական արժեքների զուգակցումը ազգային, համամարդկային արժեքների հետ: Մասնագետի անձի բարոյամշակութային արժեքների տիրապետման մակարդակը որոշվում է նրանով, թե գործնականում նրա կողմից ինչպես են յուրացվում և կիրառվում բարոյական, գեղագիտական

նորմերը, ինչպես են այդ նորմերը համադրվում նրա իրական, ամենօրյա վարքին և գործունեությանը մարդկային հասարակությունում:

Մեր հետազոտության արդյունքները վկայում են, որ բարոյամշակութային նորմերի ըմբռնումն ու յուրացումը ոչ միշտ են իրականանում ինքնավերահսկողության պայմաններում: Վարքի այսօրինակ առանձնահատկությունը, ըստ երևույթին, երիտասարդության հարմարվողականության արտահայտությունն է այնպիսի պայմանների, երբ կենսական հանգամանքները նրան չեն կանգնեցնում այդպիսի ինքնավերլուծության անհրաժեշտության առջև:

Բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորում են զարգացման ոչ միանման մակարդակով, տարբեր դրդապատճառներով ուսանողներ: Նրանց միջև մշտապես ընթանում է սոցիալ-մշակութային տեղեկատվության փոխանակում, որն ընդլայնում է աշխարհայացքը, հստակեցնում է դիրքորոշումները, ձևավորում է ազգային և համամարդկային արժեքների իմացություն, նախադրյալներ է ստեղծում որոշակի արժեքային ավանդ ներդնելու համար: Տեղեկատվության այսպիսի փոխանակումը խթանում է ուսանողների բարոյական գիտակցության զարգացումը, ձևավորում է նրանց հոգևոր հասունությունը, հանդուրժողականությունը:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ ներկայումս բուհում մասնագիտական պատրաստության և արժեքների տիրապետման մակարդակի միջև նշանակալի խզում կա. զարգացած չէ ուսանողի բանավոր խոսքը, աղքատ է բառապաշարը, զարգացած չեն միջանձնային հարաբերությունները:

Հաղորդակցումն անձի բարոյական զարգացման անհրաժեշտ և կարևոր պայմանն է. անձի ինքնահաստատման պահանջմունքը իրականանում է անմիջական հուզական շփման միջոցով: Հաղորդակցման խորությունն ու ակտիվությունը նպաստում են ոչ միայն տեղեկատվության, մտքերի, զգացմունքների փոխանակությանը, այլև սեփական «ես»-ը ընդհանուր «մենք»-ին համադրելու կարողության ձևավորմանը, օգնում են իրապես համոզվելու բարոյական նորմերի, սկզբունքների ճշմարտացիության մեջ:

Բարոյամշակութային հաղորդակցման մշակութային արժեքներն իրականանում է սոցիալական կողմնորոշում ունեցող շփմամբ, որը հատկապես կապված է

ապագա մասնագետի գործունեության և հասարակական-քաղաքական գործառույթների իրականացման հետ: Այն արտահայտվում է որոշակի կոլեկտիվում իրականացվող առարկայական-կողմնորոշիչ հաղորդակցմամբ, որը կապված է մասնագետի արտադրական, կազմակերպական կամ հետազոտական գործունեության հետ: Անձնակողմնորոշիչ հաղորդակցումը բավարարում է մասնագետի անհատական զարգացման պահանջմունքը և ուղղված է նրա ինքնադրսևորման ու ինքնագործունեության խթանմանը:

Տվյալ կոլեկտիվում հաղորդակցման մշակութային արժեքների մակարդակը կարելի է բնութագրել մի քանի տեսանկյուններից՝ սոցիալ-հոգեբանական (գործնական հարաբերությունների կառավարում), արտադրական (արտադրական հարաբերությունների կառավարում), ստեղծագործական (ստեղծագործական մրցակցության և համագործակցության մթնոլորտի զարգացում), մշակութային (կոլեկտիվում մշակութային, բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորում):

Կոլեկտիվում միջանձնային հարաբերությունների նշված կողմերից յուրաքանչյուրը յուրովի կարևոր է: Հետևաբար մասնագետի հաղորդակցման մշակութային արժեքներից, կոլեկտիվում և կոլեկտիվի համար աշխատելու նրա կարողություններից, վարքի ընդհանուր մշակութային արժեքներից են կախված և՛ հաղորդակցման բովանդակությունը, և՛ աշխատանքի արդյունավետությունը:

Ուսանողն ուսումնառության գործընթացում և նրանից դուրս շփվում է մեծ թվով մարդկանց հետ, նրանց հետ տարբեր հարաբերություններ է ձևավորում, և այդ կապերը մշտապես զարգանում են: Կյանքի հարափոփոխ ընթացքը, բուհում և դրանից դուրս՝ կենցաղում, տրանսպորտում և այլն, մեծ թվով մարդկանց հետ շփվելու անհրաժեշտությունը հանգեցնում են նրան, որ հաճախ այդ շփումները ձևական բնույթ են կրում: Հաղորդակցման շրջանակի ընդլայնման հետ մարդը հաճախ կորցնում է մտերիմների շրջանակը. մնում են քիչ մարդիկ, որոնց հետ մարդը կարող է հոգեպես կիսվել, նրանց մեջ աջակցություն և հոգևոր հենարան գտնել: Այս բոլորն անդրադառնում է անձի բարոյամշակութային հատկանիշների ձևավորման, հաղորդակցման ձևերի վրա, կարող են աղքատացնել նրա հոգևոր ներաշխարհը, սահմանափակել հասարակական կյանքում կողմնորոշումները:

Որքանո՞վ են անձի շրջապատում գտնվող մտերիմները ազդում նրա բարոյական հատկանիշների ձևավորման վրա: Այդ խնդրի առնչությամբ մեր հետազոտության մեջ դիտարկել ենք հետևյալ հիմնախնդիրը. ո՞ր սոցիալական խմբի մարդկանց հետ շփումն է նպաստում բարոյական նորմերի տիրապետման վերաբերյալ ուսանողների պատկերացումների փոփոխությանը (դրական կամ բացասական), ազդում նրանց բարոյական սկզբունքների և վարքի նորմերի ձևավորմանը: Հարցվածների մեծամասնությունը կարևոր է համարում մտերիմ ընկերների հետ շփումը՝ 31%, 28%-ը՝ համակուրսեցիների, իսկ 24%-ը՝ ընտանիքի անդամների հետ շփումն ու հաղորդակցումը:

Ուսումնառության ընթացքում են ձևավորվում ուսանողի բարոյական հայացքներն ու համոզմունքները, դրվում են բարոյական ինքնադաստիարակության հիմքերը:

Այս գործընթացում կարելի է առանձնացնել աշխատանքի մի քանի ձևեր. առաջին հերթին հենց ուսումնական գործընթացի կազմակերպումը պետք է նպաստի բարոյական արժեքների ձևավորմանն ու զարգացմանը, և երկրորդ՝ ուսանողների գիտական աշխատանքը, որին ներկայումս մեծ ուշադրություն է հատկացվում, պետք է զարգացնի նրանց երևակայությունը, ստեղծագործական կարողությունները, զգայական ընկալումը, ներհայացողությունը:

Ուսումնական գործընթացը ձևավորող գործոնները, որոնք կապված են կազմակերպական հարցերի հետ, ներառում են մի շարք հիմնախնդիրներ: Դրանցից են ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովումը, նորագույն տեխնոլոգիաների ներդնումը, անհրաժեշտ սանիտարահիգիենիկ ու գեղագիտական պայմանների ստեղծումը, ուսումնական գործընթացի արդյունավետ պլանավորումը՝ հաշվի առնելով դասավանդողների և ուսանողների ժամանակն ու հնարավորությունները, ուսանողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման հարցերը, ուսումնական ծանրաբեռնվածությունը, օրվա ռեժիմը և այլն: Այս բոլորի նպատակն է գիտականորեն կազմակերպել ուսումնական գործընթացը՝ ուսանողների բարոյամշակութային արժեքների արդյունավետ ձևավորման համար անհրաժեշտ նախադրյալների ապահովմամբ:

Ուսուցման գործընթացում ուսանողության բարոյական նկարագրի ձևավորման կարևոր գործոններից են ուսանողական կոլեկտիվում բարոյական հարաբերությունների բնույթը:

Ուսանողական կոլեկտիվում բարոյահոգեբանական բարենպաստ մթնոլորտը մեծ չափով կախված է ուսանողական կուրսի, խմբի համախմբվածությունից և համերաշխությունից, նրա անդամների միջանձնային դրական շփումներից, որն արտահայտվում է նրանց փոխադարձ հարգանքով, փոխօգնությամբ, փոխադարձ աջակցությամբ, պահանջկոտությամբ, վստահությամբ, հոգեբանական մերձեցմամբ, փոխգործունեությամբ և փոխազդեցությամբ: Կոլեկտիվում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորմանը նպաստում է կուրսղեկի աշխատանքը: Չնայած որոշ բուհերում ամբիոնների ծանրաբեռնվածություններում հաշվառված է կուրսղեկների աշխատանքի համար 40 ժամ ժամաքանակ, սակայն մեր զրույցները ցույց տվեցին, որ դրանք ձևական բնույթ են կրում և բուհերում կուրսղեկների ինստիտուտը լիարժեք չի գործում:

Խմբի կամ կուրսի կոլեկտիվի պահանջկոտությունից է կախված կոլեկտիվի կարգապահությունը և յուրաքանչյուր անդամի պատասխանատու վերաբերմունքը դասախոսությունների, սեմինարների, լաբորատոր պարապմունքների, առհասարակ ուսումնական գործընթացի նկատմամբ: Բարյացակամության, անկաշկանդվածության, ընդհանուր պատրաստվածության մթնոլորտն է որոշում գործնական պարապմունքի հաջողությունը, ուսանողների մեջ հետաքրքրություն է առաջացնում քննարկվող հիմնախնդիրների վերաբերյալ, ակտիվացնում է նրա մասնակցությունը, նպաստում է կարծիքների և տեսակետների ազատ արտահայտմանն ու փոխանակմանը, է՛լ ավելի է համախմբում կոլեկտիվին ընդհանուր գիտական հետաքրքրությունների շուրջ, նպաստում է ուսանողների բարոյական հատկանիշների ձևավորմանը, հարգանք է ձևավորում այլոց կարծիքների նկատմամբ, օգնում է ուսանողի ինքնահաստատմանը, հավատ է ներշնչում սեփական ուժերի հանդեպ:

Մյուս կողմից՝ անտարբերությունը, շրջապատողների պասսիվ վերաբերմունքը, համակուրսեցիների նկատմամբ անվստահությունն ու հարգանքի բացակայությունը,

վատթար, հոռի բարքերը այնպիսի բացասական երևույթներ են, որոնք ապակայունացնում են ուսանողական կոլեկտիվը, ստեղծում են բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտը, որն էլ իր հերթին խոչընդոտում է պարապմունքների ժամանակ ուսանողների ակտիվ աշխատանքին: Այս մթնոլորտում ընթացող պարապմունքները հաճախ ձևական բնույթ են կրում, անհետաքրքիր են դառնում և մեծ մասամբ արդյունավետ չեն: Այդ դեպքում բացակայում են հոգևոր հագեցած մթնոլորտը, դրական լիցքերը, խանդավառությունը, որը, բնականաբար, ոչ միայն նվազեցնում է գիտական տեղեկատվության յուրացման որակը, այլև խոչընդոտում է բարոյական համոզմունքների ձևավորումը, թուլացնում է հետաքրքրությունը ուսումնասիրվող առարկաների նկատմամբ, ձևավորում է ուսանողների բացասական դրդապատճառները ամբողջությամբ վերցված ուսումնական գործընթացի նկատմամբ:

Ուսանողների հոգևոր ներաշխարհն այնքան է բազմազան, որքան բազմանշանակ է «հոգևոր կյանք» հասկացությունը. այն ներառում է անձի գիտակցության, կյանքի, զգայական-հուզական դրսևորումները հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Հաճախ, սակայն, ուսումնադաստիարակչական գործընթացում հաշվի չեն առնվում ուսանողների անհատական հոգեբանական առանձնահատկությունները, դրդապատճառներն ու արժեբանական կողմնորոշումները, կենսական նպատակներն ու իդեալները: Ուստի և բարոյական մշակութային արժեքների ձևավորման գործընթացում կարևորվում է ուսանողական տարիքի հոգեբանական առանձնահատկությունների, բարոյական պահանջմունքների, հայացքների, ընդունակությունների հաշվառումը:

Այսօր առավել քան անհրաժեշտ է ակտիվորեն ձևավորել սովորող երիտասարդության ապրումակցային ունակությունները, նրանց մեջ զարգացնել ձգտումը դեպի բարին, կարևորել հուզական ապրումների հարուստ դրսևորումները, հասնել զգացմունքների նրբության՝ գիտելիքների պահանջմունքի հետ նրանց մեջ դաստիարակելով նաև մարդկային հարաբերությունների գեղագիտության պահանջմունք:

Բարոյական մշակութային արժեքների ձևավորման կարևոր միջոցներից է դասավանդողի անձնական բարոյական ներգործությունը՝ նրա հուզական

նրբազգացությունը, բարոյական գործունեության կարողություններն ու հմտությունները, հաղորդակցումը, արտահայտչամիջոցների մշտական հարստացումը, հույզերի ու զգացմունքների մշակույթը, վարվելակերպի կուլտուրան, խոսքի արտահայտչամիջոցները՝ բովանդակայնությունը, գրագիտությունը, ոճական հարստությունը, մատչելիությունը: Կարևորը, սակայն, հոգեբանամանկավարժական գիտելիքների առկայությունն է: Դասավանդողի և ուսանողի հարաբերությունները այս գործընթացում սոցիալ-մշակութային բովանդակություն ունեն, քանի որ դասավանդող մտավորականության և ուսանողության հասարակական հարաբերությունների որոշակի ձև են ներկայացնում, ուսանողություն, որն իր սոցիալ-հասարակական և բարոյագիտական հարաբերությու-նների զարգացման միջոցով բարձրանում է մինչև մտավորականության աստիճանի:

Ուսանողների բարոյական դաստիարակության ձևավորման կարևոր միջոցներից է բնությունը: Այն ոչ միայն ներհայեցողության օբյեկտ է, այլև հոգատար վերաբերմունքի առարկա (էկոլոգիական մշակույթ), որովհետև շրջապատող բնության պահպանությունը մարդու մշակութային արժեքների անհրաժեշտ բաղադրատարրն է, որն ազդում է իրականության և հասարակական կյանքի նկատմամբ նրա հարաբերությունների վրա[117]:

Բարոյամշակութային արժեքների ձևավորման ձևերի ու մեթոդների բազմազանության մեջ մեծապես հաշվի է առնվում բուհի, ֆակուլտետի մասնագիտական ուղղվածությունը: Հատկապես ընդգծվում է տվյալ մասնագիտության բարոյամշակութային ուղղվածությունը: Այն մասնագիտություններին, որոնք անմիջականորեն կապված են մարդկանց ու նրանց հետ տարվող աշխատանքին, հասարակությունը բարոյականության նորմերի պահպանման մեծ պահանջներ է ներկայացնում: Դա հատկապես կարևորվում է մանկավարժների համար, որովհետև նրանք մշտապես բախվում են տարբեր հիմնախնդիրների և բախումնային իրավիճակների հետ, որոնց լուծման համար անհրաժեշտ է բարոյամշակութային արժեքների բարձր մակարդակ, բախումները կանխելու ընդունակություն ունենալ, անհատական մոտեցում, մանկավարժական

[117] https://www.educationscotland.gov.uk/Images/rme_principles_practice_tcm4-540203.pdf

երևակայություն, տակտ, ներըմբռնման ուժ և ամենակարևորը՝ սեր դեպի ընտրած մասնագիտությունն ու անձը:

Մանկավարժական բուհի ուսանողի բարոյամշակութային արժեքների զարգացման ազդու միջոց է հասարակական կարծիքը, զանգվածային տեղեկատվական միջոցները:

Զանգվածային տեղեկատվական միջոցների մեջ հատուկ տեղ է զբաղեցնում մամուլը: Օպերատիվությամբ արձագանքելով երկրում և արտասահմանում ընթացող կարևոր իրադարձություններին՝ մամուլը հատկապես մեծ ուշադրություն է հատկացնում բուհական կոլեկտիվներին և նրանց խնդիրներին, լուսաբանվում են ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների որակի բարձրացման խնդիրները, ուսանողների առօրյային, մշակութային կյանքին, ժամանցին առնչվող հարցերը:

Բուհական մամուլը ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավոր-ման կարևոր միջոց է: Ուսանող երիտասարդության ակտիվ մասնակցությունը ներբուհական մամուլի հրատարակմանը էական գործոն է ապագա մասնագետի անձի որակական և մասնագիտական հատկանիշների ձևավորման գործում: Համակարգված աշխատանքը բուհական և այլ մամուլում զարգացնում է ուսանող երիտասարդության ստեղծագործական ակտիվությունը, ներկայացված փաստերում և իրադարձություններում ամենակարևորը առանձնացնելու և վերլուծական կարողություններ դրսևորելու ունակությունը, դրանք գրական արտահայտիչ և պատկերավոր, բովանդակալից ու գրագետ լեզվով նեկայացնելու, իրականության այլևայլ երևույթներին բարոյական գնահատական տալու հմտությունը: Կյանքը ցույց է տալիս, որ մարդկանց սովորեցնել ու դաստիարկել ի զորու է միայն նա, ով տիրապետում է կազմակերպական և դաստիարակչական աշխատանքների հմտություններին, կարողանում է օգտագործել ուսումնական կոլեկտիվի վրա ազդող բոլոր միջոցները, այդ թվում և այնպիսի ձևեր ու միջոցներ, ինչպիսին են զանգվածային լրատվական միջոցները և հատկապես բուհական մամուլը: Ուսանող երիտասարդության անմիջական մասնակցությունը ներբուհական բազմատիրաժ մամուլի ստեղծմանը երիտասարդ մասնագետի գործունեության հաջողության

լավագույն երաշխիքն է[118]:

Հարկ է նշել, որ ներկայումս աճել են ուսանողների տեղեկացվածության աստիճանը, տեխնոլոգիական միջոցների օգտագործումը, լայն ու համակողմանի կրթություն ստանալու հնարավորությունները. ինտերնետային համացանցը, արբանյակային ալեհավաքները ամեն օր նորանոր անսահմանափակ թարմ տեղեկատվություն են հաղորդում, աճում է ուսանողների իրազեկվածությունը, որի արդյունքում մեծանում է ուսանողների պահանջկոտությունը տեղեկատվության և այն հաղորդող միջոցների նկատմամբ:

Մեր համոզմամբ՝ վերը հիշատակված բոլոր միջոցները կարելի է օգտագործել ինչպես առանձին, այնպես էլ միաժամանակ: Կարևորն այն է, որ ցանկացած գործունեությանը բարոյական բովանդակություն հաղորդվի: Բարոյական մշակութային արժեքների ձևավորման գործընթացում պետք է լինի սկզբունքների հաջորդականություն: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև ուսանողական ակտիվի, ուսխորհրդի դերի բարձրացումը այս գործընթացում:

Մեր փորձը և անցկացված սոցիոլոգիական հարցումները, զրույցները վկայում են, որ արդի պայմաններում մանկավարժական բուհը լայն հնարավորություններ ունի արդյունավետորեն լուծելու ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման և զարգացման հիմնախնդիրը:

Այս աշխատանքի հիմնական ուղղություններն են՝

- անձի բարոյամշակութային արժեքների վերաբերյալ ուսանողների գիտելիքների հարստացում (բարոյական արժեքներ, բարոյագիտական մտածողություն, բարոյական հատկանիշներ, ազգային և համամարդկային արժեքներ, միջանձնային և միջազգային հարաբերությունների և փոխշփումների բարձր մշակույթ և այլն),
- ուսանողների՝ արվեստի (դասական երաժշտություն, թատրոն, բալետ, գեղարվեստական գրականություն, ցուցահանդեսներ), ազգային մշակույթի (ժողովրդական սովորույթներ և ավանդույթներ, մայրենի լեզու, գրականություն, բանահյուսություն), էկոլոգիական հիմնախնդիրների նկատմամբ խոր

[118] https://cyberleninka.ru/article/n/rol-smi-v-sotsializatsii-molodezhi-v-sovremennnom-obschestve

հետաքրքրություն,

▪ուսանող երիտասարդության ներգրավումը և ակտիվ մասնակցությունը բուհի հասարակական, մշակութային, մարզական կյանքին,

▪ուսանողների ակտիվ ներգրավումը ուսանողական ինքնակառավարմանը (տարբեր միջոցառումների կազմակերպում ինչպես բուհում, այնպես էլ բուհից դուրս):

Դասախոս-ուսանող բարոյամշակութային արժեքների ձևավորման ուղիները պետք է իրականացնել երկու փոխլրացնող մասնաբաժնով՝ լսարանային և արտալսարանային աշխատանքներում:

Լսարանային մասնաբաժնում՝ յուրաքանչյուր ուսումնական առարկայի շրջանակներում բարոյամշակութային բաղադրամասի ընդգծում, կարևորում, բարոյամշակութային գիտելիքների ձեռքբերում, բարոյամշակութային մտածողության ձևավորում, բարոյամշակութային սկզբունքների, համոզմունքների պահպանում, հաղորդակցման ընթացում բարոյամշակութային վարքագիծի դրսևորում, բարոյամշակութային ինքնագիտակցության ձևավորում, ինքնաիրացում: Կազմակերպման ձևերն են՝ սեմինարներ, քննարկումներ, դասախոսություն-բանավեճ, թեմատիկ ռեֆերատներ, ինքնավերլուծական բնութագրերը, մասնակցություն կառավարման աշխատանքներին, ուսանողների ինքնակառավարման օրերը, որոնք ուսանողներին հնարավորություն են տալիս ներկայացնելու ուսանողների շահերը, մոտեցումները, տեսակետները, ակնկալիքները:

Արտալսարանային աշխատանքներում՝ կուրսղեկական ակտիվ աշխատանք, ոլորտի կայացած մասնագետների, արվեստագետների, մշակույթի գործիչների հետ հանդիպումներ, դասախոսների անձնական օրինակների պարզաբանում, մրցակցության ձևավորում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտում տարբեր անվանակարգումներով. ամենաակտիվ, բարի, հանդուրժող, ապրումակցող, ընկերասեր, ստեղծագործող ուսանող /կուրսից անցնելով ֆակուլտետի, ապա բուհի շրջանակ, միջբուհական շրջանակ/, ուսումնական տարվա ընթացքում կուրսի բարոյամշակութային արժեքների ձևավորման մակարդակը բարձրացնող

միջոցառումների պլանավորում, այց արվեստի և մշակութային հաստատություններ, ակտիվ մասնակցություն բուհական մամուլին, այց ծերանոցներ և մանկատներ, կամավորական աշխատանքների կազմակերպում, ակտիվ մասնակցություն ներբուհական կյանքին և միջբուհական աշխատանքներին: Մեր կողմից անցկացված զրույցների և հարցումների ընթացքում պարզվեց, որ արտալսարանային աշխատանքները տարբեր բուհերի, անգամ ֆակուլտետների կտրվածքով միանշանակ չէ, գրեթե չի իրականացվում: Ուսանողները վերաիմաստավորվող արժեհամակարգում նույնպես ակնկալում են նոր հաղորդակցման մոդելներ, որտեղ պետք է դասախոս- ուսանող փոխհարաբերությունները կառուցվեն նորովի:

Հիմնախնդրի շուրջ սոցիոլոգիական ուսումնասիրությունների ընթացքում մեր կողմից հանձնարարվել են ռեֆերատներ՝ նվիրված բարոյագիտությանը, գեղագիտությանը, հայ և համաշխարհային մշակույթին՝ երաժշտությանը, կերպարվեստին, գրականությանը, ճարտարապետությանը, կրոնական թեմաներին: Կազմակերպվել են այցելություններ ժամանակակից արվեստի, պատմության թանգարաններ, նշանավոր գրողների տուն-թանգարաններ, ազգային պատկերասրահ, ուսանողները հաճախել են դասական երաժշտության համերգների, օպերա, դիտել թատերական ներկայացումներ, ձեռք են բերել տեսասկավառակներ՝ դասական երաժշտության նշանավոր կատարողների ձայնագրություններով:

Բուհում կազմակերպվում են ամենամյա գիտագործնական կոնֆերանսներ, համաժողովներ, սեմինարներ ու բանավեճեր անձի բարոյամշակութային արժեքների հիմնախնդիրների շուրջ, որոնք մեծապես նպաստում են ուսանող երիտասարդության բարոյական գիտակցության ձևավորմանը, բարձրացնում նրանց հետաքրքրությունը արվեստի, գեղագիտության, բարոյագիտության, գեղարվեստական մշակույթի, հայ ժողովրդի ազգային մշակույթի և ավանդույթների նկատմամբ:

2.5. Ուսումնառության ընթացքում վերաիմաստավորվող արժեհամակարգում ուսանողի ինովացիոն տիպը

Բարձրագույն դպրոցի նպատակից և առաջադիր խնդիրներից են բխում վերաիմաստավորվող բարոյամշակութային արժեհամակարգում ուսանողի ուսումնառության առանձնահատկությունները:

Ուսանողակենտրոն ուսուցման նոր համակարգում բարձրագույն կրթության հումանիստական, անձնակողմնորոշիչ ուղղվածությունը, ինովացիոն գործընթաց-ների ներդնումը ենթադրում է ուսանողի ինովացիոն նոր տիպի ձևավորում, որն առավել շեշտադրում է կրթության՝ որպես սոցիալական երևույթի փաստը:

Կրթական նոր հարացույցի հիմքի վրա կարևորվում է ուսանողի ինովացիոն տիպի սոցիալականացման գործընթացի առանձնահատկությունները և օրինաչափությունները, որոնք առավել նպաստավոր պայմաններ են ստեղծում ուսանողների ինքնուրույնության, ինքնագործունեության, ինքնաճանաչման, ինքնադրսևորման և սոցիալական միջավայրում ինքնահիրացման համար:

Բարձրագույն կրթության հիմնական նպատակին համահունչ, ըստ որոշակի մասնագիտությունների, մրցունակ, աշխատունակ կադրեր են ձևավորվում համապատասխան մասնագիտացմամբ:

Նման սոցիալական պատվերն իրականացնելիս կարևորվում է համապատասխան մասնագիտական դաշտում ուսանողի ինովացիոն տիպի սոցիալական դիրքորոշումները, ձեռքբերումները՝ որպես ապագա երիտասարդ մասնագետի:

Բարձրագույն կրթությունն ենթադրում է դասախոս-հետազոտող-ուսանող սուբյեկտ-սուբյեկտ միջանձնային համագործակցության արտաքին դրսևորման այնպիսի ձևեր, որոնք մի կողմից հնարավորություն են տալիս ուսանողներին ձեռք բերելու մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, մյուս կողմից՝ ապահովել որպես մասնագետ անձի սոցիալականացման գործընթացը:

Վերաարժեքավորվող բարեփոխումային կրթական համակարգում էապես փոխվում են դասախոս-հետազոտողի, ինովացիոն տիպի ուսանողի

գործառույթները, քանի որ նրանք հանդես են գալիս որպես դասավանդման և ուսումնառության ընթացքում ինովացիոն սուբյեկտներ[119]:

Ուսումնառության ընթացքում ինովացիոն ուսանողի գործունեության կառուցողական ալգորիթմն է.

1. ապահովել գործունեության գիտական մակարդակը՝ բարձրագույն դպրոցի բարեփոխումներին համապատասխան,
2. պլանավորել և մոդելավորել ինովացիոն ուսանողի ուսումնառությունը կրթական պահանջմունքներին, ուսանողների շարժունակության համապատասխան՝ հիմք ընդունելով համակարգայնության և հաջորդականության սկզբունքները, ներդաշնակելով հենքային, համամարդկային և անձնային բարոյամշակութային արժեքները:
3. ցանկացած նոր երևույթի, փաստարկի նկատմամբ ձևավորել քննադատական մոտեցում՝ ապահովելով փիլիսոփայական դիալեկտիկական հիմքերը, նորմատիվ, իրավական փաստաթղթերից ընդգրկվածությունը, գիտական մեջբերումների առկայությունը,
4. գործունեության ընթացքում ապահովել ուսանողների մտքերի տրամաբանական զարգացման ընթացքը՝ անընդհատ նրանց ակտիվացնելով, մղելով համագործակցային աշխատանքի,
5. դասավանդման և ուսումնառության ընթացքում կիրառել նորագույն տեխնոլոգիական միջոցներ և պայմաններ, դասվանդման և ուսումնառության նորագույն ինտերակտիվ մեթոդներ,
6. ուսումնառության ընթացքում ձևավորել ներդաշնակ, բարյացկամ, առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, որը կնպաստի դասախոս–ուսանող ակտիվ համագործակցությանը:

Ուսումնառության արդյունավետությունը պայմանավորված է հետևյալ կանխադրույթներով.

- Ինովացիոն ուսանողը կարող է յուրացնել ցանկացած ուսումնական

[119] Рындина Ю. В. Педагогические условия формирования инновационной педагогической деятельности студентов // Молодой ученый. — 2013. — №9. — С. 394-397.

նյութ, անհրաժեշտ է տեխնոլոգիական, դիդակտիկական, մեթոդական համապատասխան նորագույն ձևերի ընտրություն,

- Անհրաժեշտ է բացահայտել յուրաքանչյուր ուսանողի շարժառիթները, կրթական պահանջմունքները, ուսման նկատմամբ ունեցած հետաքրքրությունները, վարքագծային առանձնահատկությունները,
- Ինովացիոն ուսանողի գործունեությունն ախտորոշելիս նախապես ուսումնասիրել պատճառահետևանքային կապերը, դրանց հիման վրա պլանավորել հետագա, արդյունավետ փոխլրացնող սուբյեկտ-սուբյեկտային համագործակցությունը:

Վերոհիշյալ կանխադրույթները հնարավորություն են ստեղծում ձևավորել ինովացիոն ուսանող՝ ստեղծագործական կարողություններով, հմտություններ ունեցող, քննադատաբար մտածող, վերլուծահամադրող, բանավիճող:

Սուբյեկտ-սուբյեկտ բազմաբնույթ համագործակցության ընթացքում կարևորվում են երկու սուբյեկտների՝ դասախոս-ուսանող անձնային, մասնագիտական, ընդհանուր զարգացվածության, հոգեբանամանկավարժական, կառավարման հատուկ որակներ, որով և ձևավորվում է մանկավարժական համակարգ, որը կարելի է բնութագրել հետևյալ բաղադրատարրերով.

- Նպատակային
- Բովանդակային
- Հատուկ մասնագիտական
- Պրակտիկ-կիրառական:

Վերջինս իր մեջ ներառում է ռեֆլեքսիան և մանկավարժական պայմաններ, միջոցներ: Ուսանողի ինովացիոն տիպը բնութագրվում է մի շարք չափանիշներով.

1. **Մասնագիտական-անձնային** չափանիշը ենթադրում է մասնագիտական կայուն գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, որոնք ձևավորվում են կրթական տարբեր աստիճաններում՝ ինովացիոն ուսանողի անհատական, հոգեբանական, տարիքային, սեռային առանաձնահատկությունների հաշվառմամբ: Ուսումնառության ընթացքում ձևավորվում է մտավոր բարձր մակարդակ, զգացմունքային, հուզակամային

ոլորտ, հարուստ ներաշխարհ, գիտելիքների ձեռբերման անհատական աշխատանքային ոճ, որը զուգակցվում է համապատասխան ոլորոտում մանկավարժական վարպետության, տակտի, տեխնիկայի, բաղադրատարրերի հիման վրա:

2. **Պրակտիկ-կիրառական** չափանիշ, որն ենթադրում է ուսումնառության ընթացքում պերիֆերիկ, գերակշռող, բացասական որակների ձևավորում: Ուսանողի գերակշռող պրակտիկ որակներում ներառվում են սոցիալական բարձր ակտիվությունը, նպատակասլացությունը, արդարամտությունը, մարդկայնությունը, սկզբունքայինությունը, բարոյականությունը, ապրումակցումը, դյուրահաղորդակցումը: Ինովացիոն ուսանողի պերիֆերիկ որակներում ընդգրկվում են գործունեության արդյունավետությունը պայմանավորող բարյացկամությունը, հումորի զգացումը, բարեհամբույր լինելը, արտաքին համակրելիությունը, հավասարակշռվածությունը, զսպվածությունը, նրբանկատությունը: Բացասական որակներից կարելի է առանձնացնել շահամոլությունը, դյուրաբորբոքությունը, չարակամությունը, կոպտությունը, անպատասխա-նատվությունը, անկարգապահությունը, մեծամտությունը և այլն: Այս ամենի արդյունքում ձևավորվում են ինովացիոն ուսանողի հետևյալ մանկավարժական կարողությունները՝
   - **տարաբնույթ մտածողություն**, որն արտահայտվում է ուսանողի մտածողության վերլուծահամադրական բնույթով, մտքի ճկունությամբ, մտքի նպատակամետ դրական ուղղվածությամբ, տոլերանտությամբ,
   - **դիդակտիկական**, որը հնարավորություն է տալիս ուսանողին ուսումնասիրվող դիդակտիկական նյութը մատչելի շարադրել, ներկայացնել, քննարկել,
   - **հեղինակային-անհատական**, որը դրսևորվում է ուսանողի անհատական, հեղինակային ոճը, իր տեսակետը անկաշկանդ արտահայտելը, իր անձի և մյուսների նկատմամբ ակնածանքը,

հարգանքը, անձնական օրինակելի վարքը,

- **գիտամանկավարժական**, քանի որ բացի ուսումնառությունից, ինովացիոն ուսանողն ակտիվ գործունեություն կարող է ծավալել նաև գիտահետազոտական ոլորտում. մասնակցություն ուսանողական գիտական ընկերության աշխատանքներին, համաժողովներին, կոնֆերանսներին,
- **պերցեպտիվ.** կուրսընկերների ներաշխարհը ճանաչելու, նրանց հոգեբանական վիճակներում հաղորդակից լինելը,
- **հաղորդակցական**,ուսումնառության ընթացքում հաղորդակցվում է ոչ միայն իր համակուրսեցիների, այլև դասախոսների, վարչական աշխատողների հետ: Նշված մանկավարժական կարողությամբ է պայմանավորված ինովացիոն ուսանողի սոցիալականացման գործընթացի արդյունավետ ընթացքը:
- **կազմակերպչական.** հնարավորություն է տալիս ակտիվորեն կազմակերպել ուսումնադաստիարակչական գործընթացը, արագ և հստակ որոշումներ ընդունել,
- **հոգեսոմատիկ.** համադրվում է ինովացիոն ուսանողի շարժողական կարողությունները և հոգեբանակազմաբնախոսական առանձնահատկությունները,
- **արժեքային.** նոր պայմաններին համահունչ վերաիմաստավորվում են արժեքային կողմնորոշումները:
- **մասնագիտական ներհայեցողություն.** հնարավորություն է տրվում ոչ միայն բացահայտելու, պլանավորելու, ախտորոշելու, կանխատեսելու ուսումնադաստիարակչական աշխատանքները, այլև նկատելու և քննադատելու բացթողումներն ու վրիպումները:

Արդի հասարակական գործընթացներում կարևորվում է ժամանակակից ուսանողի ինովացիոն տիպի ձևավորման գործընթացը, որին նոր պահանջներ են առաջադրվում:

Ժամանակակից մասնագետը պետք է լայնորեն և գիտակցաբար կիրառի

գիտելիքները, ինքնազարգացման և ինքնադրսևորման համար ունենա մասնագիտական խորը ներուժ, որը հնարավորություն կտա նրան լիարժեքորեն և արագ հարմարվելու անընդհատ փոփոխվող պայմաններին: Այս տեսակետից ուսանողի ինովացիոն տիպի ձևավորումը արդիական հիմնախնդիր է, որը ձևավորվում է մասնագիտական կոմպետենցիաների հիման վրա: Մանկավարժական հանրագիտարանի համաձայն՝ «կոմպետենցիան» իր մեջ ներառում է ոչ միայն խորը մասնագիտական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, այլև տարբեր սոցիալական խմբերում աշխատանքի, համագործակցության կարողություններ[120]:

Կոմպետենտությունը որոշում է մասնագիտական պատրաստվածության որակն ու մակարդակը, որն արտահայտվում է համապատասխան գործունեության մեջ, փոփոխվող պայմաններում[121]:

Կոմպետենտության դերի գիտակցումը որոշվում է անձի ինքնավերլուծությամբ և ինքնագնահատականով, որը ներքին դրդապատճառ է մասնագիտական ինքնորոշման ընթացքում:

Ուսանողի ինովացիոն նոր տիպի գործառնական մոդելի մշակումը հնարավորություն տվեց առավել հստակ ներկայացնել ուսանողի մասնագիտական կոմպետենտության, բարոյամշակութային արժեքների ձևավորման գործընթացը, ինչպես նաև որոշել ուսանողի՝ քաղաքացու, ապագա մասնագետի մասնագիտական, բարոյամշակութային արժեհամակարգի ձևավորման ուղիները:

Մեր հետազոտության տեսական հիմնավորումը հաստատեց այն պնդումը, որ ուսանողի ինովացիոն նոր տիպը մոդելավորելիս անհրաժեշտ է առանջնային խնդիր դիտարկել ուսանողի բարոյամշակութային արժեհամակարգի (համամարդկային, ազգային, անձնային) ձևավորումը որպես մեկ ամբողջական համակարգը ուսումնառության ընթացքում:

Ուսանողի ինովացիոն նոր տիպի մոդել ասելով հասկանում ենք ամբողջական մանկավարժական գործընթաց, որտեղ գիտելիքների, կարողությունների և

[120] Шелехова О.В. К проблеме сущности понятия «инновационное поведение» студен- тов вуза. /Вестник науки ТГУ 4(7), 2011, с. 312-315

[121] Коджаспирова Г. М. История образования и педагогической мысли: таблицы, схемы, опорные конспекты.- М., 2003.- С. 88.

հմտությունների ձեռքբերումը լրացվում է բարոյամշակութային արժեհամակարգի ձևավորվածության տարրերով:

Մոդելի մշակման ընթացքում հիմք է ընդունվել տեսության և պրակտիկայի, համակարգվածության և հաջողականության, անձնակողմնորոշիչ սկզբունքների ամբողջությունը: Ըստ այդմ, մոդելը ներկայացված է մի քանի բաղադրամասերով՝ նպատակադրում, բովանդակություն, կազմակերպչական մաս, գործառույթային և արդյունքային, որոնք հնարավորություն են տալիս հստակ ներկայացնել ուսանողի ինովացիոն նոր տիպի ձևավորվածության գործընթացը:

Բարոյամշակութային ուղղվածության նպատակադրում: Այս բաղադրամասում լուծվում են հետևյալ խնդիրները. 1. Սովորողների ինտեգրատիվ-նպատակային մտածողության զարգացում, 2. Ուսանողներին խրախուսել ինովացիոն մասնագիտական գործունեության՝ հիմքում պահելով բարոյամշակութային արժեհամակարգի ձևավորման առաջնահերթությունը, 3. Անձի մասնագիտական ուղղվածության ձևավորումը:

Առաջադիր նպատակի համաձայն՝ ուսանողների ինովացիոն նոր տիպի ձևավորման գործընթացն անհրաժեշտ է դիտարկել որպես ուսումնառության հատուկ կրթամաս՝ ուղղված ուսանողի ինովացիոն նոր տիպի և բարոյամշակութային արժեքների ձևավորմանը: Այս գործունեությունը կազմում է **իմաստավորված-դրդապատճառային (հենքային, հոգևոր արժեքներ), իմաստաբանական-ճանաչողական (բարոյական-հոգևոր արժեքներ), գործառնական արժեքային (մասնագիտական արժեքներ)** բաղադրիչները:

Իմաստավորված-դրդապատճառային (հենքային, հոգևոր արժեքներ) բաղադրիչը բնութագրում է ինովացիոն ուսանողին որպես ապագա մասնագետի այն դրդապատճառների բացահայտումն ու ձևավորումը, որը կնպաստի հետաքրքրությունների ձևավորմանը մասնագիտական դաշտում, ինքնաբացահայտումը և ինքնարտահայտումը, մասնագիտական ռեֆլեքսիան: Իմաստային-դրդապատճառային բաղադրիչը հնարավորություն է տալիս ինովացիոն ուսանողին համոզված լինելու սեփական պիտանելիության մեջ և ունենալ ստեղծագործական ներուժ: Հիմք ընդունելով այս բաղադրիչը՝ ինովացիոն ուսանողը

մեծ հարգանք է տածում ընտրած մասնագիտության նկատմամբ:

Իմաստաբանական-ճանաչողական (բարոյական-հոգևոր արժեքներ) բաղադրիչը բնութագրում է ուսանողի ինովացիոն տիպի մասնագիտական արժեքներն ու իդեալները, քաղաքացիական դիրքորոշումները, բարոյամշակութային աշխարհայացքի շրջանակները: Այս բաղադրիչը հնարավորություն է տալիս ապագա մասնագետին ցանկացած իրավիճակում ինքնուրույն որոշումներ կայացնել մասնագիտական ոլորտում, աշխատանքային հանրույթներում ներդաշնակ և համագործակցային աշխատանք կատարելու, օբյկետիվ ինքնավերլուծելու և իրատեսական գնահատելու սեփական աշխատանքային կարողություններն ու հմտությունները:

Գործառնական (մասնագիտական արժեքներ) բաղադրիչն ենթադրում է մասնագիտական գիտելիքների կիրառումը պրակտիկ գործունեության ընթացքում, ժամանակակից գործիքակազմի, տեխնոլոգիաների տիրապետում, մասնագիտական նպատակի առաջադրում և գործնականում խնդիրների լուծում: Այս բաղադրիչը առանձնակի կարևորություն ունի, քանի որ բնութագրում է ապագա մասնագետի իրական հնարավորությունները, մասնագիտական կարողություններն ու հմտությունները, վարքագծային առանձնահատկությունները, սոցիալական և մասնագիտական նորմերի տիրապետումը, մասնագիտական սովորույթների ձևավորումը:

Մոդելի հաջորդ բաղադրամասը **կազմակերպչականն է,** որտեղ մենք առանձնացնում ենք սովորողների մասնագիտական համապատասխան կոմպետենցիաների ձևավորման գործընթացային բնույթը:

Ուսանողի ինովացիոն նոր տիպի ձևավորման գործընթացը իրագործվում է կրթական գործընթացի բոլոր բաղադրիչների ամբողջականության մեջ: Մեր կողմից առաջարկվող մոդելի իրականացման համար առաջակվում են ուսումնառության հետևյալ ձևերը՝ համակցված դասեր, բինար դասեր, գործնական և սեմինար պարապմունքներ:

Մեր մոդելի իրականացման համար կիրառվում են ինչպես ուսուցման և դաստիարակության այնպիսի մեթոդներ, որոնցում առաջնային դիտարկվում է

ապագա մասնագետի ուսուցումը որպես զարգացնող մեխանիզմի: Որպես այդպիսի մեթոդներ՝ մենք դիտարկում ենք տեղեկատվական-զարգացնող, պրոբլեմային-որոնողական և ուսումնառության գործնական մեթոդախմբերը:

Մոդելում, որպես ուսուցման արդյունավետ միջոց, մենք առաջարկում ենք օգտագործել ինտեգրացիոն դասընթացներ, որի դիդակտիկ նպատակը ուսումնական գործընթացին նպատակայնություն հաղորդելն է, դասընթացների ուսումնասիրումը համակարգված ձևով, ինչպես նաև ինքնուրույն աշխատանքի իրականացման կարողություններն ու հմտություններ ձևավորելը:

Գործառնական: Մեր կողմից առաջարկվող ուսանողի ինովացիոն մոդելը հնարավորություն է տալիս առանձնացնելու սովորողների կոմպետենտության ձևավորման չորս հիմնական գործառույթներ.

1. **Կրթական**. Ուսուցման գիտականության սկզբունքի հիման վրա ձևավորում է աշխարհի մասին սովորողների համապարփակ, հիմնարար գիտելիքների համակարգ,
2. **Դաստիարակչական**. ձևավորում է ապագա մասնագետների կենսական մոտեցումներն ու սկզբունքները, սովորողների կրթամշակութային պատկերացումները՝ սոցիալ-բարոյական նորմերի, արժեքների, իդեալների և մասնագիտական վարքագծի չափանիշների վերաբերյալ:
3. **Զարգացնող.** նպաստում է ուսանողի անձի ձևավորմանը՝ որպես ինքնուրույն գործունեություն ծավալող սուբյեկտի, նրա ինքնաիրացմանը:
4. **Ինովացիոն.** Մասնագետ ուսանող, ով պատրաստ է կենսական ու մասնագիտական գործունեության մեջ հասկանալու և ընդունելու նորարարությունները, կիրառելու նորամուծությունները: Այս ամենը ապահովում է ապագա մասնագետի մասնագիտական շարժունակությունը և հնարավորություն է տալիս արդյունավետորեն հարմարվելու մասնագիտական գործունեության նոր փոփոխվող պայմաններին:

Գործառութային բաղադրմասը հնարավոր է, եթե պահպանված են հետևյալ **մանկավարժական պայմանները.**

1. Սովորողների համակցված գիտելիքների, կարողությունների և

հմտությունների ձևավորում,

2. Ուսանողի անձի մասնագիտական ուղղվածության ձևավորում,
3. Համակցված դասընթացների կիրառում, որտեղ շեշտադրվում են միջառարկայական կապերը, ինչպես ընդհանուր կրթական, այնպես էլ ընդհանուր և հատուկ մասնագիտական դասընթացների միջև:

Գծապատկեր 1.

Ուսանողի ինովացիոն նոր տիպի ձևավորման մոդել





Վերջնարդյունք. բնութագրում է ուսումնառության ընթացքում ձեռք բերված կրթական վերջնարդյունքները՝ մասնագիտական գիտելիքները, կարողությունները և հմտությունները, մասնագիտական որակները, տվյալ մասնագիտական ոլորտում աշխատելու համար ենթադրվող բարոյամշակութային արժեքային համակարգը, մասնագիտական վարքագծային դրսևորումները:

Կարծում ենք, մեր կողմից առաջադրվող ուսանողի ինովացիոն տիպը բնութագրող մոդելն ամբողջական է, քանի որ նրանում համակարգված և փոխլրացվում են բոլոր բաղադրամասերը:

ԳԼՈՒԽ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՂ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից հասարակական կարգերն ու բարքերը օրեցօր ենթարկվում են տարատեսակ փոփոխությունների, որոնք մեծ ազդեցություն են թողնում մարդու կենսակերպի վրա: Այսօր անհրաժեշտություն է առաջացել հասարակական արդի միտումների նորովի վերաիմաստավորում, իրականության գիտակցում: Հենց դրա համար էլ հրատապ է դառնում ուսանող-երիտասարդների՝ եռանդուն և աշխատող սոցիալական ուժի, գիտակցության բարդ խնդիրը:

Ապրելով ժամանակակից տեղեկատվական պայմաններում՝ էապես փոխվել է ժամանակակից ուսանողի, երիտասարդի վարքագծի, բարոյամշակութային արժեհամակարգի նկարագիրը՝ սրընթաց և օրեցօր փոփոխվող սոցիալ-տնտեսական և հասարակական պայմաններում: Դրա համար էլ այսօրվա Հայաստանի Հանրապետության համար այն հարցերը՝ թե ինչպիսի՞ն է ժամանակակից ուսանող-երիտասարդի նկարագիրը, որո՞նք են նրան հուզող հիմնախնդիրները, ակնկալիքները վաղվա օրվա նկատմամբ, առավել հրատապ են:

Ստեղծված իրավիճակը երիտասարդության զարգացման ոլորտում միանշանակ չէ: Մի կողմից, ժամանակակից ուսանողը տարբերվում է ինքնուրույնությամբ, պրակտիկությամբ և շարժունակությամբ, իր ճակատագրի պատասխանատվությամբ, որակյալ կրթություն ստանալու հետաքրքրության կտրուկ բարձրացմամբ և մասնագիտական պատրաստականությամբ, մյուս կողմից տեղեկատվական հարաճուն հոսքերը վերաիմաստավորում են ավանդական բարոյամշակութային արժեհամակարգի պահպանմանը: Վերջինս գրեթե ամեն օր ենթարկվում է տարատեսակ վայրիվերումների, փոփոխությունների, օտար նորամուծությունների: Ժամանակակից ուսանող-երիտասարդ մարդը ձգտում է ինտեգրվել միջազգային երիտասարդական հասարակություն, համաշխարհային տնտեսական, քաղաքական, գլոբալացման և մարդասիրական տարբեր գործընթացների մեջ:

Լայնածավալ տեղեկատվական հոսքերը միշտ չեն, որ նպատակամետ

կիրառություն են ստանում անձի սոցիալականացման գործընթացում: Դեռևս տարածված երևույթներ են երիտասարդական ոլորտի հանցագործությունները, հայ էթնոսին անհարիր տարաբնույթ մշակույթների ներդրումը: Դեռևս առկա են սահմանափակ կարողություններով երիտասարդների սոցիալական ինտեգրման, որբ երեխաների, սոցիալ հոգեբանորեն խաթարված ընտանիքների պատանիների հիմնախնդիրների հրատապությունը:

Տվյալ պայմաններում անհրաժեշտ է խորը և բազմակողմանի ուսումնասիրել երիտասարդ ուսանողի արժեքային համակարգի կառուցվածքն ու կողմնորոշումները, որոնց բնույթը ժամանակակից պայմաններում նաև սոցիալական զարգացման ցուցանիշն է:

Մեր հետազոտության առաջադիր խնդիրներից ելնելով՝ պարզենք ժամանակակից ուսանողի, ուսանող-երիտասարդ անձի արժեքային կողմնորոշումները, որոնց վրա իրենց ազդեցություն են թողնում տեղեկատվական հոսքերը:

Մենք այն համոզմանն ենք, որ անձի բարոյամշակութային արժեքային կողմնորոշումը գիտակցության կարևոր առանցքն է, որն ապահովում է անձի լիարժեք սոցիալականացումը, կայունությունը, վարքագծի որոշակի տեսակների անընդհատությունը:

Զարգացած, բարոյական, մշակութային արժեքային դիրքորոշումը անձի հասունության գրավականն է, սոցիալական գործունեության ցուցանիշը:

Մեր հետազոտության շրջանակներում իրականացրել ենք սոցիոլոգիական հարցումներ: Սոցհարցման խնդիրներն են.

1. Ուսումնասիրել ուսանող-երիտասարդների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացը սոցիալական տարբեր ինստիտուտներում, մասնավորապես բուհում,
2. Բացահայտել ուսանող-երիտասարդների բարոյամշակութային արժեքային կողմնորոշումների ուղղվածությունը և ձևավորման առկա միտումները, դրանց ազդեցությունը միջսերնդային հարաբերությունների վրա:

Սոցիոլոգիական հարցման ընթացում մենք օգտագործել ենք հետազոտական հետևյալ մեթոդները. զրույց, թիրախի ընտրություն, ֆոկուս խմբերի ձևավորում, տարբեր մասնագիտական սեմինարների, հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող սեմինար հանդիպումների թեմաների քննարկում:

Հետազոտությունն իրականացվել է 18-30 տարեկան ուսանող-երիտասարդների շրջանում: Հարցմանը մասնակցել են 1500 ուսանող-երիտասարդներ ՀՀ տարբեր մարզերից, որից 59%-ը իգական սեռի ներկայացուցիչներ են, իսկ 41%-ը՝ արական: Սոցիոլոգիական հարցումների մշակման համար օգտագործվել է Ms Excel 2013 և SPSS 6.0 ծրագրային փաթեթները:

Տոկոսային հարաբերությունը այսպիսին էր՝ 18-22 տարիքային խումբը՝ 52%, 23-27՝ 12%, 27-30՝ 36%, որն էլ թույլ տվեց ստանալ երիտասարդների սոցիալական բարեկեցության և բարոյամշակութային արժեքային կողմնորոշումների օբյեկտիվ վերլուծություն:



Տրամագիր 1. Հարցման մասնակիցների տարիքային բաժանումը

Մենք հարցման ընթացքում չենք կենտրոնացել միայն սովորող ուսանողների բարոյամշակութային արժեհամակարգի ուսումնասիրմանը բուհում, քանզի կարծում ենք, որ մարդու, անձի բարոյական, մշակութային հոգևոր և այլ արժեքային կողմնորոշումների ամբողջական համակարգը ձևավորվում է նաև ընտանիքում, շրջապատում, աշխատավայրում և այլ սոցիալական ինստիտուտներում:

Հարցվածներից 37%-ը ամուսնացած են, 51,7%-ը ընտանեկան որևէ կապերով կապված չեն, 7,2%-ը համատեղ են ապրում, բայց պաշտոնապես ամուսնացած չեն, 4,1%-ը ամուսնալուծված են:



Տրամագիր 2. Հարցման մասնակիցների ընտանեկան կարգավիճակը

Սոցիոլոգիական ուսումնասիրություններն իրականացվել է հիմնականում անկետավորման, դիտումների, զրույցի, հարցազրույցի, բանավեճերի, թեստավորման, քննարկվող հիմնախնդրի շուրջ շարադրությունների, վերլուծության միջոցով:

Սոցիոլոգիական ուսումնասիրությունների բազա հանդիսացած ֆակուլտետների ընտրությունը պայմանավորված է նրանով, որ դրանցից յուրաքանչյուրը թույլ է տալիս բացահայտել այն գործոնների ամբողջությունը, որոնք բնորոշում են տվյալ բնագավառի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող ուսանողների բարոյամշակութային արժեքների տիրապետման մակարդակը: Բացի դրանից՝ բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառությունը ենթադրում է բոլոր ֆակուլտետների դասավանդողների և ուսանողների միջև արդյունավետ փոխշփումներ և դրա հիման վրա տեղեկատվության ակտիվ փոխանակում:

Հետազոտության հիմնական դրույթները հետևյալն են. բարոյական դաստիարակությունը անձի այնպիսի բարոյական հատկանիշներ ձևավորող գործընթաց է, որոնք օգնում են ոչ միայն ճանաչել և լիովին ընկալել

հասարակության բարոյամշակութային արժեքները, այլև հարկ եղած դեպքում բարեփոխել այն: Բարոյամշակութային արժեքը հոգևոր արժեքի բաղադրատարրերից է, և նրա մակարդակը որոշվում է ոչ միայն կենսահոգեբանական նախադրյալներով, այլև սոցիալական գործառույթներով: Հավելենք նաև, որ ուսանողական տարիքը անձի ինքնավերլուծության, ինքնագնահատման, ստեղծագործական ներուժի արդյունավետ դրսևորման շրջանն է: Չնայած բուհի տարբեր ֆակուլտետների յուրահատկություններին՝ անձի՝ որպես մասնագետ մտավորականի բարոյամշակութային արժեքների ձևավորման գործընթացի բովանդակությունը նույնական բնույթ ունի, որը բխում է բուհի սոցիալական միանշանակ գործառույթներից:

Ուսանողի բարոյամշակութային արժեքների ձևավորման և զարգացման վրա մեծ ազդեցություն ունեն հիմնականում երկու խումբ բնութագրիչներ՝

1. ինքնարտահայտման ձգտումը, ռոմանտիզմը, մեծ ծավալի գիտելիքների յուրացման ունակությունը, բազմազան հակումները, ակտիվ փոխշփումները, հուզականությունը, ստեղծագործելու ձգտումը, ապագային նպատակադրվածությունը,
2. գնահատման նկատմամբ միօրինակ մոտեցումը, նեղմիտ դատողությունները, ոչ բավարար կենսափորձը:

Բնութագրիչների առաջին խումբը, անտարակույս, հիմնականում դրական ազդեցություն ունի ուսանողի բարոյամշակութային արժեքների ձևավորման ուղղությամբ, երկրորդ խումբը խոչընդոտում է այն:

Հարկ է նշել, ի դեպ, որ մեծ թվով ուսանողներ չունեն բարոյամշակութային արժեքների, հատկապես բարոյական զգացմունքների ձևավորման պահանջմունք, այսինքն՝ խնդիրը նրանց համար առանձնապես կարևորություն չունի:

Ձեռնամուխ լինելով ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման խնդրի դիտարկմանը՝ այդ գործընթացի սուբյեկտները պետք է լիարժեք պատկերացում ունենան արդի պայմաններում ուսանող երիտասարդության բարոյական գիտակցության, բարոյամշակութային գործունեության մակարդակի և ուղղվածության, արժեբանական կողմնորոշումների, սկզբունքների, իդեալների,

դրդապատճառների ձևավորված միտումների մասին:

Ուսանողների բարոյամշակութային գիտակցությունն ինքնին չի ձևավորվում. նրանք արդեն բավականաչափ բարոյագիտական գիտելիքներ ունեն, նրանց մեջ արդեն ձևավորված են արդի իրադարձությունների նկատմամբ որոշակի բարոյական գնահատականներ և համոզմունքներ, հասարակության բարոյական արժեքների վերաբերյալ կարծիքներ ու պատկերացումներ: Անշուշտ, ուսանողները դեռևս բավականաչափ տեսական գիտելիքներ չունեն, լիովին ձևավորված չեն ընդհանուր աշխարհայացքային պատկերացումները, բայց չի կարելի անտեսել բարոյական գիտելիքների առկա, թեպետ բավականաչափ ցածր մակարդակը: Դաստիարակչական ներգործության սուբյեկտները պետք է անպայման ի նկատի ունենան այն փաստը, որ ուսանողները արտաքին ներգործություններին արձագանքում են, այսպես կոչված, ընտրողաբար՝ կախված իրենց անձնային և հասարակական հետաքրքրություններից, պատկերացումներից, զգացմունքներից, դիրքորոշումից, արժեքային կողմնորոշումներից: Ըստ այս մոտեցման՝ բուհի դասավանդողը կամ դաստիարակչական ներգործության սուբյեկտը, հայտնվելով օբյեկտ-սուբյեկտ հարաբերությունների մեջ, պետք է լիարժեք պատկերացում ունենա տվյալ պահին ուսանողների բարոյական գիտակցության ձևավորվածության մակարդակի մասին:

Սովորող երիտասարդության բարոյամշակութային գիտակցության ձևավորման գործընթացն անհնար է պատկերացնել՝ առանց անդրադառնալու ուսանողի անձի՝ բարոյական գիտակցության ձևավորման հիմնախնդրի վերլուծությանը: Ակնհայտ է, որ անձը ձևավորվում է օբյեկտիվ իրականության, կոլեկտիվի, շրջապատող միջավայրի և նպատակասլաց դաստիարակության արտաքին գործոնների ազդեցությամբ, ինչպես նաև ըստ անձի ներքին առանձնահատկությունների և անհատական հոգևոր հատկանիշների:

Ուսանողների բարոյական աշխարհայացքի ձևավորման գործընթացում մեծ ավանդ ունեն հումանիտար առարկաներ դասավանդողները: Այս առումով հիմնական ծանրաբեռնվածությունն ու պատասխանատվությունը, անշուշտ, կրում են փիլիսոփայություն, բարոյագիտություն, գեղագիտություն, պատմություն, մշակույթ,

գրականություն, բանահյուսություն առարկաներ դասավանդողները, ուստի և մեծ չափով կարևորվում են նրանց անձնային որակները, բարոյական նկարագիրը, հոգևոր-բարոյական հատկանիշները, աշխարհայացքը, քաղաքացիական դիրքորոշումը, համամարդկային մշակութային արժեքների իմացությունը, իմացական կարողությունները, մանկավարժական տակտը, հմայքը, հաղորդակցման ու խոսքի մշակույթը:

Հաշվի առնելով «բարոյական գիտակցություն» հասկացության համալիր ու բազմաշերտ բնույթը, հոգևոր մշակույթի բաղադրիչների համակարգում նրա կարևորությունը՝ կարելի է հետևել, թե բուհում դասավանդողների առջև ինչպիսի բարդ խնդիրներ են դրված սովորողների բարոյական ինքնագիտակցության ձևավորման ուղղությամբ:

Այդ խնդիրների լուծումը էապես պայմանավորված է դասավանդողների մանկավարժական մշակույթով՝ մանկավարժական վարպետությամբ ու տակտով, ինքնակատարելագործմամբ և ինքնազարգացմամբ, երևակայությամբ, ստեղծագործական առանձնահատկություններով:

Պարզելու համար, թե ուսանողները դասավանդողների մեջ հատկապես ո՞ր հատկանիշներն են գնահատում իրենց իսկ բարոյամշակութային արժեքների ձևավորման ու զարգացման առումով, մեր կողմից մշակվել են հարցաթերթիկներ: Հարցերն առաջադրելիս հաշվի են առնվել հարցերի մատչելիությունը, հարցվողների անհատական-հոգեբանական, տարիքային առանձնահատկությունները, խնդրի նկատմամբ հետաքրքրությունը, մոտեցումները, հիմնախնդրի խորության ընկալումը (տես հավելվածում):

Բարոյական մշակութային արժեքների գիտակցման վերաբերյալ մեր կողմից իրականացված հարցման արդյունքում պարզվեց, որ ուսանողները գիտակցում և առաջնային են համարում բարոյական գիտակցությունը՝ 25%, բարոյական վարքը՝ 27%, վարվելակերպի մշակույթը՝ 10%, բարոյական իդեալը՝ 6%, բարոյական զգացմունքները՝ 12%, բարոյական համոզմունքները՝ 13%, բարոյական դրդապատճառներն ու պահանջմունքները՝ 7%:

Աղյուսակ 5.

Ուսանողների բարոյամշակութային արժեքների գիտակցվածության ցուցանիշը

Ուսանողների բարոյամշակութային արժեքների գիտակցվածության ցուցանիշը	**Տոկոսներ**
Բարոյական գիտակցություն	23,8
Բարոյական վարք	27,2
Վարվելակերպի մշակույթ	9,8
Բարոյական իդեալ	5,3
Բարոյական զգացմունքներ	11,4
Բարոյական համոզմունքներ	14,8
Բարոյական պահանջմունքներ ու դրդապատճառներ	7,7



Տրամագիր 3. Ուսանողների բարոյամշակութային արժեքների գիտակցվածության ցուցանիշը

Ուսանողներին առաջադրված հարցաթերթիկի՝ «Դասավանդողի ո՞ր հատկանիշներն են նպաստում Ձեր բարոյամշակութային արժեքների ձևավորմանը»:

Դասավանդողի մեջ իմացական կարողություններն արժևորում են հարցվածների 27%-ը, հաղորդակցում՝ 23-ը, անձնային որակները՝ 32%-ը, խոսքային արժեքներ՝ 18%-ը: Որպես դասավանդողի կարևոր որակներ են նշվում մանկավարժական տակտը, մեթոդական վարպետությունը, ստեղծագործական երևակայությունը, հմայքը:

Աղյուսակ 6.

Բարոյամշակութային արժեքների ձևավորմանը նպաստող դասախոսի հատկանիշներն ըստ ուսանողների

Հատկանիշներ	Տոկոս
Իմացական կարողություններ	27%
Հաղորդակցում	23%
Անձնային որակներ	32%
Խոսքային արժեքներ	18%
	100%



Տրամագիր 4. Բարոյամշակութային արժեքների ձևավորմանը նպաստող դասախոսի հատկանիշներն ըստ ուսանողների

Այստեղից հետևում է, որ կառուցվածքային խոր փոփոխություններ են ենթադրվում հենց դասավանդողների ինքնագիտակցության և դասավանդման ոճի մեջ: Որպեսզի խորությամբ ու արդյունավետ ներգործեն ուսանողների

գիտակցության և բարոյական մտածողության վրա, նրանք պետք է դիալեկտիկական մոտեցում ունենան անցյալի իմաստավորման և արդիականության խնդիրների գիտակցման վերաբերյալ: Դասավանդողն ինքը պետք է ունենա աշխարհայացքային հստակ դիրքորոշում, կայուն համոզմունքներ այն գիտելիքների ճշմարտացիության մեջ, որոնք նա դասավանդում է: Այսինքն՝ դասավանդողն ինքը պետք է ունենա արժեքային համակարգ, բարոյամշակութային բարձր հատկանիշներ, իմացական-մասնագիտական բարձր կարողություններ, կարողանա իր ստեղծագործական ոգին ներդնել ուսանողներին գիտելիքներ հաղորդելիս:

Բարոյական գիտակցության ձևավորման գործընթացին պետք է նպաստի արդիական չափանիշներով իրականացող բարոյական գործունեությունը: Եթե հասարակության մեջ չստեղծվեն որոշակի պայմաններ տվյալ գործընթացների իրականացման ու զարգացման համար, ապա դասավանդողների ջանքերը ոչ մի ցանկալի արդյունքի չեն հանգեցնի: Ինքնըստինքյան հասկանալի է, որ նման խնդիրների իրականացման համար ծայրաստիճան կարևոր է բարձրագույն դպրոցի գործառույթների իրականացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը: Այդ անհրաժեշտ պայմանների թվում են առաջին հերթին ուսումնադաստիարակչական գործընթացի մարդասիրացումն ու ժողովրդավարացումը, ինչպես նաև ամբողջ բուհական համակարգի ժողովրդավարացումը: Անտարակույս, հնարավոր չէ հասարակության մեջ և բուհական համակարգում արհեստականորեն արագացված հաճախականությամբ նման պայմաններ ստեղծել. դրանք պետք է ձևավորվեն բնականոն հունով, տրամաբանական եզրահանգումների և աշխարհայացքի ձևավորման սահուն ճանապարհով:

Ուսանողների բարոյական գիտակցության ու բարոյական մշակութային արժեքների ձևավորման տեսանկյունից, արժեքներ, որը դիտարկվում է համամարդկային արժեքների համատեքստում, մեծ հետաքրքրություն են ներկայացնում ուսանողների մեջ արժեքային կողմնորոշումների, իդեալների առկայության, կյանքի իմաստի ըմբռնման վերաբերյալ դիտարկումները:

Հայտնի է, որ մարդն իր կյանքի ընթացքում տարատեսակ որոշումներ է կայացնում, գնահատում այս կամ այն գործունեությունը և բարոյամշակութային

տարբեր արժեքները, կատարում է դրանց որոշակի յուրացում, արժեքների վերաիմաստավորում և կանոնակարգում:

Արժեքային այս կողմնորոշումների մեջ արտացոլվում է անձի հոգեկան վիճակը, սոցիալական ինքնազգացումը, անցյալի, ներկայի և ապագայի զգացական գնահատականը: Առավել հատկանշական է մարդու երիտասարդ տարիքը, որը բարենպաստ միջավայր է ստեղծում անձի բարոյական, մշակութային և հոգևոր արժեքային կողմնորոշումների ստեղծման, ձևավորման և պահպանման համար՝ որպես կայուն հատկանիշ: Այս առումով բնորոշ է այն, որ մարդու հետաքրքրությունների շրջանակը սոցիալական տարբեր ինստիտուտներում, կողմնորոշումներում սկսում է աճել, տարատեսակվել: Հարց է ծագում, արդո՞ք արդի ուսանող երիտասարդը իզորու է տարանջատել կյանքի արժեքները, ավանդականը, բարոյականը և դառնալ դրանց լիարժեք կրողը, չէ՞ որ այսօրվա երիտասարդը առավել ինքնուրույն և ազատության ցուցանիշը բարձր է:

Մեր կողմից իրականացված հետազոտությունը ցույց տվեց, որ ՀՀ–ում երիտասարդների բարոյամշակութային արժեքային կողմնորոշումները հիմնականում պայմանավորված են երիտասարդների՝ տարբեր սոցիալական խմբերին հարմարվելու աստիճանով, քանի որ սոցիալական հարմարվելիությունը հանդիսանում է բարոյամշակութային արժեքային կողմնորոշումների փոփոխման կարևոր աղբյուր: Խոսքը գնում է ոչ միայն արժեքների և նպատակների վերաիմաստավորման մասին, այլև կյանքի գործունեության ձևերի և մեթոդների փոփոխման՝ որպես նպատակներին հասնելու և կարիքները բավարարելու միջոց:

Երիտասարդության ֆինանսական վիճակը, անշուշտ, ազդում է տրամադրության, քաղաքական դիրքորոշումների, վարքագծային նախընտրությունների վրա:

Աղյուսակ 7.

Ուսանող-երիտասարդների ֆինանսական կայունության ցուցանիշը՝ ըստ հարցումների

Ցուցանիշ	Տոկոս
Կայուն ֆինանսական վիճակ	37%

Մասամբ կայուն է	48%
Անկայուն է	15%



Տրամագիր 5. Ուսանող-երիտասարդների ֆինանսական կայունության ցուցանիշն ըստ հարցումների

Հետազոտությամբ պարզվեց, որ ժամանակակից հայ երիտասարդ ուսանողների 37%-ը բավարարված է իր կյանքի որակով, ֆինանսապես հաստատված և կայուն է, մասամբ գոհ է հարցվածների 48%-ը, 15%-ը ընդհանրապես գոհ չեն իրենց ֆինանսական կայունությամբ:

Հարցվածներից միայն 31%-ը պատրաստ է իր ֆինանսական միջոցներից առավելագույնը 5%-ը ծախսել մշակութային տարբեր միջոցառումներին մասնակցելու համար: Հարցվածների 22%-ը պատրաստ է մշակութային միջոցառումներին մասնակցելու համար բաժանվել սեփական միջոցներից միայն 7-10%-ը, իսկ հարցվածներից 28%-ն է պատրաստ սեփական կայուն եկամտից 10%-ը տրամադրել մշակութային միջոցառումների մասնակցությանը, իսկ մշակութային միջոցառումներին մասնակցելու համար բաժանվել սեփական միջոցներից պատրաստ չէ հարցվածների 19%-ը՝ ֆինանսական դժվարություններ ունենալու պատճառով:

Դրական պատասխանողների 55,0%-ի եկամտի աղբյուրն է հիմնական աշխատանքը, 4.0%-ի համար աշխատավարձը հիմնական եկամուտը չէ, իսկ 11,0% մոտ գերակշռում է «պատահական եկամուտը»:

Դրա հետ մեկ տեղ նման շուկայական հարաբերություններում երիտասարդության 57,0% մտահոգ է ֆինանսական վիճակի վատացումից, 47.0% - հիվանդություններից, 34.0%՝ անորոշ ապագայից, 20,0%-ը՝ հիմնական գործազրկությունից: Պատահական չէ, որ հետազոտությամբ արձանագրվեց այնպիսի երևույթ, ինչպիսին է վախ ապագայի նկատմամբ՝ պատասխանողների 34.0% վախենում են ապագայից:

Այդ կապակցությամբ ակնառու են այն խնդիրները, որոնք անհանգստացնում են ժամանակակից երիտասարդներին (Տրամագիր 6.):



Տրամագիր 6. Ժամանակակից ուսանող-երիտասարդներին անհանգստացնող խնդիրներն ըստ հարցման արդյունքների

Պատասխանողների 31,5% խուճապի են մատնում գների բարձրացումը, 22,8%՝ էկոլոգիական խնդիրները, 13,2%՝ ազգային մշակույթի ոչնչացումը, 11,8%՝ հասարակության սոցիալական շերտավորումը, 9,1%՝ հանցագործության աճը, 11,6%՝ սոցիալական ոլորտի վիճակը: Այն հարցին թե «Կուզենա՞յք արդյոք շարունակել կրթությունը», ուսանող-երիտասարդների 68,2% դրական պատասխան է տվել, քանի որ կրթությունը ՀՀ-ում համարում են պարտադիր պայման հետագա կարիերայի համար, բացասական պատասխան է տվել հարցվածների 14,5%-ը, իսկ 17,3%-ը դժվարանում է պատասխանել:

Այսպիսով, այն խնդիրները, որոնք անհանգստացնում է արդի հայ ուսանող-երիտասարդությանը, փողն է և վաստակելու հնարավորությունը: **Նյութական բարեկեցությունը** ուսանող-երիտասարդների արժեքային դիրքորոշումներից մեկն է՝ 33,7%: Ընդ որում՝ փողը, հարստությունը մեր ուսանող-երիտասարդների

մեծամասնության համար կյանքի բարեկեցության ցուցանիշն է, և այն նպատակն է, որին նրանք ձգտում են: Տվյալ դեպքում փողի, որպես կազմավորված արժեքի, մասին խոսելուց կարելի է ընդունել որպես նոր շուկայական մտածողություն (Տրամագիր 7.): Ցանկանալ լավ, հարմարավետ ապրել սխալ չէ: Հակառակը, պետք է և կարելի է դա իրականացնել, եթե այն չի վնասում շրջապատին:



Տրամագիր 7. Ուսանող–երիտասարդների արժեքային ցուցանիշներն ըստ հարցման արդյունքների

Առողջությունը ուսանող-երիտասարդների համար իր արժեքային ցուցանիշով երկրորդ է: Դրա օգտին են արտահայտվել հարցվողների 28,1%: Իր արժեքային ցուցանիշով երրորդ տեղում **կրթություն ստանալու հնարավորությունն է** /հարցվողների 23,3%/, այնուհետև՝ որևէ **որակավորում ստանալը** (9,7%) և **կարիերա** (5,2%): Ուսանող-երիտասարդության համար տվյալ սոցիալական արժեքները հիմնական պայմաններ են կյանքի դիրքի և անհատականության զարգացման համար: Այս բոլորը վկայում է նրա մասին, որ ընդհանուր առմամբ «կողմ» և «դեմ» հավասարակշռությունը շուկայական ձևափոխման նկատմամբ կայուն չէ արժեքների տեսանկյունից:

Հետազոտելով ուսանող-երիտասարդության պահանջները, ցանկությունները և հույսերը՝ տեղին է ընդգծել, որ իր արժեքային դիրքորոշումներում նկատվում է պրագմատիկ տրամադրություն, գործունեության ոլորտի ձգտում, որը թույլ կտա փոխել նյութական և սոցիալական մակարդակը, իսկ ուսանող-երիտասարդների մի մասի համար՝ պարզապես գոյատևել: Բնականաբար, այն ներկայացնում է կյանքի որակի բարձր պահանջներ՝ կյանքի անվտանգության և բարեկեցության երաշխիք:

Այսօր ՀՀ վերապրում է ոչ միայն սոցիալական և անհատական արժեքների վերափոփոխման, այլ նաև անհատական որակների գնահատման, անհրաժեշտ հաջող կյանքի համար հասարակության ազատականացման և տնտեսական անկախության տարբեր գործընթացներ:

Ունի՞ արդյոք ժամանակակից ուսանող-երիտասարդությունը իդեալներ և նպատակներ իրենց կյանքում: Հարցման մասնակիցների գրեթե ամեն երրորդը ուսանող-երիտասարդը ունի իդեալներ, բայց միայն որպես կյանքի դիրքորոշում, և առանձնապես եռանդ չեն ցուցաբերում դրանց հասնելու համար: Ամեն տասներորդ պատասխանողը իդեալներ և նպատակներ չունի կյանքում, քանի որ դրանք դեռ կազմավորված չեն:

Հարցվածների 26,8% կարծիքով, իրենք արդեն կայացել և հաստատվել են որպես անհատականություն արժեքային համակարգի ձևավորման տեսակետից, 53,9% - ը կարծում է, որ որոշ չափով է հաստատվել, 6,1 % -ը կարծում է, որ ընդհանրապես չեն կայացել, իսկ 13,2 % -ը դժվարացան պատասխանել (Տրամագիր 8.):



Տրամագիր 8. Ուսանող-երիտասարդների կայացվածության աստիճանն ըստ հարցումների

Իրատեսությունը կյանքի նկատմամբ զգալի չափով հաստատվել է հարցվածների 33,7%-ի մոտ, 54,3%-ը կարծում է, որ կյանքում որոշ չափով է իրատես, իսկ 1,6%-ը գտնում է, որ իրատես չէ բացարձակապես, 10,4%-ը դժվարացան պատասխանել (Տրամագիր 9.):



Տրամագիր 9. Ուսանող-երիտասարդների՝ կյանքի հանդեպ իրատեսության ցուցանիշներն ըստ հարցման արդյունքների

Կյանքի, արժեքների հանդեպ լավատեսություն, մարդասիրություն, արժեքայնություն ցուցաբերել է հարցվածների 34,9%, 47,6%-ը գտնում է, որ լավատես է մասամբ, որոշակի հարցերում ու իրավիճակներում միայն, 5,3%-ը կարծում է, որ վատատես է, այս կյանքում ոչինչ լավ լինել չի կարող, իսկ 12,2%-ը դժվարացել է պատասխանել (Տրամագիր 10.):



Տրամագիր 10. Երիտասարդ ուսանողների՝ կյանքի հանդեպ լավատեսության արտահայտման ցուցանիշներն ըստ հարցման արդյունքների

Ամփոփելով ստացված արդյունքները՝ կարելի է եզրահանգել, որ այսօրվա ուսանող-երիտասարդների՝ կյանքի հանդեպ արժեքային իդեալների, նպատակների, դրանց հասնելու ուղիների և կողմնորոշումների մեջ առկա է հակասություն: Ժամանակակից ուսանող-երիտասարդը ուզում է լինել ավելի մարդասեր,

զարգացած, առաջադեմ, սակայն կյանքի դժվարությունները ստիպում են նրան սոցիալական գործունության ընթացքում դրսևորել ավելի կոպիտ և պրագմատիկ վարքային ձևեր:

Այսպիսով, ստացված արդյունքների վերլուծության արդյունքում կարելի է առանձնացնել ուսանող-երիտասարդների բարոյամշակութային արժեքային համակարգի ձևավորման երեք հիմնական խմբեր:

Առաջին խումբը անմիջականորեն կապված է ուսանող-երիտասարդների կյանքի անվտանգության, ֆիզիկական և հոգևոր առողջության հետ: Անցկացված հետազոտությունները ցույց են տալիս, որ 46,2%-ը որպես բարոյամշակութային արժեք՝ գնահատում է ընտանիքը և վախենում է հարազատին կորցնելուց, 13,4%-ին անհանգստացնում է հանցագործության հիմնախնդիրը, 21,3 % -ը անհագստացած է թմրամոլության տարածումից, 19,1% –ը՝ շրջակա միջավայրի աղտոտումից, հնարավոր էկոլոգիական վտանգներից, որոնք կարող են սպառնալ մարդու առողջությանը: Այս խմբի մասնակիցների մոտ գերակշռում են այն արժեքային կողմնորոշումները, որոնք օբյեկտիվ պատճառներով կապված են էկոլոգիական պայմանների վատացմանը, շրջակա միջավայրի աղտոտմանը, ինչպես նաև երկրում հանցագործության աճով(Տրամագիր 11):



Տրամագիր 11. Ուսանող-երիտասարդների կյանքի անվտանգության, ֆիզիկական և հոգևոր առողջության հետ անմիջականորեն կապված հիմնախնդիրների ցուցանիշներն ըստ հարցումների

Հարկ է ընդգծել, որ և էկոլոգիական հիմնախնդիրները դառնում են XXI դարի

կարևոր հիմնախնդիրներից և դա չի կարող չանդրադառնալ ուսանող-երիտասարդ սերնդի՝ կյանքի պլանավորման հետագա գործունեության վրա: Ֆիզիկական առողջությունը հիմնվում է մանկությունից: Որպիսի հետագայում երիտասարդ սերունդը դառնա կենսունակ, ապա նրանք պետք է մեծանան էկոլոգիապես բարեկարգ պայմաններում՝ ուսանող-երիտասարդներին ոչ բնորոշ հիվանդություններով: Ի հակակշռ դրան՝ ներկայումս նկատվում է տարատեսակ հիվանդությունների երիտասարդացում: Այդ են վկայում վերջին հետազոտությունները մանկավարժական վալեոլոգիայից:

Հարցվածների 13,4%-ին անհանգստացնում է հանցագործության աճի միտումները, որոնք իրենց ուղղակի հետևանքն են թողնում ինչպես անձի սոցիալական, այնպես էլ ընտանիքի՝ որպես բարոյամշակութային արժեքի գնահատման գործում: Այդ կապակցությամբ իրավապահ մարմինները, համագործակցելով ՀՀ ԿԳ, ՀՀ սոցապահովության, ՀՀ առողջապահության նախարարության հետ պետք է ակտիվացնեն իրենց աշխատանքը՝ ուսանող-երիտասարդների շրջանում իրավախախտումների կանխարգելման աշխատանքներ անցկացնելով:

Երկրորդ խումբը կապված է ուսանող-երիտասարդ անձանց կյանքի հեռանկարներից, այսինքն՝ այն ինչին ուսանող-երիտասարդը ձգտվում է և ուզում հասնել կյանքում: Նա պետք է ունենա կյանքի հեռանկարի զգացում, իսկ դա, առաջին հերթին կապված է ստեղծագործական ինքնադրսևորմամբ, կրթություն ստանալու հաջողություններով, մասնագիտությամբ, բարձր որակավորմամբ, կարիերայի աճով, ապագա ընտանիքի բարեկեցությունը ապահովելու մակարդակով, որը հանդիսանում է ժամանակակից երիտասարդության սոցիալական արժեքը:

Այս խմբի երիտասարդների մոտ բարոյամշակութային արժեհամակարգի հիմքում ընկած է ընտանիքը, նրա բարեկեցությունը: Սոցիալական տարբեր վայրիվերումների արդյունքում սրվում է երիտասարդ ընտանիքների կայունության, բարօրության կարգավիճակը, ինչն էլ իր հերթին բերում է անվստահություն վաղվա օրվա նկատմամբ, որն էլ հանգեցնում է բարոյամշակութային արժեհամակարգի

փոփոխմանը: Ահա թե ինչու ուսանող-երիտասարդի համար հրատապ է կյանքի հեռանկար ունենալը, ստեղծագործական ինքնահաստատումը, կրթության և մշակույթի մակարդակի բարձրացումը:

Երրորդ խումբը կարելի է անվանել «սոցիալ-քաղաքական»: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ՀՀ-ի երիտասարդությունը բարոյամշակութային արժեհամակարգում է գնահատում քաղաքացիական և քաղաքական իրավունքներն ու ազատությունը: Նրանք ձգտում են հնարավորինս շատ մասնակցել հասարակական կյանքին, կարգավորել պետության և անձի միջև եղած հարաբերությունները: Հարցվածների քառորդ մասը կարծում է, որ ուսանող-երիտասարդների մոտ առկա է բարձր հայրենասիրության գիտակցումը: Չնայած զգալի դժվարություններին, որոնց բախվում են ուսանող-երիտասարդները, նրանք պահպանում են հավատն ու լավատեսությունը, որ հետագայում դրական տեղաշարժեր կդիտվեն նրանց սոցիալ-տնտեսական, քաղաքական, բարոյամշակութային և հասարակական կյանքում:

Այսպիսով՝ մեր հետազոտությամբ հաստատվեց, որ ժամանակակից պայմաններում ուսանող-երիտասարդ սերնդի բարոյամշակութային արժեքային կողմնորոշումներում առանցքային է ապագայի կառուցման հիմնախնդիրը, որը սակայն դեռևս անկայուն է: Այդ հիմնախնդիրը ուսանող-երիտասարդները կապում են երկրի կայուն սոցիալ-տնտեսական, քաղաքական, բարոյահոգեբանական իրավիճակի հետ:

Մեր հետազոտությամբ մենք խնդիր էինք դրել ոչ միայն բացահայտել ուսանող-երիտասարդների բարոյամշակութային արժեհամակարգի կողմնորոշումների առաջնահերթությունների, այլ նաև այդ արժեհամակարգի փոփոխման ընթացքը:

Այն պայմաններում, երբ ներկայիս հայ հասարակությունը կորցնում է իր կայունությունը, ենթարկվելով օտարածին բարքերին, հասարակական արժեքների դերը դառնում է առավել էական: Նրանք հանդես են գալիս անձի վարքի և հասարակության ուղղորդող շարժառիթ, կայունարար:

Նորովի մոտեցմամբ ուսանողների արժեհամակարգային մոտեցումներն ուսումնասիրելիս անհրաժեշտ է հաշվի առնել երկու հիմնական գործոն՝

շարունակականությունն ու փոփոխականությունը:

Ժամանակակից երիտասարդության բարոյամշակութային արժեհամակարգի զարգացման կարևորագույն գործոններից մեկը առկա սոցիալ-մշակութային իրավիճակն է: Այստեղ հարկ է նշել էթնիկական, ազգային այն յուրահատկություններն ու հիմնախնդիրները, որոնք բնորոշ են տվյալ հասարակությանը:

Ուսանող-երիտասարդությունը առավել շատ է բախվում օտար բարոյական, մշակութային, հոգևոր բարքերին: Այս գործընթացը առավել արագացնում են արդի տեղեկատվական տեխնոլոգիաները:

Այսօր համացանցային միջոցները հասանելի են գրեթե յուրաքանչյուր ուսանող-երիտասարդի: Շփվելով սոցիալական տարբեր հարթակներում՝ անձը դառնում է այդ հարթակի կամակատարը, շփման ընթացքում, կամա թե ակամա, վերցնելով տարատեսակ մշակութային տարրեր: Այս ամենի ակներև օրինակ է լատինատառ հայերենով շփումը: Այստեղից հետևում է, որ ուսանող-երիտասարդության շրջանում աստիճանաբար թուլանում է հայերեն լեզվով հաղորդակցվելու գրավոր խոսքի մշակույթը, որն էլ իր հերթին բերում է լեզուն՝ որպես արժեքի գիտակցման և իմաստավորման անկմանը:

Համացանցային շփման ընթացքում փոփոխվում և վերաիմաստավորվում են հաղորդակցման հուզակամային որակները, որն իրական կյանքում դժվարացնում է ուղղակի հաղորդակցումը, բանավոր խոսքի զարգացումը:

Այստեղից կարելի է հանգել այն եզրահանգման, որ անձի սոցիալականացման գործընթացում մարդն անընդհատ ենթարկվում է բարոյամշակութային զանազան փոփոխությունների, տեղի է ունենում ներկայի և անցյալի իդեալների, բարոյական կերպարների, արժեքների ընկալման տարանջատում, առաջ է գալիս նորին ունենալու անհագ ձգտումը, որն իր հետ, որոշ դեպքերում բերում է նաև ագրեսիա, բռնություն (օրինակ համակարգչային տարատեսակ խաղերը, որոնք առաջացնում են կախվածություն և իրականության ընկալման թուլացում):

Այս ամենը ծնում է բարոյամշակութային արժեհամակարգի ճգնաժամ, ընդհանուր անկում, որից խուսափելու համար յուրաքանչյուր ուսանող-երիտասարդ

ինքն է ընտրում հաղթահարման սեփական ուղիներն ու մեխանիզմները:

Հարկ է նշել, որ ճգնաժամը ազդում է ոչ միայն տնտեսության, քաղաքականության վրա, այլ նաև հոգևոր ոլորտի, մշակույթի, արժեքային կողմնորոշումների, բարքերի վրա: Կատարվում է ավանդական արժեքային կողմնորոշումների վերափոխում, արդյունքում ստացվում է հին և նոր արժեքային համակարգերի հակասություն, նրանց քաոսային խառնուրդ: Նման փոփոխությունները առաջին հերթին ազդում են մշակույթի և անձի սոցիալական, բարոյական արժեքների վերաիմաստավորման վրա: Պատահական չէ, որ պատասխանողների 62,6% նշել են, որ ՀՀ մշակույթը ճգնաժամի մեջ է, և միայն 16,3% նշել են, որ նման ճգնաժամ չի նկատվում: Մտահոգում է այն փաստը, որ հարցվողների 21,1 %, այսինքն՝ գրեթե երրորդ մասը, դժվարացան պատասխանել այն հարցին, թե «Ինչպես եք կարծում, արդյո՞ք ՀՀ մշակույթային կյանքը, բարոյամշակութային արժեհամակարգը ճգնաժամի մեջ է» (Տրամագիր 12.):



Տրամագիր 12. «Ինչ եք կարծում, արդյո՞ք ՀՀ մշակույթային կյանքը, բարոյամշակութային արժեհամակարգը ճգնաժամի մեջ է» հարցին տրված հարցման արդյունքները

Այս խմբի ուսանող-երիտասարդների անորոշությունը թույլ չի տալիս պարզ կողմնորոշվել մշակութային քաղաքականությամբ անձնական բավարարվածության աստիճանը, որն անցկացվում է պետության մակարդակով (43,2%): Միայն հարցվողների 27,2% բավարարված է պետության կողմից իրականացվող բարոյամշակութային քաղաքականությամբ, բարոյամշակութային արժեքների պահպանմամբ, իսկ 29,6% բացասական պատասխան տվեցին(Տրամագիր 13.):



Տրամագիր 13. Պետության կողմից իրականացվող բարոյամշակութային արժեքների պահպանման ուղղված քաղաքականությամբ ուսանող-երիտասարդների բավարարվածության աստիճանն ըստ հարցման արդյունքների

Հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ առաջարկների ստացման համար մենք նաև առաջադրել էինք հետևյալ հարցը. «Ձեր կարծիքով, ի՞նչ կարելի է անել ձեր գյուղում, շրջանում, քաղաքում ավանդական, հայկական բարոյամշակութային արժեհամակարգի պահպանման համար»: Ստացված արդյունքները ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ 8.

«Ձեր կարծիքով, ի՞նչ կարելի է անել ձեր գյուղում, շրջանում, քաղաքում ավանդական, հայկական բարոյամշակութային արժեհամակարգի պահպանման համար» հարցին տրված պատասխանները

1.	Ստեղծել ազգային մշակույթի թանգարաններ, ցուցահանդեսներ, ակումբներ, դպրոցներ	31,8 %
2.	Ցանկացած ձևով պահպանել մշակութային ավանդությունները	26,1 %
3.	Ցուցաբերել նյութական օգնություն	10,1 %
4.	Ավելի շատ ուշադրություն դարձնել ավանդական ծեսերին,	19,2 %

	մշակութային ավանդույթներին	
5.	Աջակցել մայրենի լեզվի տարածմանը	12,8 %

Հարցման տվյալները վկայում են, որ ՀՀ պատկան՝ երիտասարդների գործերով զբաղվող մարմինների կարևոր ուղղություններից պետք է լինի ուսանող-երիտասարդների բարոյամշակութային արժեքների պահպանման և զարգացման աշխատանքները: Այս առումով անհրաժեշտ է մշակել համապատասխան հայեցակարգեր, օրենսդրական փաստաթղթեր, որոնք հնարավորինս կպաշտպանեն ազգային էթնոսի ավանդական արժեհամակարգը օտար բարքերի ներմուծումից:

Երիտասարդության բարոյամշակութային արժեհամակարգի ճգնաժամը սրանում է նաև սոցիալական ինստիտուտների համագործակցության ոչ բավարար վիճակով:

Արժեհամակարգի ճգնաժամի ցուցանիշներից մեկն էլ տարբեր սոցիալական ինստիտուտների ոչ համակարգված ներգործությունն է ուսանող երիտասարդի անձի ձևավորման վրա: Բուհ-աշխատաշուկա սոցիալական պատվերի անհամապատաս-խանությունը բերում է գիտելիքներին, կրթության հանդեպ անտարբեր վերաբերմունքի՝ շրջանավարտներից շատերը չեն կարողանում աշխատել իրենց մասնագիտությամբ, չի բավարարվում մասնագիտական պահանջմունքը, որի արդյունքում ներգործվում է այլ արժեքներով, ձեռք են բերվում նաև տնտեսական վարքի բացասական ձևեր /ստվերային տնտեսություն/, հարազատ երկրի պատմության և մշակույթի նկատմամբ մակերեսային վերաբերմունք:

Հետազոտությունները ցույց են տվել նաև , որ երիտասարդության գործերով զբաղվող քաղաքական, հասարակական և սոցիալական տարբեր մարմինները հասկանում, գիտակցում են առկա խնդիրներն ու դժվարությունները, որոնք ազդում են ուսանող-երիտասարդների բարոյամշակութային արժեքների ձևավորման վրա, և փորձում են այդ առումով իրականացվում են տարբեր ծրագրեր: Որպես օրինակ կարող ենք նշել ուսանող-երիտասարդների հանգստի կազմակերպման միջոցառումները, որոնք զուգորդվում են ազգային տարատեսակն երգերով,

պարերով, ինտելեկտուալ խաղերով: Այդ ընթացքում ուսանողները ծանոթանում են ազգային, ավանդական բարոյամշակութային արժեքներին, այնուհետև իրենք են դառնում դրանց կրողները ու փոխանցողները:

Ինչպե՞ս է ՀՀ-ում ապրող ուսանող-երիտասարդությունն անցկացնում իր հանգիստը: Հարցման արդյունքների համաձայն՝ 20,1% նախընտրում է ազատ ժամանակ հանդիպել ընկերների հետ, 34,8% –ը դիտում է հեռուստացույց կամ նավարկում համացանցում, 16,2% –ը՝ լսում է երաժշտություն կան դիտում ֆիլմեր, 11,8% –ը՝ զբաղվում են սպորտով, այլ զբաղմունք՝ 17,1%:



Տրամագիր 14. Ուսանող-երիտասարդների հանգստի կազմակերպման ձևերն ըստ հարցման արդյունքների

Ուսանողն-երիտասարդության մշակութային, բարոյական, հոգևոր զարգացման վրա յուրովի ազդեցություն են թողնում հեռուստատեսային ծրագրերի դիտումը, երաժշտությունը, գրքերի ընթերցումը:

Ցուցանիշային տարբերություն է նկատվում քաղաքային և մարզային բնակավայրերում ապրող ուսանող-երիտասարդների ակտիվ հանգստի կազմակերպման գործում: Այսպես, քաղաքային բնակավայրերում ապրող ուսանող–երիտասարդները նախընտրում են իրենց ակտիվ մշակութային հանգիստը անցկացնել որևէ կենտրոնում, իսկ մարզային, շրջանային բնակավայրերում ապրող ուսանողների ակտիվ հանգիստը ուղեկցվում է հեռուստացույցով տարբեր հաղորդումներ դիտելիս:

Այժմ պարզենք ուսանող-երիտասարդների երաժշտական նախընտրությունը,

որը նույնպես ուղղակի ազդեցություն է թողնում նրանց մշակութային արժեքների ձևավորման գործընթացում: Նրանց 51,3 % գերադասում են հայտնի կատարողների էստրադային երգեր, 23,6 % –ը՝ ռոք, 12,4 % -ը՝ քաղաքային երաժշտություն, 9,5 %-ը՝ զինվորական և ժողովրդական երգեր: Ուսանող-երիտասարդության շրջանում 1.1% տոկոս են կազմում օպերային երաժշտության ունկնդիրները, հարցվողների 2,1% լսում է հին ռոմանսներ (Տրամագիր 15.):



Տրամագիր 15. Ուսանող-երիտասարդների երաժշտական նախընտրությունն ըստ հարցումների

Ուսանող-երիտասարդների կյանքում կևևոր է դիտարկել նաև ընթերցանության դերը արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացում: 22,3%-ը գերադասում է դետեկտիվ կարդալ, 13,2%-ը՝ պատմական վեպ, 16,6% -ը՝ արկածներ, 18,8% -ը՝ տեղեկատվական գրականություն, 11,1%-ը՝ ֆանտաստիկա, 8,7%՝ դասական գրականություն: Քիչ պահանջարկ ունի կրոնական գրականությունը՝ 2,1 %, պոեզիան՝ 7,2%: Վերջին տարիներին նկատվում է էլեկտրոնային միջոցներից ընթերցանության աճ (Տրամագիր 16):



Տրամագիր 16. Ուսանող-երիտասարդների ընթերցանության գրքերի ժանրերի նախապատվության ցուցանիշներն ըստ հարցումների

Այսպիսով՝ ուսանող-երիտասարդների հանգստի կազմակերպման և անցկացման վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսանող-երիտասարդների գերակշռող մասը գերադասում է զանգվածային լրատվության, էլեկտրոնային միջոցները, որտեղից էլ հետևում է, որ էլեկտրոնային ԶԼՄ-ը, համացանցային տեխնոլոգիաները հանդիսանում են ուսանողն-երիտասարդների բարոյամշակութային կողմնորոշումների հիմնական ուղիներից մեկը:

Ուսանող-երիտասարդների ազատ ժամանակի կազմակերպման և անցկացման ընթացքի ուսումնասիրումը, անհատական զրույցները ցույց են տալիս, որ նրանց շրջանում հանգստի կազմակերպման ակտիվ ձևերը զգալի քիչ են: Այստեղ կարևոր նշանակություն ունի ուսանողների ֆինանսական կայունությունը: Ոչ բոլոր ուսանողներին է հասանելի լիարժեք ակտիվ կյանքի կազմակերպումը, հատկապես մարզային բնակավայրերում: Այդ դեպքերում կարևոր է անվճար զանգվածային բարոյամշակութային միջոցառումների կազմակերպումը, որոնց ընթացքում կարելի է ներառել նաև վերջիններիս ներուժը:

Մեր կողմից իրականացված հետազոտությունները ցույց են տվել, որ ժամանակակից երիտասարդ-ուսանողների զգալի մասը, բուհից դուրս, իրենց ժամանակը անցկացնում են փողոցում՝ շփվելով տարբեր բարքերի ու սովորույթների տեր անձանց հետ: Այստեղ կարևոր խնդիր է դառնում նրանց առողջ, ազգային արժեքներին համահունչ բարոյամշակութային արժեքային համակարգի ձևավորումը:

Այժմ դիտարկենք ուսանողների արժեքային կողմնորոշումների ձևավորման հարցում դաստիարակության դերն ու նշանակությունը:

Այն հարցին, թե «Դաստիարակության համակարգում ո՞ր բաղադրիչն եք առավել կարևորում Ձեր կյանքում», հարցվողների 28,7%-ը պատասխանել է, որ առավել կարևորում է բարոյական դաստիարակությունը, 23,2%-ը կարևորում է ֆիզիկական դաստիարակությունը, 16,8%-ը կարևորում է կրոնական դաստիարակությունը, 11,2%-ը կարևորում է աշխատանքային դաստիարակությունը, 8,2%-ը՝ հայրենասիրական դաստիարակությունը և 3,7%-ը՝ գեղագիտական դաստիարակությունը, իրավական դաստիարակությունը՝ 3,1%, սեռային, սեռական

դաստիարակությունը՝ 1,8%, էկոլոգիական դաստիարակությունը՝ 3,3 % (Տրամագիր 17):



Տրամագիր 17. Ուսանող-երիտասարդների կյանքում դաստիարակության համակարգի բաղադրիչների բաշխվածության ցուցանիշներն ըստ հարցումների

Չնայած որ հարցվողների պատասխաններում գերակշռում է բարոյական դաստիարակության բաղադրիչը, այսօրվա ուսանող-երիտասարդները առաջնայնությունը տալիս են համամարդկայինին, քանի որ նրանք առավել ենթարկվում են գլոբալացմանը: Այս ամենի արդյունքում տեղի է ունենում բազմամշակութային ներգործություն: Միշտ չէ, որ սոցիալականացման գործընթացում ուսանողի անձը կարողանում է կայունություն ցուցաբերել այլ տարաբնույթ բարոյամշակութային ներգործությունների նկատմամբ:

Առավել քիչ տոկոսային ցուցանիշ է հատկացվել գեղագիտական դաստիարակությանը, քանի որ խորհրդային կարգերի փլուզումից հետո բազմաթիվ գեղագիտական դպրոցներ և կենտրոններ դադարեցին գոյություն ունենալուց, իսկ գործող գեղագիտական դպրոցներն ու կենտրոնները սկսեցին աշխատել վճարովի սկզբունքով, որն առավել ընդգծեց հիմնախնդրի կարևորությունը:

Այդ բացը փորձեց իր վրա վերցնել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, նախկին պիոներ պալատների փոխարեն ձևավորելով հայորդաց տներ, որտեղ հոգևոր դաստիարակությանը զուգընթաց՝ մատաղ սերնդին տրվում է նաև բարոյական, գեղագիտական և մշակութային դաստիարակություն: Սակայն այս

հաստատությունների թվաքանակը դեռևս ոչ բավարար է՝ հիմնախնդիրը ամբողջովին լուծելու համար:

Ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորվածությունը մեծ չափով կախված է անձի բարոյական մշակույթի այն մակարդակից, որ նա ունեցել է մինչև բուհ ընդունվելը: Ակնհայտ է, որ այդ մակարդակը օրեցօր նվազում է: Դրա հիմնական պատճառներից մեկն էլ դպրոցական ծրագրերում «Բարոյագիտություն», «Բարոյական արժեքներ» և այսօրինակ դասընթացների բացակայությունն է:

Բարոյական, մշակութային արժեքների ձևավորման գործընթացում անփոխարինելի նշանակություն ունի գեղագիտական դաստիարակությունը:

Գեղարվեստական գրականության և արվեստի ընկալումը դրական գործոն է անձի բարոյականության և բարոյամշակութային արժեքների ձևավորման գործում: Առաջին հերթին այն հնարավորություն է ընձեռում թափանցել գեղագիտական արժեքների ինքնատիպ աշխարհը, որը համայն մարդկության և տվյալ հասարակության արժեքային ընդհանուր համակարգի բաղկացուցիչ մասն է, երկրորդ՝ արվեստի ստեղծագործությունները, հատկապես գրականությունը, կինոն, թատրոնը և այլ ժանրեր բարոյական մեծ ներուժ են պարունակում. նրանցում ցայտուն դրսևորվում են բարոյական բարդ հիմնախնդիրները, մարդկային հոգեվիճակների խոր բախումները, դրամատիզմը, հուզականությունը, սուր ապրումները և այլն: Այս առումով արվեստը յուրահատուկ «բարոյականության դպրոց» է:

Ուսանողների՝ գեղագիտական մշակույթի տիրապետման չափանիշներից մեկն էլ արվեստի բնագավառի վերաբերյալ նրանց տեղեկացվածությունն է: Ուսանողները վկայակոչում են այն հեղինակներին, որոնց ստեղծագործությանը նրանք առավել լավ ծանոթ են դպրոցական դասընթացից կամ մշակութային հեռուստահաղորդումներից: Այս խնդիրը դիտարկելիս մենք որպես վերլուծության նյութ ենք վերցրել արվեստի այնպիսի տեսակներ, որոնց ուսանողները սերտորեն առնչվում են բուհում ուսումնառության տարիներին ուսումնադաստիարակչական աշխատանքների գործընթացում, ուսանողական ակումբներում, գրադարանում, բազմաբնույթ միջոցառումների ընթացքում: Ամենից առաջ դա գեղարվեստական

գրականությունն է, երաժշտությունը, թատրոնը, պարարվեստը: Արդեն նշել ենք, որ գեղարվեստական գրականությունը ուսանողական միջավայրում բավականաչափ տարածում ունի: Սակայն չի կարելի չնշել այն փաստը, որ պատասխանելով գեղարվեստական գրականության իմացությունը ստուգող հարցերին՝ ուսանողները սովորաբար արտահայտում են ավանդական հայացքներ, դասագրքային ձևակերպումներ, նշում այն հեղինակների անունները, որոնց ստեղծագործություններին ծանոթ են դպրոցական ծրագրերից, կամ համաժողովրդական ճանաչում ունեն: Ուսանողների վերլուծությունները սովորաբար մակերեսային բնույթ ունեն, նրանք բավարարվում են սոսկ սյուժետային դեպքերի նկարագրությամբ և հաճախ չեն ընկալում ստեղծագործության խոր գաղափարական բովանդակությունը, հերոսների նուրբ հուզաշխարհը և արծարծված բարոյական խնդիրները:

Ուսանող-երիտասարդների բարոյամշակութային արժեհամակարգի ձևավորման գործում էական նշանակություն ունի նաև կրոնը: Պատահական չէ, որ հարցվողների 16,8%-ը կարևորում է կրոնական դաստիարակությունը, սակայն այստեղ մեծ խնդիր է առաջացնում տարբեր կրոնական, աղանդավորական շարժումները, որոնք իրենց բացասական ներգործությունն են թողնում անձի բարոյամշակութային արժեքային կողմնորոշումների ձևավորման վրա: Այս առումով հատկապես կարևոր է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դերը, որը պետք է մեծացնի իր ջանքերը հետագա սերունդների հոգևոր, ազգային, բարոյամշակութային արժեհամակարգի ձևավորման և պահպանման գործում:

Ուսանողների հետ անհատական զրույցների ընթացքում տրվել է հարցում՝ պարզելու համար նրանց վերաբերմունքը կրոնի և հասարակության մեջ կրոնի դերի, կրոնական պատվիրանների բարոյամշակութային արժեքի, մարդու կողմից այդ պատվիրաններով առաջնորդվելու անհրաժեշտության վերաբերյալ: Պատասխանների վերլուծությամբ ամբողջացվեց հետևյալ պատկերը. հարցվածների 10%-ը կրոնը դիտում է որպես ազգային գաղափարների համախմբման, անկախ սոցիալական պատկանելությունից մարդկանց հոգևոր մերձեցման ու ներդաշնակման հզոր խթան, 14% հարցվածներ միանգամայն վստահ են, որ,

այնուհանդերձ, կրոնն օժտված է մարդկանց սփոփելու և բարոյապես աջակցելու ներուժով: Ի դեպ, հարցվածների 29%-ը միանշանակ կողմ են, որ կրոնը մարդկանց մեջ սերմանում է հավատ, հույս, մարդասիրություն, 25%–ը գտնում է որ կրոնն ունի ժողովրդին համախմբելու ուժ և սերնդեսերունդ փոխանցմանը, իսկ 22%-ն այն կարծիքին է, որ կրոնը մարդու հոգում սերմանում է ազնվություն ու մաքրություն:

Այսպիսով՝ ակնհայտ է ևս մեկ կռվան՝ ուսանողներին մատուցել այն դաստիարակչականը, բարոյականը, դրականը և մարդկայինը, ինչ իրենց մեջ ամփոփում են առասպելաբանությունն ու կրոնի պատմությունը՝ չնսեմացնելով, ի դեպ, գիտության դերն ու նշանակությունը: Ուսումնասիրելով կրոնի պատմությունը և բացահայտելով նրա մեջ պարունակող դաստիարակչական ու բարոյագիտական մեծ ներուժը՝ մենք դրանով իսկ օբյեկտիվ պայմաններ ենք ստեղծում ուսանողական միջավայրում սնահավատության և աղանդավորության դեմ պայքարելու:

Անձի բարոյամշակութային արժեհամակարգի ձևավորման և կայացման գործում առանցքային դեր ունեն ծնողները: Այն հարցին, թե «Ո՞վ է հանդիսանում Ձեզ համար բարոյամշակութային արժեքների կրող իդեալ»: Հարցվողների 42,3%-ի համար այդ կրող իդեալը ծնողն է, 18,2 %-ը նշում է, որ ընկերներն են, 8,9 %-ը՝ հարազատները, 9,3 %-ը՝ դասախոսները, 12,5 %-չունի նման իդեալ, իսկ 8,8%-ը հետևում է իր մտացածին իդեալներին (Տրամագիր 18.):



Տրամագիր 18. «Ո՞վ է հանդիսանում Ձեզ համար բարոյամշակութային արժեքների կրող իդեալ» հարցին տրված պատասխանների բաշխվածությունը

Մեր կողմից անցկացվել է հարցում՝ պարզելու նաև ուսանող-երիտասարդության՝ շրջապատի նկատմամբ ունեցած վերաբերմունքը:

Ուսանող-երիտասարդության շրջանում օրինավոր մարդ են համարում նրան,

ով բարի է, ազնիվ, խելացի, պատրաստ է աջակցելու այլոց, զգայուն է, կազմակերպված է, աշխատասեր է և կարգապահ: Ուսանողները դատապարտում են ամբարտավանությունը, գռեհկությունը, ստորությունը, դավաճանությունը, անազնվությունը, վախկոտությունը:

Աղյուսակ 9.

Ուսանող-երիտասարդների կողմից առանձնացված անձնային որակները

Անձնային որակ	**Տոկոս**
Բարություն	13%
Ազնվություն	18%
Ինքնատիրապետում, հաստատակամություն	9%
Այլոց աջակցելու պատրաստակամություն	11%
Զգայունակություն	4%
Կարեկցանք, ապրումակցում	7%
Կայուն դիրքորոշում, սկզբունքայնություն	9%
Աշխատասիրություն, կարգապահություն	13%
Պատասխանատվություն, կազմակերպվածություն	16%
Ընդամենը՝	100%

Ստացված տվյալները ցույց են տալիս, որ ուսանողները պատկերացնում են բարոյական, օրինավոր մարդու բավականաչափ գրավիչ նկարագիր, և այդ առումով անհանգստանալու հիմքեր չկան: Բայց արդյո՞ք ամեն ինչ այդպես բարեհաջող է, և ուսանողները կատարյալ պատկերացումներ ունեն իրենց հոգևոր ներաշխարհում, կյանքը տեսնում ու գնահատում են լավատեսական դիրքերից: Այնուհանդերձ կարելի է փաստարկել, որ ուսանող-երիտասարդների կենսական դիրքորոշումներում ընկած են կարծրատիպեր, որոնք ձևավորված են գրական ստեղծագործությունների, սիրելի կերպարների, ազգային հերոսների օրինակով և պայմանավորված են ընտանեկան դաստիարակությամբ ու ավանդույթներով:

Այն հարցին, թե «Խորհրդային կարգերի փլուզումից հետո հայ մշակութային ինչպիսի՞ արժեքների կորուստ կրեց Հայաստանը անցումային ժամանակաշրջանում»: Ստացված արդյունքները հետևյալն են.

Աղյուսակ 10.

Հայ մշակութային արժեքների կորուստը ըստ հարցումների

Հայ մշակութային արժեքների կորուստ	**Տոկոս**
Ազգային - ժողովրդական երգերի պակասը	11%
Ազգային պարերի անհետացում	7%
Օտար մշակույթների հախուռն ներթափանցում հասարակության՝ հատկապես ուսանող-երիտասարդության շրջանում	19%
Գրքի՝ որպես մշակութային բարձր արժեքի նկատմամբ անտարբերության	18%
Թատերական արժեքների ոչ ճիշտ ընկալում	13%
Մշակութային ցածր արժեքների մուտքը հասարակություն	17%
Մայրենի լեզվի նկատմամբ անտարբեր վերաբերմունքի դրսևորում	15%
Ընդամենը՝	100%

Մեր կարծիքով՝ ուսանողների կողմից արվեստի ստեղծագործությունների ընկալումը կախված է նրանց բարոյական մշակութային արժեքների ձևավորվածության մակարդակից, պահանջմունքների ձևավորվածությունից, ազատ ժամանակը տնօրինելու ունակությունից, նաև նրանից, թե ճիշտ է արդյոք բուհում կազմակերպվում բարոյական արժեքների զարգացման գործընթացը:

Մատաղ սերնդի բարոյամշակութային արժեքային կողմնորոշումների գիտակցման և արժևորման ճգնաժամը արտացոլվում է նաև միջսերնդային հարաբերությունների վրա: Ազգային, բարոյական, մշակութային արժեքները փոխանցվում են ծնողներից որդիներին, իսկ ուսանող-երիտասարդների կողմից նման արժեքներից հրաժարվելը գործնականում նշանակում է ավագ սերնդի կյանքի

ոճի և մտքի մերժում: Այստեղ հարկավոր է հաշվի առնել որոշ գործոններ:

Դրանցից առաջինը կապված է երեխաների ծնողների բարոյամշակութային արժեքային չափանիշներից և կողմնորոշումների մակարդակից: Արդյո՞ք ժամանակակից ուսանող-երիտասարդները ընդունված են ավագ սերնդի կողմից: Եթե այո, ապա ի՞նչ չափով: Ուսանող-երիտասարդները ցուցաբերու՞մ են անհանդուրժողականություն մեծերի նկատմամբ: Եթե ցուցաբերում են, ապա, ի՞նչ չափով: Ի՞նչ բնույթ է կրում ավագ և երիտասարդ սերունդների բարոյամշակութային արժեհամակարգերի փոխգործակցությունը: Նրանց միջև գոյություն ունի՞ համադրելիություն, շարունակականություն, կոնֆլիկտ կամ հակասություններ:

Ընտանիքում անհատական բարոյամշակութային արժեքների ձևավորման վրա ուղղակիորեն ազդում են ծնողները իրենց երեխաների վրա, իսկ սերունդների մակարդակով՝ երիտասարդ սերունդը այսպես, թե այնպես ընդունում է հասարակության մեջ ընդունելի ավագ սերնդի բարոյամշակութային արժեքները:

Ավելի հաճախ ճգնաժամը սրվում է, երբ անցում է կատարվում անհատական մակարդակի: Հաճախ դա ծնողների կողմից հիվանդագին է ընդունվում, քանի որ նրանք չեն կարող ապրել նոր ձևով և չափորոշիչներով:

Այն հարցին, թե «Արդյո՞ք դուք տեսնում եք Ձեր շրջանում բարոյամշակութային արժեհամակարգի սահուն անցում միջսերնդային հաղորդակցման ընթացքում»: Պատասխանողների միայն 28,0 % են դրական պատասխանել, 16,0 %-ը համարում են, որ բարոյամշակութային արժեքային կողմնորոշումների սերնդափոխություն տեղի չի ունենում, իսկ հարցվողների 56,0 % -ը դժվարացան պատասխանել: Այս ամենը վկայում է այն մասին, որ մեր հասարակությունում դեռևս առկա է միջսերնդային բարդ հարաբերություններ, որոնք հատկապես սրվում են արժեքային համակարգի փոփոխման ընթացքում:

Ներկայումս և՛ հասարակությունը, և՛ ուսանող-երիտասարդությունը գտնվում է ընտրության առջև: Նախկին պայմաններում ուսանող-երիտասարդների բարոյամշակութային արժեքային կողմնորոշումները իրացվում էին պետական նպատակաուղղված մակարդակով, այսինքն՝ աճող սերունդը պարտավոր էր յուրացնել խիստ կանոնակարգված հենքային արժեհամակարգ:

Ժամանակակից պայմաններում ավանդական, սոցիալական արժեքները կորցրել են իրենց կարևորությունն ու գրավչությունը: Առաջանում է հարց. «Ի՞նչ արժեքներ և իդեալներ է անհրաժեշտ ընդունել և յուրացնել»:

Նրանց ընտրությունը դժվարանում է շատ իրավիճակներով: Արժեքների բազմազանությունը հնարավորություն չի տալիս ուսանող-երիտասարդին ինքնուրույն, հստակ ընտրություն կատարել և վստահ լինել, որ իր ընտրած արժեքային կողմնորոշումը կայուն է հետագա սոցիալականացման գործընթացում: Այսպիսի բազմազանության մեջ գրեթե հնարավոր չի լինում ձևավորել հարաբերականորեն կայուն արժեքային համակարգ: Արդյունքում, ձևավորվում են անկայուն, մշտապես փոփոխվող արժեքավոր դիրքորոշումներով երիտասարդներ, որն էլ իր հերթին խանգարում է ուսանող-երիտասարդներին ակտիվ մասնակցել սոցիալական փոփոխություններին:

Ստեղծված իրավիճակում, դժվար է պարտադրել որոշակի արժեքային համակարգ: Դրանք պետք է ընդունվեն և իմաստավորվեն սեփական «ես»-ով և համադրվեն «մենք»-ի արժեքային համակարգի հետ:

Ինչպե՞ս ստեղծված իրավիճակում համատեղել բազմակարծիք հասարակությունը և դաստիարակչական հարաբերական ամբողջ ազդեցությունը երիտասարդ սերնդի վրա: Այս հակասությունը լուծելու յուրովի փորձն է կենսունակ սերունդների դաստիրակության գաղափարը: Դա բխում է սոցիալական, բարոյամշակութային արժեքային կողմնորոշումներից, որին հետևում են հասարակության բոլոր անդամները:

Հետազոտության արդյունքները, ուսանողների հետ անհատական զրույցները ցույց տվեցին, որ ուսանող-երիտասարդների գիտակցության մեջ գերակշռում են բարեկեցիկ կյանքի այնպիսի ցուցանիշներ, որոնք բնորոշում են ապագայի կառուցման ուղիները

Մի փոքր այլ կերպ է իրականացվում բարոյամշակութային արժեհամակարգի առաջնային ցուցանիշների ընտրությունը:

Այն հարցին, թե «Ո՞րն է Ձեր կյանքի գերնպատակը», պատասխանները բաժանվել են հետևյալ կերպ.

Աղյուսակ 11.

«Ո՞րն է Ձեր կյանքի գերնպատակը» հարցի պատասխանները

Պատասխաններ	**%**
Ընտանեկան երջանկություն	58,5 %
Որակյալ կրթություն	35,6 %
Կարիերա	37,2 %
Հարստություն	28,7 %
Պիտանի մարդ լինել հասարակությանը	24,2 %
Սեփական ազատությունը	26,8 %
Անպատժելիությունը	25,8%
Գտնել կյանքի իմաստը	24,8 %
Ապրումակցումը և դյուրահաղորդակցությունը	23,2 %
Հնարավորություն ունենալ առավելագույնս դրսևորել կարողություններն իրական կյանքում	22,3 %
Փառքը	14,1 %
Օգնել սոցիալապես չպաշտպանվածներին	13,0 %
Կարողանալ կառավարել մյուսներին	8,2 %
Հոգեկան արժեքների գերակայություն	5,2 %

Աղյուսակում ստացված տվյալները ցույց են տալիս, որ ուսանող-երիտասարդների գիտակցության մեջ զգալի գերակշռում է կարիերայի ցանկությունը, իշխանությունն ու փառքը, որին հասնելու համար պետք է գերակայեն նյութական արժեքները, որն էլ իր հերթին հակակշռում է հոգեկան արժեքների գերակայությանը: Եթե կարիերայի հասնելու ձգտումը կյանքի նպատակ է դարձրել հարցվողների 37,2 %-ը, ապա կառավարելու ցանկություն արտահայտել է հարցվողների 8,2%-ը, իսկ փառքը բնորոշ է պատասխանողների 14,1 %- ին: Վերջին երկու ցանկությունները գրավում են ամենացածր դիրքերը ցանկությունների արժեքների սանդղակում: Բոլորին իշխելն ու հանգիստ կյանք վայելելը ուսանող-

երիտասարդների մոտ նույնպես առաջնային չէ: Դրա հետ մեկտեղ ցանկությունների աղյուսակի բարձր տեղ են զբաղեցրել ընտանեկան երջանկությունը, որակյալ կրթություն ստանալը, որակավորված մասնագետ լինելը: Նյութական բարեկեցությունը նույնպես ուսանող-երիտասարդների ինքնահաստատման կարևոր շարժառիթ է և նախապայման, որն իրենց կարծիքով հնարավորություն է տալիս ունենալ սեփական ազատություն, լինել իր կյանքի տերը և առավելագույնս դրսևորել կարողություններն իրական կյանքում:

Ընդհանուր առմամբ սոցիոլոգիական հարցման տվյալները ցույց են տվել՝ անձնական կյանքի ոլորտը պատասխանողների կողմից ընկալվում է շատ ավելի հարմարավետ, բարեկից և կայուն, քան հասարակական տարածքի գոյությունը:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ նյութական և հոգևոր արժեքները որոշակի հարաբերակցության մեջ են գտնվում ներկայում:

Բարոյամշակութային արժեքային կողմնորոշումների ենթադասության մեջ հոգևոր արժեքները փոքր-ինչ զիջում են նյութական արժեքներին: Հարցվողների 57,6%-ը որպես բարձրագույն արժեք գերագնահատում են նյութական արժեքները, իսկ 27,9%-ը առաջնայնություն է տալիս բարոյամշակութային արժեքներին, իսկ մնացած 14,5%-ը գտնում է, որ արժեքները պետք է ընդունել ըստ իրավիճակի՝ յուրաքանչյուր դեպքում ընտրելով համապատասխան իրավիճակային որոշում: Նման որոշումները քննադատելի չեն, քանի որ դրանք պարտադրվում են շուկայական հարաբերություններով:

Անհատական զրույցները փաստում են, որ շուկայական տնտեսության անցումը ավելի շատ է նսեմացնում հասարակության հոգևոր արժեքները: Հարցվողների 28,2%-ը մտահոգված է, թե ինչպես կարելի է դիմակայել հոգևոր արժեքների կորստին, որը փոքր ազգերի համար նաև գոյապահպանական և անվտանգության հիմք է:

Հոգևոր արժեքների պահպանման համար հարցվողների կողմից առաջարկվում է պետական քաղաքականության փոփոխություն, գործի և խոսքի միասնականություն, հոգևոր, բարոյական, հայրենասիրական, կրոնական

դաստիարակության արդյունավետ, նպատակային ուղղորդում և սոցիալական տարբեր ինստիտուտների փոխադարձ վերահսկողություն ու համագործակցություն արժեքային կողմնորոշումների հարցում: Որքան էլ երբեմն քննադատելի է դարձվում հայրենասիրական դաստիարակության պակասը ուսանող-երիտասարդության շրջանում, սակայն Արցախյան պատերազմը և խաղաղ պայմաններում հայ զինվորի պարտքի գիտակցումը և նվիրումը փաստում են, որ ուսանողների մոտ առկա է հայրենիքի հանդեպ մեծ սերը, հարգանքը:

Մեր կողմից իրականացված հետազոտությունը ցույց է տալիս, որի կյանքում հաջողակ լինելը նույնպես դիտարկվում է արժեք և որքան էլ փոխվեն հաջողության հասնելու միջոցներն ու մեխանիզմները, միևնույն է, այն մնում է անձի սոցիալականացման ընթացքում անձի ձգտումների առանցքում:

Յուրաքանչյուրը կյանքում հաջողակ լինելու իր չափանիշներն է մշակում, որտեղ նյութական և հոգևոր արժեքները ունեն իրենց համապատասխան ենթադասումները: Նրանցում՝ հավատարիմ ընկերների առկայությունը, հոգևոր հավասարակշռությունը, բարձր աշխատավարձը, անհրաժեշտ գործնական կապերը, հետաքրքիր աշխատանքը, սեփական բիզնեսի առկայությունը, հանգիստ և ապահով կյանքը, անվտանգության համոզվածությունը, շրջապատի ընդունումը, փառքը, սեռական կյանքի բավարարվածությունը, սիրո, իշխանության, սեփական աշխատանքի վարպետ լինելը, անկախությունը, ազատությունը ստանում են տարբեր դասակարգում, դաս-դասում:

Ուսանող-երիտասարդերի մեծամասնության համար կյանքում հաջողության գրավականը առաջին հերթին դիտարկվում է նյութական բարօրությունը, բարձր սոցիալական դիրքը, իսկ հասարակական արժեքների պահպանումը այնքան էլ չի գնահատվում:

Կյանքի նկատմամբ ուսանողի անձի պրագմատիկ դիրքորոշումը չպետք է միանշանակ դիտարկվի: Մի դեպքում ուսանողի գործունյա վարքը հաճախ դրսևորվում է եսակենտրոնական ձգտումներով, որը բարոյական, հոգևոր տեսակետից բացասական երևույթ է, մյուս կողմից այդ վարքը դիտարկվում է որպես ձգտում՝ կյանքում հասնելու սոցիալական բարձր դիրքերի, նյութական

բարեկեցության, հոգևոր մշակութային արժեքների ձեռքբերման:

Այն հարցմանը, թե «Ի՞նչ արժեքներ կուզենային ձեռք բերել միջաշխատանքային գործունեության անցնելը», ստացել ենք հետևյալ պատասխանները, որոնք դասավորված են ըստ առաջնայնության.

- Ինքնուրույնություն
- Շարժունակություն
- Նյութական բավարարվածություն
- Ազնվություն
- Ինքնավստահություն
- Որակյալ կրթություն
- Առողջություն
- Սոցիալական ակտիվություն
- Պահանջարկված մասնագիտացում
- Գործնական ճկունություն
- Հարմարում սոցիալական միջավայրի փոփոխություններին
- Անհատական ոճ, ինքնատիպություն
- Ընկերասիրություն
- Հայրենասիրություն
- Անկախություն
- Զսպվածություն
- Լավատեսություն
- Հանդուրժողականություն

Ամփոփելով ստացված արդյունքները՝ կարելի է պատկերացում կազմել հայ ուսանողի, ապագա ուսանող-երիտասարդի կողմնորոշումների մասին: Նա բավականին ակտիվ է, զգալի չափով պատրաստ է կյանքի փոփոխություններին, սոցիալապես և մասնագիտորեն շարժունակ է, փորձում է ինքնահաստատվել և ինքնաիրացվել: Առկա է լավատեսությունը, գործնական ճկունությունը և պատրաստականությունը համադրելու համամարդկային բարոյական արժեքները: Նա անտարբեր չէ ուրիշների նկատմամբ և որոշակի չափով պրագմատիկ է:

Միևնույն ժամանակ կարևոր է ընդգծել, որ այնպես հատկություններ, ինչպես ագրեսիվությունն է, չարությունն ու անտարբերությունը՝ գնահատվում է բացասական,

Ամփոփելով՝ նշենք, բարոյամշակութային այն կողմնորոշումները, որոնք բնորոշ են հայ մարդու մտածելակերպին, ուսանող-երիտասարդները չեն մերժում, այլ դրական են ընդունում: Միևնույն ժամանակ, նրանք փորձում են այդ արժեքները ժամանակի պահանջներին համադրել համամարդկային արժեքների հետ, սակայն ժամանակակից ուսանող-երիտասարդների արժեհամակարգում կարևորվում է նաև անհատականությանը և պրագմատիզմը, որոնք բնորոշ են արևմտյան մտածելակերպին և շուկայական տնտեսություն ունեցող երկրին:

Այսպիսով, չնայած այն բանին, որ արժեքների գիտակցման պատկերը բավականին փոփոխուն և հակասական է, սոցիոլոգիական հարցումներն ու զրույցների արդյունքների վերլուծությունը թույլ տվեց բացահայտելու մի շարք խնդիրներ՝ ուսանող-երիտասարդների կյանքի պայմանների, բարոյամշակութային արժեհամակարգի, կարիքների, շահերի և շարժառիթների շեշտադրությամբ: Այդ խնդիրների մեջ հատուկ առանձնանում են անհրաժեշտ նյութական բարեկեցության պահպանման դժվարությունները, բարոյամշակութային արժեհամակարգի անկումը, սոցիալական շերտավորումը, հանցագործության աճը, հիվանդությունների երիտասարդացումը և քանակական աճը, անբարենպաստ էկոլոգիական միջավայրը, ազգային մշակույթի գնահատականի անկումը, որը ամբողջովին փոխում է ապագայի հանդեպ ուսանող-երիտասարդների վաղվա օրվա նկատմամբ անվստահությունը:

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ պետական մակարդակով անհրաժեշտ է պարբերաբար ուսումնասիրել և վերլուծել ուսանող-երիտասարդների բարոյամշակութային արժեքային կողմնորոշումների փոփոխման ընթացքը և մշակել համապատասխան քաղաքականություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական, աքսեոլոգիական գրականության վերլուծության հիման վրա սահմանվել է, որ «բարոյամշակութային արժեք»-ը բազմիմաստ և բազմամակարդակ հասկացություն է, որը բնութագրում է իրերի, երևույթների բարոյական և մշակութային կողմնորոշիչները և գոյություն ունի առանձին անձերի ու սոցիալական խմբերի հարաբերություններում:

2. Նորովի մոտեցումն ուսանողների բարոյամշակութային արժեքների ձևավորման հիմնախնդրին ենթադրում է ոչ թե տեղայնացված աշխատանք առանձին սոցիալական ինստիտուտներում, այլ պետական քաղաքականության գերակա, անվտանգության խնդիր, որի ժամանակ պետք է հաշվառվեն բարոյամշակությաին համակարգի առկա վիճակը, ռիսկային, իրավիճակային փոփոխությունները և ակնկալվող վերջնարդյունքները:

3. Ժամանակակից ուսանող երիտասարդության բարոյամշակութային արժեքների ձևավորումը գլոբալացման պայմաններում իրականանում է երեք հիմնական արժեքային մոդելներում՝ ասիմիլիացիոն, բազմամշակույթ և ներմշակութային, որտեղ ազգային և համամարդկային արժեքները գտնվում են որոշակի հարաբերակցության մեջ:

4. Ուսանողի ինովացիոն նոր տիպի ձևավորման մեր կողմից մշակված մանկավարժական մոդելը ներառում է այդ գործընթացի նպատակը, բովանդակային բաղադրամասն իր բաղադրիներով, սովորողների բարոյամշակութային կոմպետենտության ձևավորման գործընթացի կազմակերպումը, գործառույթները և կրթական վերջնարդյունքները:

5. Ուսանողների բարոյամշակութային արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացն արդյունավետ է իրականանում տեղեկատվական-հաղորդակցական, ինովացիոն, բարեփոխվող կրթական նոր միջավայրում դասախոս-ուսանող սուբյեկտ-սուբյեկտային համագործակցության արդյունքում՝ ուսումնական և արտաուսումնական գործունեության ընթացքում տարբեր աշխատանքային ձևերի զուգակցմամբ, որտեղ ուսանողն արժեքների ակտիվ կրող,

յուրացնող և գնահատող սուբյեկտն է:

6. Ուսանողների բարոյամշակութային արժեքային կողմնորոշումների ձևավորումը պայմանավորված է ոչ միայն բուհում դասավանդողների բարոյական, հոգևոր, մշակութային և մասնագիտական կոմպետենտությամբ, մշակութային բարձր պատրաստվածությամբ, հաղորդակցման որակներով, կազմակերպական, խորհրդատվական, վերահսկողական և այլ գործառույթների տիրապետմամբ, այլև միջսուբյեկտային փոխհարաբերություններով, որտեղ ներդաշնակվում են մասնագիտական,ազգային և համամարդկային արժեքները:

7. Երիտասարդ սերնդի մեծամասնության նորովի բարոյամշակութային կողմնորոշման հիմնական նպատակը գլոբալացման պայմաններում 21-րդ դարի մարտահրավերներին, նոր սոցիալ-տնտեսական պայմաններին հարմարվելու ռազմավարությունն է: Երիտասարդական միջավայրի բարոյամշակութային արժեքային կողմնորոշումների ձևավորման կարևոր նախապայմանը պետական արդյունավետ գաղափարախոսությունն ու քաղաքականությունն է:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բարոյագիտական բառարան (խմբ. Ի.Ս.Կոնի), Երևան, «Հայաստան» 1985, 456 էջ:

2. Թորգոմյան Լ.Վ. Մանկավարժական արժեբանության հիմունքներ: Ուս. ձեռնարկ / Լ.Վ.Թորգոմյան ; Խմբ.՝ Գ.Հ.Հակոբյան. – Եր.: Ան-Ջոն հրատ., 2011. – 160 էջ:

3. Հայ մանկավարժական մամուլ / Ա.Վ.Աբրահամյան, Ն.Կ. Հարությունյան, Ս.Շ.Մկրտչյան.-202 էջ

4. Հարությունյան Ն.Կ., Աբրահամյան , Ա. Վ., Մկրտչյան Ս. Շ., Հայ մանկավարժական հանրագիտարան, Հայ մանկավարժական մամուլ.-Երևան, 2010թ.

5. Ղուկասյան Ա.Ս., Ասատրյան Լ.Թ., Կարապետյան Ա.Ս., Մանկավարժական բուհի կառավարման տեխնոլոգիան և զարգացման միտումները.-Երևան, Մանկավարժ հրատ., 2005,340 էջ:

6. Մանուկյան Ա.Մ., Մանուկյան Մ.Մ., Մանկավարժական տեխնիկա և տեխնոլոգիա.-Երևան, 2000,151 էջ:

7. Նալչաջյան Ա.Ա., Մկրտչյան Ս., Էթնիկական մանկավարժություն.-Երևան, «Զանգակ-97» հր., 2003, 312 էջ:

8. Փիլիսոփայական բառարան.-Երևան, «Հայաստան», 1975, 467 էջ:

9. Азбука нравственного взросления: методический материал / В.И. Петрова [и др.]. - СПб.: Питер, 2007. - 304 с.

10. Ананьев Б.Г. Человек как предмет познания.-СПБ: Питер, 2001.-288с.

11. Анисимов С. Ф. Духовные ценности: производство и потребление. — М.: Мысль, 1988. — 255 с.

12. Арнольдов А.И. Введение в культурологию, Новая расширенная редакция. Учебное пособие. - М: Народная Академия культуры и общечеловеческих ценностей.

1993. - 352 с.

13. Архангельский Л.М. Индивидуальное сознания и моральные ценности Вопросы филасофии, 1986. - N7.-с.67-76

14. Асташова Н.А., Учитель: проблема выбора и формирование ценностей. – М.: Московский психолого-социальный институт; воронеж: Издательство НПО «МОДЭК», 2000. – С. 83.

15. Багаутдинова Н.Г. Высшая школа сегодня и завтра: пути преодоления кризиса. – М.: Экономика, 2003. – 426 с.

16. Батурина Г.И. Нравственное воспитание школьников на народных традициях: методический материал / Г.И. Батурина, К. Л. Лисова, Г. Ф. Суворова. - М.: Народное образование, 2002. - 112 с., Ęϱ 77:

17. Белинский В.Г. Избранные педагогические сочинения, М-Л Акад. Наук РСФСР /Под ред. дейст. чл. АПН Е.Н. Медынского/ М., 1948. - 280с.

18. Беляева А.П. Методологияи теория профессиональной педагогики.-СПБ.: Ин-т профтех образования РАО, 1999.- 480с.

19. Бердяев Н.А., Судьба России, М., 1990. - 327с.

20. Бодалев А.А. Личность и общение. Международная педагогическая академия, 1995 г. - 328 с.

21. Бондаревская Е.В. Воспитание как возрождение гражданина, человека культуры и нравственности.- Ростов-на-Дону: Изд-во РПУ, 1995.-32с.

22. Брушлинский А.В. Проблемы психологии субъекта.-Москва. Институт психологии РАН. 1994 г., 109 с.

23. Бубнова С.С. Ценностные ориентации личности как многомерная нелинейная система .- М., изд. “ИП РАН”, 1998.-24 с.

24. Вдовюк В.И., Фильков С.М. Основы педагогики высшей школы в структурно-логических схемах: Учебное пособие. – М.: МГИМО(У) МИД России, 2004. – 67 с.

25. Волков Г. Н. Этнопедагогика. М.: Изд. Центр «Академия», 1999.-168с.

26. Выготский Л.С. Сборник сочинения Т.4. - М., 1983.– С. 385

27. Газалиев А.М. Значение профессиональной мобильности в процессе становления специалиста технической направленности // Высшее образование сегодня. – 2011. - № 10. – С. 6-10.

28. Газман О.С. Самоопределение. Тезаурус для учителей и школьных педагогов.-М.: Наука, 1995.-174с.

29. Гармаев А.Ц. Этапы нравственного становления ребенка.-М.; Педагогика,1991.-87с.

30. Головаха Е. И. Жизненная перспектива и ценностные ориентации личности // Психология личности в трудах отечественных психологов. - СПб.: Питер, 2000. - С.256-269.

31. Гринин Л. Е. Истоки глобализации: мир-системный анализ// Век глобализации. - 2011. № 1. - С. 80-94.

32. Громкова М.Т. Педагогика высшей школы: учебное пособие. Юнити-Дана, 2012г. - 446 с.

33. Дробницкий О.Г. Проблемы нравственности.- Наука, 1977.-187с.

34. Ильин И.А. О грядущей Росии. М., 1993.-78с.

35. История философии : Учебник для высш. учеб. заведений / Отв. ред. В. П. Кохановский, В. П. Яковлев. — Ростов-на-Дону : Феникс, 2001. — 574 с.

36. Каган М. С. Философская теория ценностей.- “Петрополис”, 1997.-205с

37. Кант И. О педагогике // Трактаты и письма. - М.,1980. - 445-504с.

38. Кармин А.С. Основы культурологии (морфология культуры). Санкт-Петербург, Изд-во "Лань", 1997. - 512 с.

39. Карпова Ю. А. Инновации, интеллект, образование. – М.: Призма, 1998. – с. 93-94

40. Коган Л.Н. Цель и смысл жизни человека. -М.: 1984. - 252с.

41. Коджаспирова Г. М. История образования и педагогической мысли: таблицы, схемы, опорные конспекты.- М., 2003.- С. 88.

42. Коменский Ян Амос: Учитель учителей («Материнская школа», «Великая дидактика» и др. произв. с сокращ.). М.: Карапуз, 2009, 288 с.

43. Конфуций. Суждения и Беседы: Азбука, Азбука-Аттикус.- 2011, 124 стр.

44. Краткая философская энциклопедия. - М.: Изд. группа «Прогресс».- «Энциклопедия»,-1994. - 576с.

45. Крылова Н.Б. Формирование культуры будущего специалиста. - М.: Высш.шк., 1990.-142с.

46. Крылова Н.Б. Эстетический потенциал культуры. - М.: Прометей, 1990. - 146с.

47. Кузьмина Н.В. Профессионализм личности преподавателя имастера производственного обучения. - М,: Высш. шк., 1990. - 119 с.

48. Кулешова Л.Н. Нравственное воспитание личности как предмет психологического исследования // Развитие и формирование личности в современных условиях: Учебное пособие / Кулешова Л.Н. и др. М., 2009. С. 95–115.

49. Леонтьев Д.А. Жизненный мир человека и проблема потребностей Психологический журнал.-1999.-Т.13. 107-120 с.

50. Леонтьев Д. А. Ценность как междисциплинарное понятие: опыт многомерной реконструкции // Современный социо-анализ: сборник работ авторов, получивших гранты Московского отделения Российского научного фонда и Фонда Форда. VI вып. М., 1996, с. 5-23.

51. Лихачев А.Е. Воспитание и духовность (Заметки православного педагога) // Педагогика 2001.-N3.-с. 33-36

52. Лосский Н.О. Свобода воли. - М.: Прогресс.-1991.-285с.

53. Мардоян Р. А. Современные концептуальные основы педагогической аксиологии, дисс. На соискание доктора пед. наук, Ереван, 2012 г., 390 стр.

54. Морова, Н.С., Шамсутдинов И.Г. Содержание и особенности социально-педагогической работы со студентами в России и за рубежом: учебно-методическое пособие // Н.С. Морова, И.Г. Шамсутдинов. - Казань: Изд-во "Печать-Сервис-XXI век", 2011. - 72 с.

55. Мудрик А. В . Социальная педагогика : учебник для студ . высш. учеб . заведений / А. В . Мудрик. - 6-е изд., перераб . и доп . - М. Издательский центр «Академия», 2007 . - 224 с .

56. Никандров Н.Д. Духовные ценности и воспитание человека // Педагогика, 1998, N4, -с. 3-9.

57. Ницще Ф. Волья к власти: опыт переоценки всех ценностей.-М.: Наука, 1994.-351с.

58. Педагогика: учеб. пособие / под ред. П. И. Пидкасистого. — 2-е изд., П24 испр. и доп. — М. : Издательство Юрайт ; ИД Юрайт, 2011. - 502 с

59. Песталоцци И.Г. Избранные педагогические произведения: В 3-х т. / Под ред. М.Ф. Шабаевой. Т.2. - М.: Изд-во АПН РСФСР, 1963. - 563 с.

60. Постиндустриальный мир и процессы глобализации. //Мировая экономика и международные отношения. - 2008. - №3. - С. 93

61. Рерих Н.К. Зажигайте сердца. О культуре и искусстве. Вступ.ст., предисл. к главам и примеч. А.Д.Алехина. 3-е изд;.перарб. М., Мол.гвардия, 1990, - 190 с.

62. Розанов В.В. Религия. Философия. Культура. -М.: Республика, 1992.-397с.

63. Розов Н. С. Ценности в проблемном мире: философские основания и социальные приложения конструктивной аксиологии. Новосибирск: Изд-во Новосибирского ун-та. — 1998. — 292 с.

64. Рокич М. Природа человеческих ценностей. М.; Нью-Йорк, 1973. - 276 с

65. Рубинштейн С. Л. Основы общей психологии: В 2 т. Т. I.—М.: Педагогика, 1989. - 488 с.

66. Рындина Ю. В. Педагогические условия формирования инновационной

педагогической деятельности студентов // Молодой ученый. — 2013. — №9. — С. 394-397.

67. Сластенин В.А., Чижакова Г.И. Введение в педагогическую аксиологию, Учебное пособие для студентов педагогических вузов. - М.: Академия, 2003. - 192 с.

68. Сластенин В.А., Чижакова, Г.И. Введение в педагогическую аксеология: М.: Академик,-2003, 185с.

69. Смолянинова, О. Г. Организация учебного процесса бакалавров/магистров педагогики в модульной кредитно-рейтинговой системе обучения / О. Г. Смолянинова, Е. В. Достовалова, О. А. Савельева. - Красноярск: Сибирский федеральный ун-т, 2009. - 294 с.

70. Социокультурные ценности и адаптационные механизмы их использования в системе гуманитарной подготовки в СПШ специалистов нового поколения / Рос. акад. образования. Ин-т сред. проф. образования. - Казань : ИСПО РАО, 1999. - 103 с.

71. Сухомлинский, В. А. Избранные педагогические сочинения : в 3 т.:Т. 1 / В.А. Сухомлинский. - М. : Педагогика, 1979. - 558 с.

72. Теория культуры: Учебное пособие. Под ред. С. Н. Иконниковой, В. П. Большакова, — СПб.: Питер, 2008. — 592 с

73. Тугаринов В. П. Избранные философские труды, Л.: Издательство Ленинградского университета. 1988.—344 с.

74. Ушинский К. Д. О необходимости сделать русские школы русскими // Педагогические сочинения: В 6 т. М., 1988. Т. 2. С. 362–363

75. Флоренская Т.А. Диалог в практической психологии: наука о ду- ше. М.: Владос, 2001. - 208 с.

76. Фромм Э. Психоанализ и этика. -М.: Республика, 1993.-415с.

77. Яковец Ю.В. Глобализация и взаимодействие цивилизаций; Междунар. ин-т П. Сорокина-Н. Кондратьева. - 2-е изд., перераб. и доп. - М.: Экономика, 2003. - 411

с.

78. Якушева С.Д. Основы педагогического мастерства и профессионального саморазвития: Учебное пособие / С.Д. Якушева. - М.: Форум: НИЦ ИНФРА-М, 2014. - 416 с

79. Янавичус С. Соотношение экологических и нравственных ценностей и их влияние на экологическую культуру // Проблемы формирования современной экологической культуры. –Вильнюс, 1987.- 62-74с

80. Янг К.Г. О психологии восточнчых религий и философии.-М.: Медиум, 1994.-255с.

81. http://cis-legislation.com/document.fwx?rgn=3919

82. http://parliament.am/law_docs/190711HO246havelvats.pdf

83. http://whc.unesco.org/en/convention/

84. http://whc.unesco.org/en/conventiontext/

85. http://whc.unesco.org/en/criteria/

86. http://www.armstat.am/am/?nid=126&id=08010&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC

87. http://www.armstat.am/am/?nid=126&thid=soc&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC

88. http://www.bsecorganization.org/COMOFA/Reports/CMFA%20Report%20-%20%20RDR%20Moscow%20website.pdf

89. http://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/018

90. http://www.coe.int/en/web/landscape/home

91. http://www.edu.am/DownloadFile/3933arm-EDSP2011-15.pdf

92. http://www.edu.am/index.php?id=-1533&topMenu=17&menu1=-1&menu2=17&arch=0

93. http://www.iccrom.org/

94. http://www.mindiaspora.am/am/Projects_2015

95. http://www.osf.am/wp-content/uploads/2013/10/M-Gabrielyan-Policy-Brief.pdf

96. http://www.parliament.am/parliament.php?id=constitution

97. http://www.unesco.org/new/en/culture/themes/illicit-trafficking-of-cultural-property/1970-convention/

98. http://www.unidroit.org/instruments/cultural-property/1995-convention

99. https://cyberleninka.ru/article/n/rol-smi-v-sotsializatsii-molodezhi-v-sovremennnom-obschestve

100. https://www.educationscotland.gov.uk/Images/rme_principles_practice_tcm4-540203.pdf

101. https://www.wmf.org/

102. mincult.am/img/pdf/Konv-Haaga-54.doc

Հավելված

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՐՈՅԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ

1. Բարոյամշակութային արժեքների գիտակցման գործընթացում առաջնային եք համարում

    1. բարոյական գիտակցությունը
    2. բարոյական վարքը
    3. բարոյական վարվելակերպի մշակույթը
    4. բարոյական իդեալը
    5. բարոյական զգացմունքները
    6. բարոյական համոզմունքները
    7. բարոյական պահանջմունքներն ու դրդապատճառները:

2. Դասավանդողի ո՞ր հատկանիշներն են նպաստում Ձեր բարոյամշակութային արժեքների ձևավորմանը:

- Իմացական կարողությունները
- Հաղորդակցման մշակույթը
- Անձնային որակները
- Խոսքային արժեքները

3. Ինչպե՞ս եք գնահատում Ձեր ֆինանսական կայունությունը՝ սոցիալական արժեքների տեսակետից:

- Կայուն ֆինանսական վիճակ
- Մասամբ կայուն
- Անկայուն

4. Որքանո՞վ եք Դուք պատրաստ Ձեր ֆինանսական միջոցները ծախսել մշակութային տարբեր միջոցառումներին մասնակցելու համար:

- պատրաստ է եկամտից մինչև 5 % -ը ծախսել
- պատրաստ է եկամտից մինչև 7 % -ը ծախսել
- պատրաստ է եկամտից մինչև 10 % -ը ծախսել
- պատրաստ չէ ֆինանսական միջոցներ տրամադրել

5. Ո՞րն է Ձեր եկամտի հիմնական աղբյուրը:

- հիմնական աշխատավարձն է
- հիմնական աշխատավարձը չէ
- «պատահական եկամուտն» է

6. Ըստ Ձեզ՝ նշվածներից ո՞ր հիմնական խնդիրներն են մտահոգում ժամանակակից ուսանող-երիտասարդներին:

- սոցիալական ոլորտի վիճակը
- հանցագործությունների աճ
- հասարակության սոցիալական շերտավորում
- ազգային մշակույթի ոչնչացում
- էկոլոգիական խնդիրները
- խոճապի են մատնում գների բարձրացումը:

7. Կուզենա՞յք արդյոք շարունակել կրթությունը:

- այո
- ոչ
- դժվարանում եմ պատասխանել

8. Ձեր կարծիքով, կենսական արժեքների ապահովման համար ո՞րն է կյանքի բարեկեցության ցուցանիշը:

- նյութական բարեկեցությունը
- առողջությունը
- կրթություն ստանալու հնարավորությունը
- որևէ որակավորում ստանալը
- կարիերան

9. Արժեքային համակարգի կայացման տեսակետից դուք Ձեզ համարո՞ւմ եք
   - կայացած և հաստատված՝ որպես անհատականություն
   - որոշ չափով կայացած և հաստատված որպես անհատականություն
   - ընդհանրապես չկայացած
   - դժվարանում են պատասխանել

10. Ձեր կարծիքով, բարոյամշակութային արժեքների յուրացման արդյունքում իրատե՞ս եք կյանքի նկատմամբ:
   - զգալի չափով է իրատես
   - որոշ չափով է իրատես
   - իրատես չէ բացարձակապես
   - դժվարանում է պատասխանել

11. Ինչպիսի՞ դիրքորոշումներ ունեք կյանքի, բարոյամշակութային արժեքների նկատմամբ:
   - լավատես է
   - լավատես է մասամբ, միայն որոշակի հարցերում ու իրավիճակներում
   - վատատես է
   - դժվարանում է պատասխանել

12. Ինչ եք կարծում, արդյո՞ք ՀՀ մշակույթային կյանքը, բարոյամշակութային արժեհամակարգը ճգնաժամի մեջ է:
   - ճգնաժամի մեջ է
   - ճգնաժամ չի նկատվում
   - դժվարանում է պատասխանել

13. Բավարավա՞ծ եք արդյո՞ք պետության կողմից իրականացվող բարոյամշակութային բարոյամշակութային արժեքների պահպանման ուղղված քաղաքականությամբ:
   - բավարարված է
   - բավարարավա՞ծ չէ
   - չի կողմնորոշվել

14. Ձեր կարծիքով, ի՞նչ կարելի է անել ձեր գյուղում, շրջանում, քաղաքում ավանդական, հայկական բարոյամշակութային արժեհամակարգի պահպանման համար:

- Ստեղծել ազգային մշակույթի թանգարաններ, ցուցահանդեսներ, ակումբներ, դպրոցներ
- Ցանկացած ձևով պահպանել մշակութային ավանդությունները
- Ցուցաբերել նյութական օգնություն
- Ավելի շատ ուշադրություն դարձնել ավանդական ծեսերին, մշակութային ավանդույթներին
- Աջակցել մայրենի լեզվի տարածմանը

15. Ինչպե՞ս եք Դուք կազմակերպում Ձեր հանգիստը:
    - նախընտրում է ազատ ժամանակ հանդիպել ընկերների հետ
    - դիտում է հեռուստացույց կամ նավարկում համացանցում
    - լսում է երաժշտություն կան դիտում ֆիլմեր
    - զբաղվում են սպորտով
    - այլ զբաղմունք
16. Ինչպիսի՞ երաժշտություն եք նախընտրում լսել:
    - էստրադային երգեր
    - ռոք
    - քաղաքային երաժշտություն
    - զինվորական և ժողովրդական երգեր
    - օպերային երաժշտություն
    - հին ռոմանսներ
17. Ո՞ր ժանրերի գրքեր եք գերադասում կարդալ:
    - պոեզիա
    - կրոնական
    - դասական
    - ֆանտաստիկա

- տեղեկատվական
- պատմական
- արկածային
- դեդեկտիվ

18. Դաստիարակության համակարգում ո՞ր բաղադրիչն եք առավել կարևորում Ձեր կյանքում:

- բարոյական դաստիարակությունը
- ֆիզիկական դաստիարակությունը
- կրոնական դաստիարակությունը
- աշխատանքային դաստիարակությունը
- հայրենասիրական դաստիարակությունը
- գեղագիտական դաստիարակությունը
- իրավական դաստիարակությունը
- սեռային (սեռական) դաստիարակությունը
- էկոլոգիական դաստիարակությունը

19. Ո՞վ է հանդիսանում Ձեզ համար բարոյամշակութային արժեքների կրող իդեալ:

- ծնող
- ընկերներ
- հարազատներ
- դասախոսներ
- չունի իդեալ
- մտացածին իդեալներ

20. Ինչպիսի անձնային որակներ եք առանձնացնում Ձեր տեսակետից օրինավոր մարդու նկարագրում:

- Բարություն
- Ազնվություն

- Ինքնատիրապետում, հաստատակամություն
- Այլոց աջակցելու պատրաստակամություն
- Զգայունակություն
- Կարեկցանք, ապրումակցում
- Կայուն դիրքորոշում, սկզբունքայնություն
- Աշխատասիրություն, կարգապահություն
- Պատասխանատվություն, կազմակերպվածություն

21. Խորհրդային կարգերի փլուզումից հետո հայ մշակութային ինչպիսի՞ արժեքների կորուստ կրեց Հայաստանը անցումային ժամանակաշրջանում:

- Ազգային - ժողովրդական երգերի պակասը
- Ազգային պարերի անհետացում
- Օտար մշակույթների հախուռն ներթափանցում հասարակության՝ հատկապես ուսանող-երիտասարդության շրջանում
- Գրքի՝ որպես մշակութային բարձր արժեքի նկատմամբ անտարբերության
- Թատերական արժեքների ոչ ճիշտ ընկալում
- Մշակութային ցածր արժեքների մուտքը հասարակություն
- Մայրենի լեզվի նկատմամբ անտարբեր վերաբերմունքի դրսևորում

22. Արդյո՞ք դուք տեսնում եք Ձեր շրջանում բարոյամշակութային արժեհամակարգի սահուն անցում միջսերնդային հաղորդակցման ընթացքում:

- համարում է, որ տեղի է ունենում բարոյամշակութային արժեքային կողմնորոշումների սերնդափոխություն
- համարում է, որ բարոյամշակութային արժեքային կողմնորոշումների սերնդափոխություն տեղի չի ունենում
- դժվարանում է պատասխանել

23. Ո՞րն է Ձեր կյանքի գերնպատակը:

- Ընտանեկան երջանկություն
- Որակյալ կրթություն

- Կարիերա
- Հարստություն
- Պիտանի մարդ լինել հասարակությանը
- Սեփական ազատությունը
- Անպատժելիությունը
- Գտնել կյանքի իմաստը
- Ապրումակցումը և դյուրահաղորդակցությունը
- Հնարավորություն ունենալ առավելագույնս դրսևորել կարողություններն իրական կյանքում
- Փառքը
- Օգնել սոցիալապես չպաշտպանվածներին
- Կարողանալ կառավարել մյուսներին
- Հոգեկան արժեքների գերակայություն

24. Բարոյամշակութային արժեքային կողմնորոշումների ենթադասության մեջ որո՞նց եք տալիս առաջնայնություն:

- նյութական արժեքներ
- բարոյամշակութային արժեքներ
- ըստ իրավիճակի՝ փոփոխվող արժեքներ
- հոգևոր

25. Ըստ առաջնահերթության դասակարգեք՝ ի՞նչ արժեքներ կուզենային ձեռք բերել միջաշխատանքային գործունեության անցնելը:

- Հարմարում սոցիալական միջավայրի փոփոխություններին
- Շարժունակության
- Նյութական բավարարվածություն
- Ազնվություն
- Պահանջարկված մասնագիտացում
- Որակյալ կրթություն
- Առողջություն
- Անհատական ոճ, ինքնատիպություն

- Սոցիալական ակտիվություն
- Գործնական ճկունություն
- Ընկերասիրություն
- Հանդուրժողականություն
- Ինքնուրույնություն
- Անկախություն
- Զսպվածություն
- Լավատեսություն